

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 49 (1549) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 07, 2012
VOLUME 31, NO. 49 (1549) SATURDAY, JANUARY 07, 2012



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՀԵՌԱՏԵՍ

ԽԻՉԱԽ

ՅԱՆՁՆԱՌՈՒ

2012



1887

Ամեակ

125

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ
ՀԵՉԱԿԵԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ԶԵՏ՝ ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱԲԵՐՆԵՐ

Իր ժամկետը արդեն իսկ իր լրումին հասցուցած Հինը, գինձ և անխորհուրդներուն օրինակով, աւանդաբար իր տեղը կը գիջի Նորին, տօնական օրերու առիճնող ուրախ պայմաններու ներքեւ: Ան անվերադառնալիք էն հրաժեշտ կուտայ աշխարհին եւ մարդկութեան, իր միամեայ իշխանութեան ժամանակահատուածին արձանագրած յաջողութիւններուն ու բացթողումներուն մասին ներկայացուցած անգիր հաշուեփակով մը, որ աղերսուած է մարդու անձնական, ընկերային, ազգային, մշակութային եւ տնտեսական մարտահրաւէրներուն հետ:

Ոչ եւս է «հինը» 2011 տարին որ, իր նախորդէն ժառանգած հոգներուն վրայ յայտնուեցան նորեր, որոնք սկսան ծանրօրէն հարուածել մարդկային անձնական թէ հաւաքական արդէն իսկ դժուարացած կեանքը, ապրուստի, ֆիզիքական ապահովութեան հոգերով եւ հասարակական ծրագիրներու գործադրման տեսակետով: Տնտեսական նկատմամբ հասաւ մինչեւ անգամ յառաջացած շատ մը երկիրներու դարպասները, որոնք ահագնազ հնչեցուցին իրենց սպառնացող ֆայֆայիչ սնանկութեան դէմ: Տնտեսապէս դէպի սնանկութիւն առաջնորդուող երկիրներու շարքը տակաւ կ'երկարի:

Ոչ եւս է «հինը», 2011 տարին, որ տնտեսական նկատմամբ այս ֆայֆայիչ կացութեան մէջ, թատերաբեմ դարձաւ ֆաղափական տարերային յեղաշրջումներու, փորձելով նամբայ հարթել դէպի ժողովրդավարական կարգերու հաստատման: Թափուած արեան ծանրակշիռ գնով տապալուեցան մեծատիրութիւններ, որոնք տասնամեակներ, միահեծան կերպով ղեկավարած էին իրենց երկիրը պատահականութեան գիրկը յանձնելով իրենց ժողովուրդն ու հասակ առողջ մոր սերունդները: Այս բոլորը տեղի ունեցան անակնկալ եւ շփոթեցուցիչ պայմաններու ներքեւ, առանց նախապատրաստական աշխատանքի եւ յստակ ծրագրի: Այդ յեղաշրջական արեւելումները հանգրուանած չեն տակաւին իրենց վերջնական ժողովրդավարական կարգավիճակը: Միջին Արեւելքը կը տուայտի անորոշութեան մէջ: Ժողովրդավարութեան անունով կատարուած իշխանափոխութիւնները կը կարօտին քիւրեղացման: Մինչ կը շարունակուի արիւնայեղումը:

Ոչ եւս է «հինը», 2011 տարին, որ տագնապալի տարի մը դարձաւ մեր գոյգ հայրենիներ Հայաստանի եւ Արցախի համար: Անոնք կը շարունակեն մնալ թուրքու ազերի շրջապատման տակ, ինչ որ կ'արգելակէ անոնց արդիւնաբերական յառաջիստացումը, տնտեսական բարգաւաճումը: Թող որ անոնք կրթական, մշակութային եւ միջազգային յարաբերութիւններու ոլորտներէ ներս կ'արձանագրեն յարաբերական

յաջողութիւններ ուժգին կարիք ունին ժողովուրդ-իշխանութիւններ կարգին համերաշխութեան եւ սերտ գործակցութեան, կարենալ յաջողապէս դիմագրաւելու համար իրենց առջեւ ծառայած բազմաբնույթ տագնապները, ինչպիսիք են տնտեսական նկատմամբ, մեր ազգային պահանջատիրութեան պայքարի կարգակերպումը, ժողովրդավարական կարգավիճակն ու Սփիւռք-հայրենի կապերու սերտացումը:

Այո, լաւ տարի մը չեղաւ մեզմէ անհետ հեռացող 2011 տարին, որ իր ետին թողուց ծանրակշիռ խնդիրներ, նկատմամբ, մարդկային ու նիրաքան անգնահատելի կորուստներ, որոնց ժառանգորդը հանդիսացաւ տօնական մթնոլորտի մէջ խանդավառութեամբ դիմաւորուող Նորը, 2012 Տարին:

Նոր յոյսերով լեցուած՝ կ'ողջունենք «Նորը», 2012 տարին, որ անհատական գետնի վրայ կը վերաշխուժացնէ մեզ: Կը վերալիցաւորէ մեզ: Նոր կորով կը բերէ մեզի: Կը Ներշնչէ լաւատեսութիւն՝ այն ակնկալութեամբ, որ խաղաղ, բարգաւաճ եւ երջանկաբեր տարի մը պիտի բոլորենք անձնապէս, ազգովին, աշխարհով մէկ:

Նոր յոյսերով լեցուած կ'ողջունենք «Նորը», 2012 տարին, մաղթելով, որ անհրաւուր ժողովուրդներ արդարութիւն գտնեն, ապրին ժողովրդավար կարգերու ներքեւ, եւ կարենան իրագործել իրենց ազգային ձգտումները: Թող աշխարհիս տիրէ խաղաղութիւն եւ մարդիկ ապրին երջանիկ:

Նոր յոյսերով լեցուած՝ կ'ողջունենք Նորը, 2012 տարին, այն ջերմ, հաստատ ու առանձնայատուկ ակնկալութեամբ, որ մեր հրաշափառ հայրենիներ՝ Հայաստան ու Արցախ աշխարհ, ապրին ապահով բարօր եւ արդիւնաշատ կեանք: Նուիրագործուի մեր ժողովուրդի միասնութիւնն ու համագործակցութիւնը ազգային բոլոր ոլորտներէ ներս: Մի անգամ ընդմիջտ փակուի այն վիճակը, որ իրարմէ կը բաժնէ հայրենի իշխանութիւնն ու ժողովուրդը, հայրենի աօրեան հաստատելով արդար, ապահով եւ ժողովրդավար կ'առուցողական առանցքներու վրայ: Անէւացուի սահմաններու շրջապատումը: Կասեցուի արտագաղթը: Առաջին առնուի գործազրկութեան:

Այս ոգիով եւ ակնկալութիւններով՝ կը շնորհաւորենք Նոր Տարին եւ Ա. Ծնունդը՝ առանձնապէս մեր գաղափարաւորներ ընտանիքի բոլոր անդամ-անդամուհիներուն, «Մասիս» շաբաթաթերթի երախտաշատ գրող աշխատակիցներուն, անոր անձնակազմին, ազգային, հայրենական մշակութային, ֆաղափական, յարաւանական նուիրական կառոյցներուն, մաղթելով անոնց բոլորին, ամենայն բարիք:

ՇՆՈՐՀԱԲՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան

Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը

կը շնորհաւորէ իր բոլոր ընկեր-ընկերուհիներուն, հայ ժողովուրդի եւ իր գոյգ հանրապետութիւններուն՝ Հայաստանի եւ Արցախի Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը

Այս բարեբաստիկ առիթով ան բոլորին կը մաղթէ, որ 2012 տարին ըլլայ ֆաջառողջութեան, արեւշատութեան եւ յաջողութեան տարի:

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն

ուրախ առիթով՝ «Մասիս» Շաբաթաթերթի

վարչութիւնն ու խմբագրական կազմը

ջերմօրէն կը շնորհաւորեն ողջ հայութիւնը,

որ ի Մայր Հայաստան եւ ի չորս բոլորն աշխարհի:

Մասնաւոր շնորհաւորութիւններ «Մասիս»ի

ընթերցողներուն, մեր թերթին մէջ ծանուցող

հաստատութեանց, հովանաւորներուն եւ

աշխատակիցներուն, մաղթելով առողջութիւն, յաջողութիւն եւ հայութեան արդար ցանկութեանց իրականացում:



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԾԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԳՎԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ Դեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863

E-Mail: massis2@earthlink.net

http://www.massisweekly.com

MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA

1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863

(USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)

Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).

All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՍԴՅԿ-Ի ԽՕՍՔ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻ

Պատմության կ'անցնի 2011 տարին ու երկրագունդը ու անոր բնակիչները նոր տարին կը դիմաւորեն նոր յոյսերով ու ակնկալիքներով, մաղթելով որ տարին իր հետ բերէ աւելի նպաստաւոր պայմաններ ու երկիրներ եւ ժողովուրդներ կարողանան իրար միջեւ ապահովել առաւել խաղաղ գոյակցութիւն մը, յօգուտ մարդկութեան ու անոր ապագային:

2011 տարին յատկանշուեցաւ արարական աշխարհէն ծայր առած բողոքի ալիքով, որ եկաւ տապալելու երկարամեայ իշխանաւորներ, որոնք ցարդ կը նկատուէին անփոխարինելի: Բողոքի շարժումները սակայն, նամբայ հարթեցին կրօնական շարժումներու յառաջխաղացքին, որ կը մտահոգէ ժողովրդավարութեան ու մարդկային ազատութիւններու համար պայքարող երիտասարդութիւնը:

Բողոքի շարժումը հասաւ նաեւ արեւմտեան երկիրներ, ուր տնտեսական շարունակուող նգնաժամը սկսած է խորացնել դասակարգերու միջեւ գոյութիւն ունեցող անհաւասարութիւնը: Այս բոլորի պատասխանատուն նկատուող՝ միջազգային ֆինանսական հաստատութիւններուն ու դրամատուներուն դէմ է որ ուղղուած են բողոքի այս շարժումները:

Տնտեսական իրարայջորդ տագնապները սնանկութեան եզրին հասցուցին նաեւ եւրոպական շատ մը երկիրներ, նոյնիսկ վտանգելով եւրոպական Միութեան գոյութիւնը:

Անցնող տարուայ ընթացքին հայ ժողովուրդը նշեց Հայաստանի երրորդ հանրապետութեան անկախութեան 20-ամեակը: Հպարտաոտիք այդ տօնը սակայն, չկարողացաւ վերածուիլ համազգային ցնծութեան: Հայրենիքէն ներս տիրող ընկերային, տնտեսական ու քաղաքական ոչ այնքան բարեկարգ պայմանները յուսալուծութեան մատնած են մեր ժողովուրդի գաւակները, որոնք, անկախութենէն բնակ տարի ետ, կ'ուզէին տեսնել առաւել կայացած երկիր մը: Անգործութիւնը, տնտեսական անհաւասար պայմանները, ժողովրդավարութեան ու արդարադատութեան բացակայութիւնը կը մղեն շատերուն՝ իրենց ապագան փնտռելու այլ երկրներում: Արտագաղթը հասած է աղետալի աստիճանի, իսկ Հայաստանի իշխանութիւնները բաւարար միջոցներ չեն գործադրէր՝ կասեցնելու արտահոսքի աղետաբեր երեւոյթը:

Արցախը շարունակեց մնալ Հայութեան ուշադրութեան կեդրոնը, արժանանալով մեր ժողովուրդի բոլոր հատուածներու հոգատարութեան: Միջազգային միջնորդները, չկարողացան հասնիլ ցանկալի խաղաղութեան, Ատրպէյճանի վարած ռազմատենչ քաղաքականութեան պատճառաւ: Իսկ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան զլացուեցաւ իր արժանի տեղը բանակցութիւններու սեղանին շուրջ:

2012 տարուայ ընթացքին Հայաստանի ժողովուրդը անգամ մը եւս առիթ պիտի ունենայ ներկայանալու Բնաշուքի՝ ընտրելու համար իր Ազգային ժողովի նոր պատգամաւորները: Իշխանութիւններու ուսին կ'իյնայ վերականգնելու ժողովուրդի հաւատքը իր երկրի նկատմամբ, կազմակերպելով իսկապէս ազատ, արդար ու թափանցիկ ընտրութիւն-



ներ ու առիթ տալով, որ ծնունդ առնէ ժողովուրդի բոլոր խաւերը ներկայացնող խորհրդարան մը: Այլապէս, ակնառես կրնանք դառնալ նոր ցնցումներու, նոր յուսախաբութիւններու ու երկրէն արտագաղթի նոր ալիքի մը:

Հայ-թրքական Արձանագրութիւններու երկուստեք ստեղծումէն ետք, տարին փակուեցաւ Ֆրանսայի Խորհրդարանէն ներս Հայկական Ցեղասպանութեան Ժխտումը Բրէտանացի օրինագիծի վաւերացումով: Գնահատելով հանդերձ Ֆրանսայի նախագահի եւ Ազգային ժողովի այս քայլը, կը յուսանք որ, օրինագիծը շուտափոյթ կ'երպով կ'ընդունուի նաեւ Ֆրանսայի Ծերակոյտին կողմէ, նախապահ հարթելով անոր օրէնքի ոյժ ստանալուն: Մինչ այդ վաւերացումը, Հայաստանի դեկլարներն ու հայ ժողովուրդը, նկատի առնելով անցեալի օրինակները, հեռու պէտք է մնան չափազանցուած ոգեւորութիւն ցուցաբերելէ:

2012 տարին կը հանդիսանայ նաեւ, 1887 թուականին հայ ժողովուրդի ծոցէն ծնունդ առած առաջին ազգային, քաղաքական ու յեղափոխական կուսակցութեան՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 125-ամեակի տարին: Իր ամբողջ պատմութեան ընթացքին, Մայր Կուսակցութիւնը ծառայեց իր ժողովուրդին ու անոր ազգային ազատագրական պայքարի նամբը գոհաբերեց հազարաւոր նուիրեալներ:

Ան հաւատարիմ մնաց իր գաղափարախօսութեան ու դաւանած սկզբունքներուն եւ այսօր եւս ան կը շարունակէ կանգնած մնալ իր Հայրենիքի կողքին՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ սփիւռքի տարածքին:

Յոբելինական այս տարին կոչուած է դառնալու առիթ, նոր սլացք տալու Կուսակցութեան կառոյցներուն եւ անոր հովանաւորութեան տակ գործող կազմակերպութիւններուն ու հաստատութիւններուն, որպէսզի անոնք, նոր թափ առնելով, շարունակեն իրենց ազգանուէր առաքելութիւնը:

Ամանորի սեմին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կու գայ վերահաստատելու իր հաւատքը առ այն, որ միայն Հայաստանի եւ սփիւռքի միջեւ անփակ տեղի կապի ու ներդաշնակ համագործակցութեան միջոցաւ կարելի պիտի ըլլայ յաղթահարել մեր ազգի առջեւ ծառայած ռազմաթիւ մարտահրաւերներն ու դժուարութիւնները: Բոլորս միասին կոչուած ենք ընել մեր լաւագոյնը, որպէսզի Հայաստանը իրապէս դառնայ ազատութեան, արդարութեան, հաւասարութեան ու ժողովրդավարութեան երկիր: Այս է միակ նախապահը՝ ժողովուրդը իր հողին կառչած պահելու ու հայրենիքի բարգաւաճման համար:

Կը յուսանք, որ նոր տարին դառնայ աշխարհի համար խաղաղութեան տարի մը ու մեր հայրենիքը գտնէ իր արժանի տեղը՝ յառաջադէմ երկիրներու շարքին, իր շուրջ համախմբելով աշխարհասփիւռ հայութիւնը:

Այս առիթի Հայ ժողովուրդին կը մաղթենք յաջողութիւններով ու յաղթանակներով լեցուն տարի մը:

Ս.Գ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Դեկտեմբեր 30, 2011

Նոր Տարուայ եւ Սուրբ Ծնունդի տօներուն առթիւ, կը փոխանցենք մեր լաւագոյն մաղթանքները 2012 թուականը թող իր հետ բերէ անձնական կեանքին մէջ յաջողութիւն եւ քաջառողջութիւն, հայութեան համար դառնայ նուաճումներով ու յաղթանակներով լի տարի մը

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ

ՆԱՅԱՆՁԻ ԶԱՅՐԵՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ

Հաւատացէ՛ք, ամբողջ հոգիով կ'ուզենք լաւատես ըլլալ, դրակահն: Կը ցանկանք հայրենի երկրի դաշտերէն, արտերէն ու պարտէզներէն միայն յուռթի եւ ծաղկուն փունջեր ու թոյրեր քաղել, անոնցմով յորդեցնել այս սիւնակները: Նոյնիսկ ամենէն համեստ, դեռաբոյս առաջին ծիլերը կ'ուզենք ողջունել սրտանց, խանդաղատանքով գուրգուրալ անոնց ու երգել լիաթոք՝ «Լոյսի՛ հայրենիք, յոյսի՛ հայրենիք»:

Կ'ուզենք, կ'երազենք, կը սպասենք:

Բայց չենք ուզեր մեր գլուխը անբանօրէն խրել աւագին մէջ եւ անգոյ բարիքներու ինքնախաբէտութեամբ օրօրել մենք մեզ ու մեր ընթերցողը:

Հակառակ ասոր, սակայն, պիտի փորձենք սկսիլ դրականով:

Ուրեմն, Հայաստանի հասարակութեան այսպէս կոչուած «ընտրանի» հատուածը 2011ին բեղուն տարեշրջան մը բոլորեց: Ա՛յնքան յաջող, որ այդ հատուածի կազմած իշխանութիւնը կը ծրագրէ - ինչ կը վերաբերի 2012ի խորհրդարանական եւ 2013ի նախագահական ընտրութիւններուն - որեւէ նախընտրական կամ ընտրական ծախսի կամ միջոցներու առջեւ չընկրկիլ՝ ապահովելու համար իրենց իւրոտ պիզնէսի նորանոր յաջողութիւնները յառաջիկայ հնգամեակին: Տարին դեռ նո՛ր բոլորուած ըլլալուն, տարեկան անոնց տնտեսական շահոյթի վերաբերեալ ճշգրիտ տուեալներ չկան տակաւին: Արդէն ալ, անոնք եկամուտի գումարներու այդպիսի ճշգրիտ թիւեր հրապարակելու որեւէ քաղաքական կամ բարոյական պարտաւորութիւն չեն զգար - եւ ատիկա լրիւ հասկնալի ըլլալու է:

Ի վերջոյ, որպէս իրենց ժողովուրդի համեստ ծառաները, անոնք Աստուածաշունչի ցուցմունքներով գիտեն թէ մշակը իր վարձքին արժանի է: Հետեւաբար, ատանց կեղծ համեստութեան, անոնք իրենք կ'որոշեն ինքնավարձատրութեան սակը՝ յանուն իրենց ծառայած ժողովուրդին: Եթէ Հայաստանի Սահմանադրութենէն զերիվեր դասուած այս յատուկ տրամադրութիւնները լրիւ հասկնալու դժուարութիւններ ըլլան ոմանց միտքին մէջ, կը թելադրենք դիմել Հանրապետութեան նախագահի աթոռին

նստած Սերժ Սարգսեանին կամ իր որեւէ մէկ տեղակալին: (Ի դէպ, կարելի է նաեւ մասնագիտական խորհուրդն առնել Ռոպերթ Քոչարեանին՝ այս բնագաւառին մէջ որպէս շատ փորձառու եւ ճարպիկ համաժողովրդական շորթիչ:) Սակայն եկէ՛ք առայժմ բաւարարուինք Հայոց պատմութեան մէջ արձանագրելով այն փայլուն յաջողութիւնը զոր Հայաստանի ազատ ու անկախ հարստապետական «ընտրանին» իրագործեց 2011ին՝ տալով անոր մօտաւոր նախահաշիւը - մաքուր, գուտ շահ՝ մօտաւորապէս 2 միլիարտ տոլար, որուն հաւանա-

թերութիւն, ինքնասպանութիւն («մաքուր» լուծում), մարմնի եւ հոգիի նուաստացմամբ կատարուած աշխատանք, եւ այլն - այս հարցման ճշմարիտ միակ պատասխանը նոյնինքն ժողովուրդին մօտն է, որուն եւ պէտք է ուղղուի հարցումը: Ու ես կը հաւատամ թէ ժողովուրդը, ինչպէս բազմաթիւ յետամնաց ա՛յլ երկիրներու մէջ պատահեցաւ 2011ին, քիչ մը ուշ կամ կանուխ անպայման տալու է իր պատասխանը:


Վիպային անգոյ իրագործումներու կամ յաջողութիւններու մասին շաղակրատելը անօգուտ պա-

փելի ձեռքբերումն եղաւ քաղբանտարկեալներու ազատ արձակումը: Միջազգային դիւանագիտական ճնշումն ու ներքին ընդդիմադիր ուժերու պահանջատիրական հետեւողական կեցուածքը ատեն մը ետք իրենց բարերար ազդեցութիւնը գործեցին: Նիւթական ծայրաստիճան նեղ վիճակի մատնուած հասարակութեան մասնակցութեամբ, քաղաքացիական լայնաձակատ գործողութիւններու շղթայագերծումը եւ աւագակապետութեան կազմաքանդումի պահանջը նեղ կացութեան մատնեցին անբեկուած իշխանութիւնները: Ներիշխանական երբեմնի միաձոյլ ն անգիջող ճամբարին մէջ երեւան եկան նախ վարագուրուած, ապա բացառապէս խոր ճեղքեր՝ իշխանութեան համակից շարք մը գործընկերներու միջեւ: Յաջորդ հանգրուանը կը յատկանշուի պաշտօնագրկումներով ու պարտադրուած հրաժարականներով: Ատոնք իշխանական համակցութենէն (coalition) ներս եռեւեփող նորագոյն հակասութիւններու կանխանշաններն էին օլիկարխներու եւ քրէականացած ոճրաբոյր շրջանակներու անդամներուն միջեւ:

Խնդիրը հասաւ տեղ մը ուր Գոնկրէսը փութկոտութեամբ պատրաստեց ու հրապարակեց Սերժ Սարգսեանի մօտալուտ պաշտօնականութեան իրաւաքաղաքական հիմքերը: Հակառակ ասոր, սակայն, ընդդիմութիւնը երկար ատեն թոյլ ձգեց պարանը Սերժ Սարգսեանի ձեռքերուն մէջ՝ ենթադրաբար այն վախով որ Ռոպերթ Քոչարեան - որպէս Երեւանի «միակ տղամարդը» - առիթը յարմար նկատելով, փորձէր ինք իջնել խաղաղաշտ՝ եթէ Սարգսեան տկարութեան նուազագոյն նշոյլը ցոյց տար:

Սակայն Սերժ Սարգսեան, գէթ երեւութապէս ամենայն պաղարիւն հաշուարկումով, կրցաւ միաժամանակ չէզոքացնել եւ՛ Գոնկրէսը, եւ՛ Քոչարեանը: Նոյն հարուածով ան ատամնազերծեց Տէր Պետրոսեանի քաղաքական պատգամը եւ «պատրուակագրկեց» Քոչարեանը: Մօտ 15 «կտոր» խորհրդարանական աթոռներու խաբուսիկ խայծով, ի սկզբանէ վիժած Գոնկրէս-իշխանութիւն երկխօսութեան ցնորքը կարեւոր չա-

Շաբ.ը էջ 5



բար մօտաւորապէս կէսը՝ կնքահօր (քրէական աշխարհի մէջ անգլերէն godfather-ի փոխաբերական ընդունուած իմաստով), իսկ միւս կէսը իր քառասուն օլիկարխ ձագուկներուն՝ բաշխուած ըստ իւրաքանչիւրի «արժանիքներուն» եւ կնքահօր մատուցած ծառայութեան:

Թերեւս հարց տրուի՝ ուրեմն այս ամէնքէն ետք ի՞նչ մնաց այսպէս կոչուած լուռ մեծամասնութեան, այլ խօսքով՝ պարզ ժողովուրդին: Ծատ ցաւատանջ որոշ կարելի պատասխաններու շուրջ տնտնալով հանդերձ - արտագաղթ, արտագաղթած հարազատներէ ստացուած յատկացումներ, սփիւռքահայութեան կողմէ առաքուած նպաստներ, կաշառակերութիւն իր բոլոր տարատեսակներով, քուէնեւրու եւ խիղճերու առուծախ, կանկա-

րապմունք է, նոյնիսկ ուշադրութիւնը շեղող վնասակար ունակութիւն: Այս մեկնակէտէն դիտելով, Հայաստան աշխարհի տարածքին 2011ի ընթացքին պարզուած հրատապ երեւոյթները կարելի է ուրուագծել հետեւեալ ձեւակերպումներով.-

-1-

Արտախորհրդարանական ընդդիմութիւնը - եւ իր միջոցով քաղաքական լուրջ կազմաւորումը թեւակոխած քաղաքացիական հասարակութիւնը - 2008ի Մարտէն ի վեր իր կայացման երկարժամկետ յարաճուն ամբապնդումի ընթացքին մէջ էր: Ան՝ կը խոստանար երկիրը դուրս բերել բռնատիրական անարգ լուծէն, եւ ապահովել ճշմարիտ ժողովրդավարութեան վերահաստատումը: Առաջին շօշա-

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԷՄԵԱՆ



ՆԱՐԱՆՁԻ ԶԱՅՐԵՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Շարունակում է 4-էն

փով մը պատճառ դարձաւ ընդդիմադիր ամբողջ դաշտի համարեա քայքայման, նահանջին: Փոխադարձ մեղադրանքներու փոխադարձաբար վարկաբեկիչ նվնվոցներով Հայ Ազգային Գոնկրէսէն հեռացան իր կարգ մը ամենէն հաւատարիմ, այժմ հիասթափուած տարրերը: Հեռացան նաեւ կարգ մը կուսակցութիւններ եւ անձնաւորութիւններ՝ առանձինը պաշտօնէրէ լու կամ ընդդիմադիր «երրորդ» կամ «տասներորդ» ճակատ կազմելու պատրանքներով - ի յառաջագունէ ապարդիւն մնալու դատապարտուած «բարի» նպատակներով: Տիրու էր - տիրու ենք - տեսնել «ազատագրուած» Ազատութեան հրապարակին վրայ ՀԱԿ-ի վերջին հաւաքներուն մասնակցողներու թիւը՝ որ այլեւս կարելի էր հաշուել լոկ հազարներով՝ նախկին բազմաստանեակ հազարներու փոխարէն: Փաստական նահանջի այս հանգրուանին, իշխանութիւնները վերական ընդդիմադիրներու գէթ խորհրդանշական բնոյթի կայանքներուն, միայն այն չափով որ անհրաժեշտ էր՝ նսեմացնելու եւ վարկաբեկուած պահելու համար ընդդիմադրութիւնը - աւելիին պէտք չունէին: Իրենց համար, պիզնէսը իր սովորական հունը վերագտած էր:

-2-

Հայաստանի մէջ յառաջիկայ խորհրդարանական ու նախագահական ազատ, արդար ընտրութիւններու առասպելը օգին մէջ նետուած հրավառութիւն մըն է որ կը նպատակադրէ բազմիցս խաբուած ու միշտ քաղցած թշուառ ժողովուրդը - «որերորդ» անգամն ըլլալով, ինչպէս սովոր են ըսել - ինչո՞ւն է, ա՛յս անգամ եւս օրօրել, քննարկել ու խաբել հին, շա՛տ հին եղանակով՝ սարսափ + քանի մը տոլար: Անշուշտ անկարելի էր՝ ընդդիմութեան թոյլ տալ որ չեղափոխական նորարարութիւններ եւս պահանջէ: Այս առնչութեամբ կարելի էր առաջարկի ձեւով նորատեսակ գուարճալիք մըն ալ նետել մէջտեղ - վերացնել՝ մասամբ կիրարկուող մեծամասնական ընտրակարգը, եւ գայն ամբողջութեամբ փոխարինել՝ համամասնական ընտրակարգով: Ընդդիմութեան անունով հանդէս եկած որոշ կուսակցութիւններ յայտարարած են թէ այս կերպով պիտի ապահովուի

մանտաթներու (յանձնարարագրերու) համարժէքութիւնը եւ մրցակցային պայմաններու հաւասարութիւնը, թէ առով պիտի աւելնայ խորհրդարանական ընտրութեան եւ ընտրուածներու համար քաղաքական ուժերու պատասխանատուութիւնը, եւ թէ պիտի նուազի ոչ-քաղաքական ու ոչ-ընտրական գործօններու ազդեցութիւնը ընտրական գործընթացներու վրայ: Լայն հասարակութեան համար չինարէնի շատ մօտիկ հնչող այս ձեւակերպումները անկասկած դրական կորիզ մը ունին - սկզբունքօրէն: Անոնք կրնան որոշ չափով օգնել - դարձեալ սկզբունքօրէն - որ խորհր-

պահանջը կարելի ըլլայ ընդդիմութեան պայքարի դրօշը դարձնել: Ատիկա նոյնիսկ կարող է շեղել կամ տկարացնել հիմնական պահանջի ուղղութիւնը, ուժգնութիւնը: Ընդդիմութեան գերագոյն դրօշը կարելի է հանդիսանալ անօրինութիւններու, գեղծարարութիւններու, կամայականութիւններու եւ բռնութիւններու վերացումը իշխանութեան կողմէ - իսկ եթէ չամառի իր յանցագործութիւններուն ու ոճիրներուն մէջ, կը մնայ պահանջել ու պարտադրել՝ նոյնինքն իշխանութեան վերացումը: Իրողութիւնն այն է որ, ներկայ դրութեամբ, արդար ընտրութիւններ հանդուրժելու նշոյն



դարանէն դո՛ւրս պահուին գործարար պատգամաւորները կամ անոնց ընտանեկան անդամները, ազգականներն ու ինքնախնայները: Ինքնին հասկնալի է որ այս վերջինները քաղաքական կեանքով շահագրգռուած են միայն այն չափով որ ատիկա կրնայ հեշտացնել իրենց գործարարական շահերը կամ նոյնիսկ յափշտակումները: Ամենայն դէպս, մեր նպատակը որեւէ կերպով քննադատել կամ նսեմացնել չէ այս առաջարկի յարգելի հեղինակներն ու անոնց ետին կանգնած կազմակերպութիւնները: Անոնք կը ջանան դրական բարեփոխութիւններ ներմուծել ընտրական օրէնքին մէջ: Խնդիրը պարզապէս կառքը ձիերուն արջեւ կամ ետեւ տեղադրելու մասին է: Իր որոշակի կարեւորութեամբ հանդերձ, չենք կարծեր թէ այս փոփոխութեան

իսկ անգոյ է սերժ-սարգիսեանական հորիզոնին վրայ: Այստեղ որոշիչ գործօնը ընդդիմութեան միասնութիւնն ու հզօրութիւնն է: Աւագակապետական իշխանութիւնը խորհրդարանի համամասնական ընտրակարգի անցնելու ոչ մէկ դիտաւորութիւն կամ դրդապատճառ ունի՝ եթէ չկայ այդ պահանջի ետին կանգնած միացեալ հզօր ընդդիմութիւն:

-3-

Աղետալի չափերով վատթարացած է Հայաստանի հանրապետութեան եւ իր ժողովուրդի ներկայ վիճակը: Հայրենիքն ու հայկական Սփիւռքը որքան կանուխ համոզուին թէ անդառնալիօրէն ձախողած եւ ամբողջ հայ ժողովուրդին անբաւելիօրէն դաւաճանած է ներկայ հակաժողովրդային, հակաժողովրդավարական բռնատիրութիւնը, այն-

քան կանուխ կը սկսինք հեռանալ հայրենի պետութեան գոյութեան սպառնացող անդունդի եզրէն: Ներկայ իշխանութիւնը իրաւական ոչ մէկ հիմք ունի, որեւէ չափով չի ծառայեր այն ժողովուրդին որը ընտրեալ ներկայացուցիչներու մարմին մը ըլլալ կը յաւակնի: Այս իշխանութեան պետական միակ ծրագիրն է իր սեփական ժողովուրդի սիտեմաթիկ թալանը՝ ստրկօրէն իրեն ծառայող պաշտօնեաններու, ուժային կառուցներու եւ անոնցմով կիրարկուող բիրտ ուժի միջոցով: Վատուած շուրջ, արտառոց մսխումները որեւէ կապ չունին երկրի ժողովուրդի կենսական պահանջներուն հետ, այլ առհասարակ կը մնան օլիգարխներու եւ անոնց մանկաւիկներու հաճոյակատարութեան ու վայելքի ծիրին մէջ:

Քաղաքական միացեալ ուժեր համախմբող, ճշմարտօրէն ընդդիմադիր դաշտի մասին դժուար է խօսիլ ներկայիս: Եղածը խարխուլեցաւ եւ ամբողջութեամբ քանդուելու վտանգին ենթակա է՝ իշխանութեան նենգ ու ճարպիկ խաղերուն հետեւանքով, որուն մեծապէս օգնեցին խորհրդարանական ընդդիմութեան ցուցաբերած հեշտամոլութիւնը եւ արտախորհրդարանական ընդդիմութեան փորձարկած քաղաքական շուտիկութիւնը: Երեւոյթները այնպէս ցոյց կու տան թէ վերջերս ձեւաւորուելու վրայ եղող վաւերական գլխաւոր շարժումը կը հանդիսանայ ժողովրդային-քաղաքացիական նորայայտ ընդդիմութիւնը՝ ժողովրդավարական բոլոր այլ շարժումներու եւ հոսանքներու մասնակցութեամբ:

Սակայն զգո՛յ՛ջ: Սորվելիք կարեւոր դաս մը կայ հոս՝ արաբական «գարնա» արիւնտտ, դառն փորձերէն: Եթէ գուրկ են կազմակերպչական ուրոյն ողնաշարէ, ժողովրդական ինքնաբուխ պոռթկումները դժբախտաբար վերջին հաշուով դատապարտուած են շահագործուելու՝ ոչ-ժողովրդական ու ոչ-ժողովրդավարական կազմակերպեալ ուժերու կողմէ: Դեռ եւս սաղմնային վիճակի մէջ գտնուող Հայաստանի ժողովրդային ինքնաբուխ ընդդիմադրութիւնը պարտի կազմակերպչական արդիական միջոցներով տէր կանգնիլ իր իրաւունքներուն - մանաւանդ՝ առաջնորդել՝ ընդդիմադիր միւս կազմակերպութիւններն ու աւանդական առաջնորդները:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

2011 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻՆ

2011 քաղաքական տարին մեկնարկեց ու աւարտեցաւ ներքաղաքական խաղերով եւ բարձրաստիճան պաշտօնեաներու հրաժարականներու շքերթով, ինչ որ տարին բնորոշեց որպէս նախընտրական դիրքորոշումներու ճշգրտման, ամրապնդման ու պայքարի մեկնարկի տարի: Տարին յատկանշուեցաւ նաեւ աննախագէտ երկխօսութեամբ, որ ծաւալուեցաւ իշխանութեան եւ հիմնական ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի (ՀԱԿ) միջեւ, որ ամռան ընթացքին մի քանի շաբաթ շարունակուելէ յետոյ դադարեցաւ: Կողմերը փոխադարձ մեղադրանքներ հնչեցուցին իրար հասցէին՝

նի թեկնածութեան: Քաղաքական գարունը բացուեցաւ «Ժառանգութեան» հիմնադիր Բաֆֆի Յովհաննիսեանի հացադուլով՝ Ազատութեան հրապարակի վրայ, որ տակաւին փակ էր հիմնական ընդդիմութեան համար: Յովհաննիսեան այս առթիւ յայտարարեց, որ այս քայլին դիմելով կ'ակնկալէ, որ արտակարգ իրավիճակի մէջ գործող ոչ լեգիտիմ իշխանութիւնը վայր կ'իջնէ եւ արտահերթ խորհրդարանական ու նախագահական ընտրութիւններ տեղի կ'ունենան: «Մոմ ազատութեան» 15-օրեայ հացադուլը, Չուրի երես

խորհրդարանի լիազօրութիւններու աւարտը: Աբրահամեանին փոխարինեց ՀՀԿ մէկ այլ ներկայացուցիչ՝ փոխիւստակ Սամուէլ Նիկոյեան: Սակայն հրաժարականները այսքանով չաւարտեցան, իր դիմումի համաձայն պաշտօնէն հրաժարեցաւ ՀՀ նախագահի փեսայ Միքայէլ Մինասեանը՝ յայտարարելով, թէ կը պատրաստուի օգնել Յովիկ Աբրահամեանին, ՀՀԿ-ի նախընտրական շտաբը ղեկավարելու գործով:

Հրաժարական տուած բարձրաստիճան պաշտօնեաներու շարքին էին նաեւ 11 ամիս պաշտօնավարած Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանը եւ ոստիկանապետ Ալիկ Սարգսեանը:

Մինչ իշխանական վերնախաւէն ներս վերադասաւորումները կը շարունակուէին, Հանրապետական «Բարգաւաճ» առձակատման նոր բռնկումներ սկսան, երբ ՀՀ վարչապետ հանրապետական Տիգրան Սարգսեանի «կոտրած տաշտակի» վերլուծութիւն-առաջարկ ըրաւ ՀԿ-ին:

Աշնան վերջը, ԲՀԿ-ականներու համար դժուարին ժամանակաշրջան էր, երբ սկսաւ «վճուկներու որսը». թմրանիւթերու հետ կապուած մեղադրանքներով ձերբակալուեցան կուսակցութեան մի քանի անդամներ եւ աշակիցներ, իսկ այնուհետեւ լրատուամիջոցները տեղեկութիւններ տարածե-


ցին, թէ հնարաւոր է, որ ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն ընտրութիւններուն մասնակցին կոալիցիոն համամասնական ցուցակով:

Այս տարի առանձնայատուկ կերպարով հանդէս եկաւ ՀՀ տեխնոկրատ վարչապետ Տիգրան Սարգսեան, որ դուրս գալով իր «դասախօսի» կերպարէն, յայտնուեցաւ մէկ այլ դերով՝ լիշէլով իր մեծ հօր խորհուրդը. «Կեանքում ընկերութիւն չանել էն մարդկանց հետ, որոնք չեն խմում»:

Խորհրդարանական փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւններէն Դաշնակցութիւնն ալ տարուայ վերջաւորութեան մոռացութեան տուաւ իր ընդդիմադիրի կեցուածքը եւ կառավարութեան հրաժարականի, քննադատութեան հետ մեկտեղ ընտրեց իշխող Հանրապետականի ԱԺ նախագահի թեկնածուին: Նման քուէարկութիւնն ցոյց տուաւ «Ժառանգութեան» եւ ՀՅԴ-ի միջեւ առկայ մրցակցութիւնը:

2011-ի ընթացքին չմոռցուեցաւ նաեւ Ռոբերտ Քոչարեան: Մինչ տարուայ սկզբնաւորութեան չէին դադարի Քոչարեանի՝ մեծ քաղաքականութիւն վերադառնալու մասին քննարկումները, Սեպտեմբերին Քոչարեան ինք պատասխան տուաւ բոլոր հարցերուն՝ յայտարարելով, որ «չի բացառում» իր վերադարձը:

ՔԱՂՈՒԱԾՔ՝ «ԱՐՄԻՆԻԱ ՆԱՌԻ» ԿԱՅՔԻԶԷՆ



երկխօսութիւնը տապալելու համար:

2011-ն առանձնայատուկ էր իշխանական քոալիսիայի գլխաւոր դերակատարներու՝ Հանրապետական (ՀՀԿ) ու «Բարգաւաճ Հայաստան» (ԲՀԿ) կուսակցութիւններու առձակատումներով, որ սկսաւ տարեկաններու որոշ չափով հանդարտեցաւ քոալիսիոն յուշագիրի ստորագրումէն ետք:

ՀՀԿ-ԲՀԿ համաձայնութիւնը ձեռք ձգուեցաւ շաբաթներ շարունակ հրապարակային բանավէճերէ եւ բամբասանքներէ ետք, որոնց ժամանակ ԲՀԿ-ն մերժած էր սատարել Սարգսեանին, առիթ տալով խօսակցութիւններու, որ Ռոբերտ Քոչարեանը՝ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ոչ պաշտօնական հիմնադիրը, պիտի պայքարի յաջորդ նախագահական ժամկէտի համար՝ որպէս ԲՀԿ-ի առաջադրած թեկնածու:

Փետրուարի 17-ին երեկոյեան Սերժ Սարգսեանի նախագահական նստավայրէն ներս, իշխող Հայաստանի հանրապետական կուսակցութեան, «Բարգաւաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւններու ղեկավարները ստորագրեցին նոր քոալիսիոն յայտարարութիւն՝ համաձայնելով, որ միասնական ճակատով հանդէս կուզան 2012 թուականի գարնան կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն եւ 2013 թուականի նախագահական ընտրութիւններուն՝ սատարելով Սերժ Սարգսեանի

հանց նաեւ ընդդիմադիր երկու թեւերու՝ Հայ Ազգային Գոնկրէսի ու «Ժառանգութեան» միջեւ տարաձայնութիւնները՝ հասնելով անզամ վերաւորանքներու:

ՀԱԿ-ի համար տարին հակասական էր. մէկ կողմէ յաղթանակներ՝ Ազատութեան հրապարակի վերանուաճում, համաներում, իշխանութեան հետ երկխօսութեան կարելիութեան ստեղծում, միւս կողմէ՝ ներքին բախումներ:

ՀԱԿ-ի իշխանութիւն երկխօսութեան առկախումէն յետոյ՝ Սեպտեմբերին, ընդդիմադիրները սկսան հանրահաւաքային պայքարի նոր շրջանը, որ Հոկտեմբերին նոր թափ ստացաւ՝ վերածուելով շուրջօրեայ պայքարի:

Տարին յատկանշուեցաւ նաեւ հրաժարականներու շարքով, որոնք, ի տարբերութիւն նախորդ տարուայ փոփոխութիւններուն, բնորոշուեցան որպէս նախընտրական պայմաններով:

Օրէնսդիր Մարմնի լիազօրութիւններու հնգամեայ ժամկէտը լրանալէն կէս տարի առաջ, հրաժարական ներկայացուց պետութեան երկրորդ դէմքը՝ Ազգային ժողովի խօսնակ Յովիկ Աբրահամեանը՝ յայտարարելով, թէ կը պատրաստուի գլխաւորել ՀՀԿ նախընտրական շտաբը, 2012-ի Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն: Աբրահամեան դարձաւ անկախ Հայաստանի հինգերորդ խօսնակը, որ չկարողացաւ պաշտօնավարել մինչ

massispost.com
daily news updates

ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՐ Ի՞ՆՉ Է ԲԵՐԵԼ ՄԵՋ ՀԱՄԱՐ

ՍՈՒՐԵՆ ԽՈՒՂԱՆԵԱՆ

2011 թ-ը իր աւարտն ազդարարելով, բոլորիս ուղղուած կոչ է անում, զգաստ եւ իրատեսական գնահատական տալ կատարուածի ու կատարածի մասին, իսկ գալիք տարուայ անելիքները էլ աւելի յստակեցնելու եւ նպատակասլաց դարձնելու համար նոր խնդիրներ է առաջադրում :

Անցնող տարին ինչպէս Հայրենիքի այնպէս էլ Սփիւռքի համար եղաւ վայրիվերումներով լի տարի: Սփիւռքի առջեւ դրուած այնպիսի խնդիրներ ինչպիսին էր Հայ դատը, եւ ընդհանրապէս Հայապահպանութիւնը, մանաւանդ արեւմտեան Ամերիկայի Համայնքում ծաւալուեցին զգայացունց դրսեւորումներով, այստեղ հարկ է նշել որ սփիւռքեան իրադարձութիւնների զգալի մասը արձագանքն ու հետեւանքն էին Հայրենիքում ծաւալուած իրադարձութիւնների միջին արեւելքի յատկապէս հայհոն Լիբանանի իրադարձութիւնների իսկ վերջինը որ խանդավարութիւն առաջացրեց Ֆրանսիայի օրէնսդիրների կողմից Յեղասպանութեան ժխտումը քրէականացնելու մասին օրէնքը վաւերացնելու հանգամանքն էր:

Դրական գործընթացների շարքում արձանագրուեց, տեղական իշխանութիւնների ցանցում՝ (Միացեալ Նահանգների պարագայում՝ Նահանգային եւ քաղաքային իշխանութիւններում) պատշաճ դիրքեր զբաղեցնելու ուղղութեամբ միահամուռ ջանքերով աշխատելու աւանդույթի խորացումը: Չնայած ներքին պայքարը Հայագրի թեքնածուների միջեւ եղել է անարդիւնաւէտ եւ հանգեցրել է ռեսուրսների անտեղի կորստի՝ սակայն համայնքային կեանքում

ձեւաւորուեց եւ ամրապնդուեց այն միտքը, որ ներքին պայքարի դիմադրական եւ միասնականութիւնը մէկը միւսին լրացնող գործօններ են: Անգամ իրենց Դոմինանդ համարող քաղաքական ուժերը յարմարուեցին այն մտքի հետ որ միայն զգացմունքային հողի վրայ յարատեւ իշխանութիւն չես հաստատի, հայրենասիրութիւնը եւ ազգային նպատակների հետապնդումը պէտք է իրական եւ ամուր հողի վրայ յենուած լինի:

Ինչ վերաբերուած է Հայաստանին՝ պէտք է շեշտել, որ եթէ Հայրենիքում ժողովրդավարութիւն չհաստատուի, արդարադատութիւն չի կարող լինի:

Եթէ արդարադատութիւն չեղաւ, երկրում ներդրումային գրաւչութիւնը չի լինի, հետեւաբար տնտեսական աճ եւ աղքատութեան աստիճանի նուազում չի կարող լինել: Փոխարէնը կը լինի կլանային համակարգին սպասարկող ունեւորների եւ օր-օրի աղքատացող չունեւոր խաւի միջեւ անդունդային ճեղքուածք, արտագաղթողների հոծ բազմութիւն, եւ Հայրենիքի գոյութեանը սպառնացող բազմաթիւ հետեւանքներ:

Համայնքային խնդիրների շարքում պէտք է արձանագրել, որ ինչպէս Հայաստանից այնպէս էլ միջին արեւելքից գաղթածների բազմութիւնը իրենց երկրների վիճակից դժգոհ տարրերից բացի իրենց մէջ պարունակում են ակտիւ, ստեղծագործ մի գանգուած, որոնք նոր կեանքին շատ թէ քիչ յարմարուելուց չետոյ, դառնում են մեծ էներգիա պարունակող ուժեր: Դժբախտաբար այս երկրի սպառողական ոլորտի բազմազանութիւնը, եւ անհատական ազատութիւն-

ների անսովոր լայն շրջանակը, յաճախ վերոյիշեալ էներգիան բացասական ոլորտներում ծախսելու առիթ է տալ: Հետեւաբար զգալի ռեսուրսների կորստեան պատճառ դառնում:

Այստեղ է որ Ազգային, քաղաքական, մարգամշակութային եւ բարեգործական բոլոր ուժերը պէտք է, իրենց օրակարգային առաջնահերթութիւնների շարքում գետեղեն, այս պոտենցիալ ուժերի ներգրաւումը համապատասխան ոլորտներում: Այստեղ է որ կենսական պահանջ է ներկայացնում (բոլորը մէկին, մէկը բոլորին) կարգախօսի իրագործումը: Որքան մեծ է գաղթած գանգուածի ներուժը, աւելին է այս երկրի հնարաւորութիւնները նրանց ներգրաւուելու ստեղծագործական եւ շինիչ ոլորտներում: Նշուած ուժերի գեներացիոն ողջ ընթացքում այն պէտք է շողախուռում լինի Հայրենիքի հանդէպ մեծ սիրով, անկախ կուսակցական կամ անձնական նախասիրութիւններից: Սա է որ սփիւռքի հզօրացումը կը հանգեցնի Հայրենիքի հզօրացմանը:

Իսկ Հայրենքում ցանկացած իշխանութիւն պէտք է պատրաստ լինի պետականաշինութեան ծանր բեռը տանելով հանդերձ ժողովրդային խորագանումներին, քանի որ (եթէ իշխանական աթոռը կոշտացնում է հողին, ժողովրդային կշտամբանքը փափկացնում է այն եւ խիղճը արթուն պահում): Սակայն խրատն ու յորդորը մի բան է, լսելն ու կատարելը մի այլ բան: Մի աշխարհ զեղեցիկ խօսքեր ու խոստումներ լսեցինք, հեռուստատեսային եթերները լցուեցին, երգով ու պարով, սպառողական հոգեբանութիւն քարոզող սերիալ-


ներով: Թւում է թէ լաւ է, աշխատասփիւռ հայութեան մէջ սէր է արթնանում Հայերէնի եւ Հայաստանի հանդէպ, աճում է այցելուների թիւը այդ թւում ինչպէս բարեգործ այնպէս էլ ներդնող այցելուներին: Էլ ի՞նչ ենք ուզում: Նոր ներդնումներ, նոր աշխատատեղեր եւ բարեկեցիկ կեանքը ապահովուած է:

Աւաղ արդիւնքում ստացում է մի այլ բան, սպառող այցելուն հայրենիքում եղած օրերը վայելում է եւ շատ ու քիչ, քաղցր յուշերով է տուն վերադառնում: Իսկ ներդնող այցելուների մեծ մասը հրաւիրուած եւ յուսախափուած են վերադառնում: Ինչու: Որովհետեւ օրէնքի փոխարէն իշխանութիւն են հաստատել մի խումբ մարդիկ, չկայ մրցակցային արդար միջոցառում, իսկ կլանային համակարգին անսովոր ոչ մի ներդնող իր հարստութիւնը ռիսկի չի ենթարկի (ինքնասպանութիւն յանուն Հայրենիքի) կարգախօսով: Նոր տարուայ չեմին լաւատեսական երանգներով աւարտին մօտենալու համար:

Ասենք, որ չնայած սպասուելիքները ամբողջութեամբ չարդարացան, բայց իրավիճակը յուսահատական չէ:

Գիտակցելով այն, որ ժողովրդավարութիւնը ամուր պետականաշինութեան անկիւնաքարն է՝ արձանագրուեց, որ քաղաքական դաշտում բռնատիրական միակ բեւեռի կողքին սկսեց ծլարձակել երկրորդ բեւեռը, այն էր ձեւաւորուող արմատական ընդիմութիւնը, սոցիալական եւ իրաւական վիճակից դժգոհ գանգուածի ճնշումների ներ-

Մար.ք էջ 38



EH National Bank-ի տնօրէնութիւնը կը շնորհաւորէ ձեր Սուրբ Ծնունդը եւ կը մաղթէ բարեբեր Նոր Տարի մը:

Ձեր դրամատեսչային կարիքներու համար, ֆեռաձայնեցէ՛ք՝


TALAL BEYDOUN
TEL: 310.362.2015 EMAIL: tbeydoun@EHNBank.com

ARA FERMANIAN
TEL: 310.362.2003 EMAIL: afermanian@EHNBank.com

AMIRA MATAR
TEL: 310.362.2002 EMAIL: amatar@EHNBank.com

EH National Bank
Your Community Bank™

9701 Wilshire Blvd., Suite 101, Beverly Hills, CA 90212 310-362-2000
EHNBank.com




ԵՐԵՔ ՍԵՐՈՒՆԴ, ԵՐԵՔ ՏԵՍԻԼՔ, ՄԵԿ ՃԱԿԱՏԱԳԻՐ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԽԹԵԱՆ

1910ին Մալաթիա ծնած հայրս՝ Գէորգ, որբացաւ 5 տարեկանին, երբ Եղեռնին զոհուեցան իր ծնողքը, քոյր եւ եղբայր: Տեսաւ Չարդ, որբանոց, պարտադիր տեղահանութիւն ծննդավայրէն, անցաւ համաշխարհային երկու պատերազմներու բովէն, ճաշակեց քաղաքացիական պատերազմներ եւ անհաշիւ տառապանք: Ունեցաւ նաեւ օրհնուած կեանք մը. 63 տարիներու ամուսնական խաղաղ ու բեղմնաւոր բոյն մը մօրս՝ Մարիին հետ, 6 զաւակներ, 7 թոռներ եւ 2 ծոռ:

Հօրս սերունդը յատկանշուեցաւ յանուն ազգի վերապրումին ու գոյատեւման մղած անձնագոհ պայքարով: Վերապրումի ու գոյատեւման պայքար՝ ծննդաբերելով բազում զաւակներ, ի պատասխան Եղեռնին զոհ դարձած իրենց ծնողաց, քոյրերուն եւ եղբայրներուն: Գոյատեւման պայքար՝ բազում զոհողութեանց գնով իրենց զաւակներուն ապահովելով ուսում՝ որմէ զրկուեցան իրենք: Գոյատեւման պայքար՝ օտար հողի վրայ վերականգնելով կորսնցուցած հայրենական օճախը: Գոյատեւման պայքար՝ իրենց զաւակներուն փոխանցելով կորսնցուցած ին վերատիրանալու հաւատքն ու երազը: Գոյատեւման պայքար՝ մեկնած այն ամուր համոզումէն, որ իրենց սերունդի զրկանքներու եւ տառապանքներու գնով, կը հիմնաւորեն ապագայ սերունդներուն եւ ազգին բարօրութիւնը:

Հօրս սերունդի այս հիանալի հաւատքն ու գիտակցութիւնը, որ իր դրական ներգործութիւնը ունեցաւ անհատական թէ ընտանեկան հարթակի վրայ, դժբախտաբար չի տարածուեցաւ համայնական կեանքի վրայ, որ ցաւալիօրէն յատկանշուեցաւ իրարամերժ ատելավառ կիրքերով ու եղբայրասպան կռիւներով: Պատճառը՝ իրենց հատուածական շահերը գերադասող այն կուսակցական գործիչներն էին, որոնք իրենց կորսնցուցած իշխանութեան մենաշնորհներուն վերատիրանալու մարմաջէն տարուած, պառակտեցին համայնք եւ եկեղեցի: Կրնա՞ք պատկերացնել

Յարիւր տարիներու ժամանակամիջոցի վրայ, մէկ ընտանիքի երեք սերունդներ ներկայացնող երեք անհատներու 175 տարիներու միացեալ փորձառութեանց արդիւնք է խոհերու այս յօդուածը. հօրս, իմ եւ զաւակիս:



Վերջին Հայրերու Օրուան նկարը միասին. Յունիս 2000

Թէ որքա՞ն աւելի բարելաւ պիտի ըլլար նոր արմատներ նետող տեղահանուած ժողովուրդի վիճակը, եթէ ունենար ազգի շահերը գերադասող գիտակից ղեկավարութիւն: Հօրս նմանները, որոնք նախամեծար համարեցին հրաժարիլ իրենց կուսակցութենէն, քան թէ ձեռք բարձրացնել ուրիշ հայ վրայ, շատ աւելի զօրեղ ազգային գիտակցութիւն դրսեւորեցին, քան թէ «ազգային գործիչ» յորջորջուած շատ մը ղեկավարներ:

Հօրս սերունդի տեսիլքը կրնամ ներկայացնել պատկերաւոր դրուագով մը: Երբ ինք ալ հաստատուեցաւ Լոս Անճելըս, անպայման ուզեց տանս բակին մէջ պտղատու ծառեր տնկել: Հակառակ յառաջացած տարիքին, ոգի ի բուն լծուեցաւ այդ աշխատանքին: Օրին մէկը, երբ մեր քրտնաթոր աշխատանքէն դադար վերցուցած կը հանգստանայինք, իրեն ըսի թէ անհամբեր եմ տեսնելու այն օրը, երբ ծառերը մեծցած ու պտղաբերած են, ու մենք անոնց շուքին տակ կը վայելենք մեր աշխատանքին արգասիքը: Կուսակցութիւն իմ միտքը, հայրս պատասխանեց թէ այդ ժամանակ ինք կրնայ հեռացած

ըլլալ այս աշխարհէն, բայց վատահեցուց ինձի ըսելով. «Իմ սիրտը այսօր իսկ ուրախ է, ա՛յդ օրուան տեսիլքով»: Հայրս մեկնեցաւ այս աշխարհէն 2000 թուին, բայց իր ծառերուն ամէնմէկ քաղցրահամ պտուղին հետ մենք ընտանեօք, հարազատներով ու բարեկամներով կը վայելենք իր տեսիլքին արգասիքը, մի՛շտ յիշելով իր թողած աւանդը:

Հօրս սերունդին վիճակուած էր Եղեռն եւ պապենական դարաւոր օճախէն բռնի տեղահանութիւն: Լիբանան կամ Միջին Արեւելեան երկիրներու մէջ, 1950ականներու շուրջ ծնած իմ սերունդը, թէեւ կը դատարարուէր վերադարձ աւետող հայրենասիրական խոսքերով, բայց մէկ կողմէ հակա-սովետական քարոզչութիւնը, իսկ միւս կողմէ՝ Ներգաղթի թողնելու չյուսադրող պատմութիւնները երբեք հոգեվիճակի կը մատնէին գիտակցական տարիք բոլորող մեր սերունդը: Պէջրութիւնն հետ որպէս սփռուեցաւ թեան մայրաքաղաքը, մեր մէջ կ'աճէր մեր «երկրորդ հայրենիք»-ին մէջ աւելիով արմատաւորուելու համոզումը: Սակայն 1975ին պայթած Լիբանանի քաղաքացիական պատերազմը կու

գար խառնելու ամէն հաշիւ ու համոզում, իմ սերունդի մեծամասնութեան պարտադրելով կա՛մ ժամանակաւոր «պանդխտութիւն» դէպի Արաբական Մոց եւ կա՛մ կամաւոր տեղահանութիւն դէպի Արեւմուտք: Նախընտրելով առաջին տարբերակը, 1977ին կ'որոշէի «պանդխտանալ» դէպի Սէուտական Արաբիա: Լիբանանի մէջ հայութեամբ եւ մարզական թէ մշակութային միութենական կեանքով բաբարող հոգիս եւ գիտակցութիւնս հիմնովին կը կերպարանափոխուէր Սէուտական Արաբիա կեցութեանս առաջին ու թամիսներու ընթացքին, երբ հակառակ պրպտումներուս, կը յաջողէի ծանօթութիւն հաստատել միմիայն չորս հայերու հետ: Հարկ չէի տեսնէր հարցնելու անոնց, թէ ի՞նչ գաղափարի մարդիկ էին: Բաւարար էր, որ հա՛յ էին: Հո՞ն էր, որ գիտակցութեանս պատասխին վրայ կ'որուակուէր սին շուրջութեան մէջ ապրող Լիբանանահայութիւնը կամ աշխարհի որեւէ հայ համայնք, որոնք կը վայելէին «ճոխութիւն» թշնամանալու իրենց շուրջի հայերուն հետ, նոյնիսկ սպաննելու գանոնք, անգիտակից այն օրուան կոշմարին, որ կրնան օր մը մատի վրայ համրուողներ մնալ իրենց շուրջը: Ուրեմն ինչո՞ւ չձեռքազատուիլ այդ մտածելակերպէն: Ինչո՞ւ չ'որդեգրել տեսիլքը վարուելու այնպէ՛ս, որ չիրականանայ ա՛յդ օրուան կոշմարը: Ու կ'որոշէի առաջնորդուիլ այդ տեսիլքով, տարածել գանիկա իմ շրջապատիս մէջ, քաջալեր հանդիսանալ անոնց, որոնք շատագովներն էին այդ մտածելակերպին, եւ պայքարիլ հատուածական ու պառակտիչ գործունէութիւն վարողներու դէմ:

Սէուտական Արաբիա կեցութեանս 12 տարիները եւ 1989ին ի վեր Լոս Անճելըսեան կեանքս ու վարքս ապացոյց են այդ տեսիլքին համոզուածութեանս:

Եթէ «վերապրում» ու «գոյատեւում» բառերը կը յատկանշեն հօրս սերունդը, մեր սերունդը կրնայ յատկանշուիլ «ազգապահպանում»

Շարք էջ 9

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԳԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ
ՔԵՕՐՕՂԼԵԱՆ

ԵՐԵՔ ԱՆՐՈՒՆԴ, ԵՐԵՔ ՏԵՍԻԼՔ, ՄԵԿ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Շարունակում է ճ-ԷԿ

ու «պահանջատիրութիւն» բառերով: Իսկ ինչո՞վ պիտի յատկանշուի մեր գաւակներուն սերունդը: Այս հարցումին պատասխանը գտնելու մտատանջութիւնը իմ հետ եղած է տակաւին ընտանիք չկազմած օրերէս, քաջ գիտնալով, որ շատ բան կախեալ է մեր սերունդէն: Այս յօդուածի կողքին կը գտնէք 23 Մարտ 1978ին, Սէնտակաս Արաբիոյ մէջ գրուած իմ «Աւանդ» բանաստեղծութիւնը, որ կ'աւարտի «Մենք ի՞նչ պիտ' թողունք մեր գաւակներուն» հարցադրումով: Այդ հարցադրումը հրաւէր մըն էր արժեւորելու մեր սերունդի փոխանցելիք աւանդը: Մեր հայրերը մեծ մասամբ յաջողեցան արժեւորել վերապրումի ու գոյատեւման պայքարը: Մեր սերունդը որքանո՞վ յաջողաց ազգապահպանման ու պահանջատիրութեան պայքարը, որ ճամբան հարթէ գալիք սերունդի յաջողութիւններուն: Վստահաբար չի հասանք մեր հայրերու յաջողութեանց, հակառակ այն բոլոր առաւելութիւններուն, որոնցմով օժտուցանք իրենց գոհողութեանց շնորհիւ: Այո՛, Միջին Արեւելքի վերիվայրումները եւ ազգայնական զգացումներ հարթող համաշխարհայնացման ծանրակշիռ գլանը մեծ դեր խաղցան մեր թերացումներուն մէջ, բայց շատ աւելին կը սպասուէր մեր սերունդէն: Չ'ապրինք այն պատրանքը, որ եթէ հազարամեակներ դիմացած ենք, ուրեմն դեռ կը դիմանանք: Գիտակցինք, որ անկման ուղիի վրայ ենք եւ ռազմավարութեան մեծ փոփոխութեան անհրաժեշտութիւնը կայ, կասեցնելու եւ շրջելու այս ընթացքը: Ներկայ դարուս պատմական գարգացումներու ընթացքը չափազանց արագացած է: Այն ինչ որ դարեր կը տեւէր փոխելու, հիմա տասնամեակներու ընթացքին կ'ամբողջացուի: Պէտք է քայլ պահել այս գարգացումներուն հետ: Հարիւրամեակ մը առաջուայ փրկութեան գէնքերը՝ եկեղեցի-դպրոց-ակումբ, նոյն ազգեցիկութիւնը չունին այլեւս: Նոր սերունդի քանի՞ տոկոսին ինքնագիտակցութիւնը կը կերտուի այս

երրեակին միջոցաւ: Այս բոլորին վրայ երբ գումարենք հայաթափուող Հայաստանի պատկերը եւ հոն տիրող իշխանութեանց սրտածմլիկ մտայնութիւնը, կը տեսնենք թէ ի՞նչ վտանգաւոր, չըսելու համար լինել-չլինելու կացութեան մը մէջ ենք ազգովին:

Ի՞նչպէս կրնանք դուրս գալ այս գահավէժ վիճակէն: Եթէ ամէն մէկս մեր ընտանեկան պարագաներու հանդէպ մեր ցուցաբերած լայնահոգութիւնը տարած ենք մեր շրջապատի վրայ, եթէ ամէն մէկս գիտակցինք, որ մեր «ես»ի կողքին պատասխանատու ենք նաեւ «մենք»ի բարօրութեան, ապա գարգացման մեծ յեղաշրջման մը սկիզբը դրած կ'ըլլանք: Այս աւանդն է, որ մեր օրինակով պիտի փոխանցենք մեր գաւակներուն:

Եւ վերջապէս կու գանք երրորդ սերունդին եւ անոր տեսիլքին: Այս ամիս անդրանիկ գաւակի Ռազմիկը մեզի յայտնեց թէ ընդունուած է ԱՄՆի համբաւաւոր համալսարաններէն մին, Մագիստրոսի (MBA) մասնագիտական դասընթացքներուն հետեւելու համար: Դիմումնագրի այն բաժնին մէջ, ուր իրմէ կը պահանջուէր գրել իր ընտանիքի մասին, ի միջի այլոց գրած էր հետեւեալը.

«Այն պատեհութիւնները որ ես այսօր ունիմ, իմ ծնողաց եւ մեծ ծնողաց շնորհիւ է: Իմ ծնողներս զիս մեծցուցին գլխաւոր երեք սկզբունքներով. Շնորհակալ եղիր ունեցածիդ համար. Ժրջանօրէն աշխատիր շուրջիդ պատեհութիւններէն օգտուելու համար. Ժրջանօրէն աշխատիր քեզմէ նուազ բախտաւորներուն համար պատեհութիւններ հայթայթելու: Քանի մը տարիներ առաջ երբ Բնագիտութեամբ հետաքրքրուած էի, հանդիպեցայ մէջբերումի մը, որ հատորներ կրնայ լեցնել: Հեղինակը իսահակ Նիւթընն էր, որ կ'ըսէր. «Եթէ ես յաջողած եմ աւելի հեռուն տեսնել, զիս նախորդած հակներուն թիկունքին վրայ կենալուս համար է»: Ահա ապիկ պատմութեան ամենէն յաջողակ անձնաւորութիւններէն մին, որ փոխանակ իր իրագործում-

Աւանդ
Յարութ Նիւթըն

Մեր մեծ հայրերը երբ զէնք վերցուցին, Գայաստանն ազատ կ'ուզէնք, գոչեցին. Ու ինկան անոնք այդ հողը սիրուն, Ազատ տեսնելու պայքարի ճամբուն:

-Մեր մեծ հայրերը աւանդ թողուցին, Այդ հողի սիրոյն նահատակութեան փաստը:

Իսկ մեր հայրերը, քուած այդ հողէն, Պանդխտութեան մէջ նոր տուն կերտեցին, Գինը երգեցին ու ափսոսացին, Ու նորի կողքին երազ դարձուցին:

-Մեր հայրերն մեզի աւանդ թողուցին, Գայրենի հողի նահատակ երազն:

Երազ ժառանգած ներկայ սերունդը, Երկրնորանքի մէջ կ'ապրի իր կեանքը. Զօրացնել իրենց հայրերու նոր տունը, Թէ՛ վերակազմել մեծերու վարքը:

-Մենք ի՞նչ պիտ' թողունք մեր գաւակներուն:

Մարտ 23, 1978
Սէնտակաս Արաբիա

ներուն վարկը ինքզինքին վերապահելու, պատիւը կու տայ զինք նախորդածներուն ներդրումներուն: Որպէս անդամներ մեր հասարակութեան, մեր պարտաւորութիւնն է ժրջանօրէն աշխատել օգտուելու մեզի ընձեռնուած պատեհութիւններէն ու ապա ստեղծել պատեհութիւններ անոնց համար, որոնք մեզմէ նուազ բախտաւոր են: Իմ ծնողքս եւ մեծ ծնողքս իմ հսկաներն են եւ ես պիտի մաքառիմ օրին մէկը ըլլալու այն թիկունքը, որուն վրայ ուրիշներ կրնան կենալ:»

Չաւիկս եւ իր նմաններուն օրինակը մեզի կը թելադրէ, որ եթէ մեր հայրերու գոհողութիւնները եւ ապագայի հանդէպ անոնց ունեցած տեսիլքը աչքի առջեւ ունենալով, անձնուիրաբար գործենք այսօր, ապա այն ժամանակ մեր սիրտն ալ ուրախ կ'ըլլայ գալիքի տեսիլքով:

Նոր ժամանակներու նոր մտածելակերպի նմոյշով մը

աւարտենք խոհերու այս յօդուածը: Ամիսներ առաջ, երբ գաւակիս հետ կը գրուեցէինք հայութեան ընդհանուր վիճակին մասին, հետեւեալ ակնարկութիւնը ըրաւ: Եթէ հայութիւնը նմանցնենք կարկանդակի մը, ըսաւ ան, ձեր սերունդի անհատները լծուած են գանիկա կտրատելու պայքարին, փորձելով տիրանալ աւելի մեծ պատառի: Որոշներ նոյնիսկ կ'ապաւինին օտար ուժերու, աւելցնելու համար իրենց բաժինը, անգիտանալով որ օտարն ալ իր բաժինը առնելով, պատճառ կը դառնայ կարկանդակի ծաւալի փոքրացման: Իմ սերունդի անհատներուն տեսիլքը, ո՞չ թէ կարկանդակի մեծ մասին տիրանալը պէտք է ըլլայ, այլ կարկանդակին ծաւալը ընդլայնելը, այդպիսով նպաստելով ամէնուն բաժիններուն ընդլայնման: Վերջիվերջոյ, յաջողական սերունդներու գործունէութիւնէն կախեալ է ազգի ճակատագիրը:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԽԱԶԻԿ ԵՒ ԺԵՆԻԱ
ՔԷՇԻՇԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2012

Ս.Դ.Հ.Կ.Ի 125 ԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Հնչակեան Կուսակցութեան 124 տարիներու ծառայութիւնը հայութեան, եղած է մեծ ու անշահնդիր: Որպէս առաջին դրօշակակիրը հայ ազատագրութեան, իր յատուկ հեռատեսութեամբ եւ առաքելութեամբ ան միշտ վայելած է հայ ժողովուրդի սէրն ու յարգանքը մնալով միշտ իր յատուկ բարձունքին եւ փառքին մէջ:

Այսօր ան նոր սերունդին ոչ թէ պարզ յիշատակ մը կտակած է, այլ ապրող կենդանութիւն մը, հարստութիւն մը նոյնինքն իր այդ առաքելութեան մեծագոյն փառքէն: Այդ փառքը բոլոր անոնց փառքն է նաեւ որոնք հաւատարիմ մնացած են Հնչակեան իրենց ուխտին եւ այսօր պատնէշի վրայ կանգնած՝ հոգեկան անսահման հրճուանքով կը դիտեն իրենց կտրած ուղին՝ լեցուն պատմական դէպքերով եւ յաղթանակներով:

Դեմոկրատական անշեղ համոզումներով, մաքուր գաղափարաբանութեամբ եւ հաւատարմութեամբ՝ Ս.Դ.Հ.Կ.ը ծնունդ առած է հայ ժողովուրդի պաշտպանութեան հզօր պարտաւորութեամբ՝ սէր, գոհողութիւն եւ նուիրում տեսլականներով, առաջնորդելով խիզախ հերոս եւ հերոսուհիներու անզուգական հեռատեսութեամբ:

Միշտ պատրաստ՝ ի սպաս հայ ազգին, հայ անհատին եւ անոր իրաւունքներուն, Ս.Դ.Հ.Կ.ի լրջութիւնը եւ նուիրումը շատ հին է դարաւոր հայ ազգի պատմութեան մէջ: Անոր անցեալը եւ պատմութիւնը «ողջ երիզ» մըն է, որուն հետ կտակուած է մեզի սուրբ ժառանգ:

Ս.Դ.Հ.Կ.ը իր առաջին պարտաւորութիւնը դարձուց՝ պահպանել հայ ժողովուրդի իրաւունքները՝ որպէս քաղաքական առաջին կուսակցութիւն եւ առաջնորդ կազմակերպութիւն: Անոր ընթացքը պատահականութիւններով չզարգացաւ, ոչ ալ ենթադրութիւններով, այլ աջալրջութեամբ եւ իր դաւանանքին համաձայն լծուեցաւ իր սուրբ առաքելութեան՝ պայքարելով յանուն հայ ազգին, հզօր գաղափարախօսութեամբ եւ դաւանանքով:

Հայ հողային դատի լուծման գործընթացին մէջ ան իր ինքնուրոյն թեզը ունեցաւ, պահելով իր սկզբունքային գծի կենսագործումը, ատելով պատեհապաշտութիւնը եւ վեր պահելով ազգ, հայրենիք եւ հայապահպանում հասկացողութիւն-

ները՝ մշտապէս դէմ կենալով հայրենիքէն արտագաղթելու երեւոյթին:

Կուսակցութեան մը յաջողութիւնը նշանակութիւն չ'ունենար երբ անոր նպատակները փոքր են եւ ան մղուած է պատեհապաշտութեամբ:

Ս.Դ.Հ.Կ.ի հաստատակամութիւնը եւ ինքնուրոյն կեցուածքները ապացոյց են անոր յատուկ եւ սկզբունքային սահմանումներուն:

Մարդկութիւնը այսօր կարիքը ունիք հասկացողութեան եւ միաբանութեան: Անհատներու, ազգերու եւ կառավարութիւններու մօտ այսօր կարգ ու կանոնի կարիքը կայ, որ կրնայ սատարել առողջ փոխ յարաբերութիւններու՝ խաղաղութիւն յառաջացնելով անոնց միջեւ, դեմոկրատական անշեղ համոզումներով, չարք վերացնելով, վերանորոգելով եւ ամէն մէկ գործընթաց բերեղացնելով:

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի շեմին՝ անկիւնադարձային լրջութեան եւ գործունէութեան պահանջքը, ահաւասիկ բացայայտ է եւ բոլորիս առջեւ մեծ աշխատանք կայ: Արտօնուած չեն քաղջ տրամադրութիւնները, ամուլութիւն կամ տկարացում... Ընդունելի չեն հատուածական կամ անհատական շահերու համար առնուած քայլերը եւ ապարդիւն ծրագիրներ: Գործնական ձեռքեր, աջալուրջ մտքեր եւ յաղթական ծրագրեր կ'ուզենք տեսնել մօտիկ հորիզոնին վրայ:

Կ'ուզենք իրականացած տեսնել այդ երազը որուն համար 96 տարիներ պայքարեցանք, աղօթեցին եւ աշխատեցանք հաւաքական ուժերով եւ միացեալ կամքով:

Ահաւասիկ այս պարտաւորութեամբ եկէք դիմաւորենք Նոր Տարին: Ս.Դ.Հ.Կ.ի 125 ամեակի շեմին նախանձախնդրութեամբ, որպէս արթուն պահակը հայ ազգի, ժողովրդավարութեան ամրապնդման, բարօրութեան եւ միաբանութեան բարձր նոր եւ անկիւնադարձային թափ մը տանք մեր պահանջատիրական պայքարին:

Դէպի Նոր տարի եւ նոր էջ մեր գաղափարախօսական պատմութեան մէջ, նոյն պատասխանատուութեամբ եւ իւրաքանչիւրով որ մեզի 124 տարիներ առաջ ժառանգուեցաւ:

Ողջուն եւ յարգանք քեզ 124 ամեայ Մայր Կուսակցութիւն:

ԳԱՂԱՓԱՐԻ ԿԱՏԱՐԵԱԼ ՅԱՂԹԱՆԱԿԸ
Ս. ՍԱՊԱՅ ԳԻՒԼԵԱՆ (1918)

«Պատմութեան էջերուն մէջ գաղափարի յաղթանակը տեղի ունեցաւ լիակատարապէս եւ արեւի նման բոլորին առջեւ արձանագրուեցաւ: Ի՞նչ է այդ գաղափարը, այդ յաղթանակը, որուն մասին մենք կասկած անգամ չ'ունեցանք տարիներու ընթացքին: Գաղափար մը՝ որուն մոլեռանդ եւ հաստատակամ հետեւողները եղած ենք որպէս քաղաքական կուսակցութիւն, արհամարհելով բոլոր տեսակի դժուարութիւններ եւ արգելքներ:



Երբ, օր մը, գալիք պատմաբաններ ձեռք առնեն մեր անցեալ կեանքի էջերը եւ այդտեղէն ուզեն հանել հայ մտքի պատմութիւնը, անոնք վարկեան մը անգամ պիտի չտատամսին արձանագրելու այդ տիտանական դերը որ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կատարած է ամենադժուար եւ ամենամութ օրերուն, երբ մտքերու խառնի ձաղանչութիւնը ընդհանուր դրութիւն էր, իսկ պահպանողականութիւնն ալ շատ կենսական:

Ահա այդպիսի օրերուն էր որ մեր կուսակցութիւնը «գրեց» այդ գաղափարը, հաւատալով անոր վերջնական յաղթանակին՝ երբ թուլամիտները խրոչելով կործանարար կը կոչէին գայն:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, մտքերու բոլոր այդ խառնափնդորութիւններէն բարձր, յանդուգն կերպով գրեց իր գաղափարաբանութիւնը, քննադատութեան առարկայ դառնալով բոլոր այն հոսանքներէն որոնք կը գտնուէին մտքի շփոթութեան մէջ, եւ սակայն հասած այն օրը, երբ ամէն ինչ պարզուելով արձանագրուեցաւ այդ հսկայ «գաղափարի լիակատար յաղթանակը»:

Ամէն մէկ ազգ, ինքն իր տէրը եւ իր բախտը տնօրինողը պէտք է ըլլայ, իրաւունքը ունենալով իր սեփական հայրենիքի տէրը դառնալու: Կենսունակ ազգերու գոյութիւնը կարելի չէ ոչնչացնել եւ ազգային ոգին պէտք է արտացոլուի մանաւանդ՝ ծրագրային մօտարւոր նպատակներու իրականացման գործընթացին մէջ:

Մենք պայքարեցանք եւ աշխարհի անցուդարձերը եկան հաստատելու որ մենք առաջին օրէն ուղիղ հողի վրայ կանգնած էինք եւ մեր պայքարը ահագին ընդարձակութիւն ունէր: Մեր գաղափարաբանութիւնը հաստատ էր:

Հայ ազգային հարցերու լուծման մէջ մաքուր ազգային ոգին անկասկած ունէր իր կենսականութիւնը, ինքնորոշուելու եւ սեփական բախտի ու հայրենիքի տէրը դառնալու:

Մենք հաւատացինք այս վերջինին եւ այդպէս ալ եղաւ...
Համադրեց Լեւոն Մ.



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՄԱՆՈՒԿ ԵՒ ԼԵՆԱ
ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

Լաւագոյն բարեմաղթանքներ նոր
Տարուայ եւ Ս. Ծննդեան Զոյգ
Տօներու առթիւ



ՄԱՍԻՍ - 2012

2011-ԻՆ ԳՐԵԹԷ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ԽՕՍԵՑԱԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ. ԵՐԲ ...

Անցնող տարուան ընթացքին տեղի ունեցան աչնպիսի իրադարձութիւններ, որոնք առիթ ստեղծեծին, որ գրեթէ ողջ աշխարհը խօսի Հայաստանի ու հայ ժողովուրդի մասին.

2011 թուականին գրեթէ ողջ աշխարհը խօսեցաւ Հայաստանի մասին, երբ,



- Յուլիս 26ին Շախմատի Հայաստանի ազգային հաւաքականը առաջին անգամ ըլլալով նուաճեց աշխարհի ախոյեանի տիտղոսը Նինպոյի մէջ:



- 2010 կայացած Մանկական եւրոտեսիլին Հայաստան ներկայացնող Վրատիմիր Արզումանեան առաջին տեղը գրաւելէն ետք, 2011ի Դեկտեմբեր 4ին Կարէն Տեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ մանկական "Եւրոտեսիլ 2011"-ը: Հայաստանը ներկայացնող Տալիտան գրաւեց հինգերորդ տեղը: Առաջին տեղը գրաւեց Վրաստան:



- Հոկտեմբեր 5-6 պետական այցով Հայաստան ժամանեց Նիքոլա Սարքոզին: Այցի ծիրէն ներս Ֆրանսայի նախագահը հանդիպումներ ունեցաւ նախագահ Սերժ Սարգսեանի ու Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի հետ, նաեւ այցելեց Մեծ Եղեռնի յուշահամալիր եւ յարգանքի տուրք մատուցեց Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին:



- Դեկտեմբեր 22ին Ֆրանսայի Ազգային ժողովը ընդունեց Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը: Նոր օրինագիծին համաձայն՝ Ֆրանսայի մէջ Հայոց Յեղասպանութիւնը ժխտողներուն կը սպառնայ մինչեւ մէկ տարուան ազատազրկում եւ 45,000 եուրօ տուգանք:

**Ս. Գ. Հ. Կ. ՓԱՍՏԻՆԱՅԻ
«ՓԱՐԱՄԱՋ»
ՄԱՍՆԱՃԻՂԻ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ
ՄԱՂԹԷ ՅԱՋՈՂ ԵՒ
ԵՐՁԱՆԻԿ ԱՄԱՆՈՐ**

**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ
ԾՆԵՂԵԱՆ
ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ
ՄԵՐ ԲՈԼՈՐ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՆ
ՈՒ ՀԱՄԱՅՆ
ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝
ՄԱՂԹԵԼՈՎ
ՀԱՄԵՐԱՇԽ ՈՒ
ՆԵՐԳԱՇՆԱԿ
ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ
ԽՈՐՀՈՒՐԳ**

ՄԱՍԻՍ - 2012

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈ՞ՒՆ- ԹԵ՛ ԱՆՈՐՈՇ ՉՍԵՈՒ

Գ. ՄՈՒՆՅԱՆ

Անցնող տարին՝ արաբական աշխարհին համար եղաւ քաղաքական շրջադարձային տարի մը, լի արիւնալի արարքներով, երկարատեւ բողոքի ցույցերով, իշխանութիւններ տապալելու եւ ժողովրդավար ու դեմոկրատական կարգեր հաստատելու պայքարներով: Համաժողովրդային պոռթկումները՝ արդիւնքն էին տասնեակ տարիներու իշխանութիւններու վարած մենատիրական ձգտումներուն, զանգուածներու արդար դատի անտեսումին, կաշառակերութեան, փտախտին եւ այլ գործօններու: Այս բոլորին մէջ ոմանք տեսան արեւմտեան երկիրներու կանխամտածուած շահագիտական նախաձեռնութիւնն ու միջամտութիւնը: Իսկ ուրիշներ գայն որակեցին «Արաբական Գարուն» այսինքն՝ ազատ, անկախ, ժողովրդավար եւ իսկական դեմոկրատական նոր վարչակարգ մը: Այս վերջիններն արդէն սկսած են հիասթափուիլ, քանի որ իրողութիւնները սկսան ցոյց տալ թէ եղածը ոչ թէ «Արաբական Գարուն» է, այլ ցաւալի եւ հաւանօրէն յուսախաբ ձմեռ մը...:

Արդարեւ, իրողութիւնները՝ պերճախօս են: Լաւատեսութեամբ ձամբայ ելած ցուցարարները՝ սկսած են հիասթափուիլ, քանի որ շատ մը տեղեր «ոչինչ կայ փոխուած»...:

ԹՈՒՆՈՒՉ

«Արաբական Գարուն»-ի առաջին ազդանշանն սկսաւ թունուզի մէջ, 2010 թուականի Դեկտեմբերին: Արդարեւ ազատատենչ զանգուածներն սկսան ընդհանուր գործադուլեր եւ ցույցեր կազմակերպել, բողոքելու համար անգործութեան, կաշառակերութեան, կեանքի դժուարին պայմաններուն եւ ազատ խօսքի կաշկանդումներուն դէմ: Այս բոլորը տեւեցին 28 օր եւ յանգեցին երկրի միահեծան հանրապետութեան նախագահ Ջալնի էլ Ապիտինի արտաքստումին դէպի Սէշուտական Արաբիա: Անմիջապէս ետք ան իր հրաժարականը տուաւ, վերջ տալով 23 տարիներու իր տիրակալութեան: Իրեն յաջորդեցին կարգ մը այլ պաշտօնատարներու հրաժարականները:

2011 թուականի Հոկտեմբեր 23ին տեղի ունեցան խորհրդարանական ազատ ընտրութիւններ: Իսլամիստ «Նահտա» կուսակցութիւնը շահեցաւ աթոռներու մեծամասնութիւնը:

Թունուզի մէջ ներկայիս կը գործէ նորանշանակ չափաւորական իսլամիստ Համիտ ձէպպիի գլխաւորած կառավարութիւնը: Ընդհանուրի կարծիքն այն է որ ինք կ'արտացոլացնէ ժողովրդային տարբեր խաւերու եւ գլխաւոր քաղաքական կուսակցութիւններու իղձերը: Յարզ եղած խոստումներուն մեծ մասը չէ իրականացած: Այսուհանդերձ թունուզ կը հանդիսանայ Արաբական գարնան առաջին շեփորահարը:

ԼԻՊԻԱ

Թէեւ մենատիրական վարչակարգ ունէր սակայն արագօրէն գարգացող երկիր մըն էր Լիպիա: Եւրոպայի քարիւղին հինգ տոկոսը մատակարարող անապատային այս երկիրը՝ յանկարծ վերածուեցաւ ոչ թէ «արաբական գարուն»-ի այլ... դժոխքի:

Արտաքին ուժերու միջամտութեամբ հրահրուած ներքին ըմբոստութիւնը՝ իր քաջալերանքը գտաւ ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու զօային եւ ցամաքային բիրտ գործողութիւններով: Հիմնական նպատակը ոչ միայն ժողովուրդի ազատու-



թիւնը եւ խաղաղութիւնը պաշտպանելն էր, այլ՝ երաշխաւորել քարիւղի հանքերու պաշարներու ապահովութիւնը:

Դաժան ռմբակոծումներու գոհ գացին բազմահազար քաղաքացիներ, աւերուեցան քաղաքներ: Երկրի տնտեսութիւնը քայքայուեցաւ եւ ընկերային ապահովութիւնը վատթարացաւ: Պետութեան գլխաւորը Մուամմար Քազզաֆին սպանուեցաւ, իր տղան Սայֆ էլ Իսլամ ձերբակալուած է, իսկ ընտանիքի մնացեալ անդամները ապաստան գտած են դրացի երկրին մէջ:

Արտասահմանեան դրամատուներուն մէջ ի պահ դրուած միլիարդաւոր տոլարները ոչ միայն անձեռնմխելի դարձան, այլեւ ՆԱԹՕ-ի ղեկավարներուն կողմէ արտօնուեցաւ որ գէնք եւ զինամթերք գնուի եւ ըմբոստներուն տրամադրուի, իրենց նպատակներու հասնելու համար: Այս բոլորէն ետք գարմանալի-օրէն անհպելի եղած են երկրէն ներս գործող քառասուն քարիւղի հանքերը: Երջանի մը համար այդ հանքերը կանգ առած էին, իսկ այժմ արդէն արտադրութիւնը վերսկսած է: Սակայն Լիպիոյ քաղաքական, տնտեսական եւ ընկերային վիճակը խիստ անկայուն է եւ մտահոգիչ:

ԱԼՃԵՐԻԱ

Եւրոպայի քարիւղ մատակարարող ափրիկեան երկիրներէն մին է նաեւ Ալճերիան, որ 130 տարի Ֆրանսայի տիրակալութեան ներքեւ մնալէ ետք այսօր դարձած է անկախ պետութիւն: Այսուհանդերձ Ֆրանսան եւ Գանատան կը շարունակեն միջամուխ դառնալ այս երկրի ներքին գործերուն:

Խանդավառուած շրջանի քաղաքական իրադրութեանց արդիւնքէն Ալճերիոյ իշխող իսլամիստ կուսակցութիւնը կը ծրագրէ Ապրիլին առաջ լքել այժմու համախոհական կառավարութիւնը: Ան կը ծրագրէ ճնշում բանեցնել սահմանադրական բարեփոխումներու համար, հանրապետութեան նախագահի իրաւասութիւնները կրճատելու նպատակով:

1992ին տասնամեակ մը տեւող քաղաքացիական կռիւններու ընթացքին, գոհ գացին շուրջ 200,000 ալճերիացիներ: Այժմ բուռն պայ-

քար կը մղուի «Ալ Քայտա» խափանարարական կազմակերպութեան դէմ: Ալճերիոյ Մահմետական Եղբայրներու շարժումը որդեգրած է չափաւոր քաղաքականութիւն մը: Ան դէմ է լեղափոխական շարժումներ եւ եւ կը կարծէ թէ բանակցութեանց միջոցով կարելի է լուծել այժմէական հարցերը: Միւս կողմէ շնորհաւորելի կը նկատէ թունուզի եւ Մարօքի իշխանութեանց այժմու կեցուածքը:

ԵԳԻՊՏՈՍ

Արաբական աշխարհի եւ Ափրիկէի մեծագոյն երկիրը հանդիսացող իր 81 միլիոնի հասնող բնակչութեամբ Եգիպտոս՝ այսօր կը բոլորէ իր պատմութեան անկիւնադարձային մէկ շրջանը: Տարեկիզբէն ի վեր, ժողովուրդը լեղափոխութեան մէջ ըլլալով, արիւնալի եւ դաժան պայքար մղեց վերջ տալու ազատութիւններու ոտնահարումին, կաշառակերութեան, անգործութեան, ընկերային անարդարութեանց ու մենատիրական վարչակարգին: Այս բոլորի հետեւանքով Հանրապետութեան նախագահը հրաժարեցաւ եւ երկրի ղեկավարութիւնը ժամանակաւորապէս բանակին յանձնուեցաւ: Սակայն, բազմահազար ցույցերը՝ դարձեալ շարունակուեցան, քանի որ բանակը չի կրցաւ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը: Ճիշդ է որ նոր դաշիւճ մը կազմուեցաւ, նախկին նախագահի դատաւարութիւնը սկսաւ, սակայն ոչ մէկ հիմնական բարեփոխութիւն չի կատարուեցաւ: Մեծ է ժողովուրդին հիասթափութիւնն ու յուսախաբութիւնը: Անոնք կ'ուզեն «Թահրիր» հրապարակի վրայ նահատակուած հարիւրաւոր քաղաքացիներու վրէժը լուծել դատապարտուած տեսնելով Հոսնի Մուպարաքն ու իր զաւակները, ինչպէս նաեւ մասնակից բոլոր անձերը: «Ամբոխները խելագարուած» են արդարօրէն...:

ԻՐԱԿ

2003ին Ամերիկա մուտք գործեց Իրաք հիւլէական գէնքերու պատրաստութիւնն արգիլելու շինծու պատրուակով: Այս ներխուժումն արժեց միլիարտաւոր տոլարներ: Զոհուեցան 4,500 ամերիկացիներ եւ 600,000 իրաքցիներ:

Աւելի քան մէկ ու կէս միլիոն իրաքցիներ գաղթեցին դէպի Սուրիա եւ Յորդանան: Իսկ շուրջ երեք միլիոն քաղաքացիներ տեղափոխուեցան իրենց տուներէն աւելի ապահով վայրեր բնակելու: Չենք խօսիր շինարարական եւ տնտեսական ահաւոր վնասներու մասին:

Սատտամ Հիւսէյնի տապալումէն ետք ահաբեկչական արարքները շարունակուեցան: Ամերիկան թէեւ իր զինուորներուն մեծ մասը դուրս հանեց երկրէն այս տարեվերջին, այսուհանդերձ տակաւին ի պահ կը մնան քանի մը փոքր խարխիւներ, շուրջ 22,000 բանակայիններով:

Համեմատաբար աւելի խաղաղ իրավիճակ մը կը ներկայացնէր Իրաքի Հիւսիսը գտնուող ինքնավար Քիւրտիստանը: Եւրոյ 40 հազար քառ. քմ. տարածութիւն հաշուող եւ չորս միլիոն բնակիչ հաշուող այս շրջանը իր հետեւողական վերելքը կ'ապրի, կեանքի բոլոր մակարդակներու վրայ: Եկամուտի գլխաւոր աղբիւրներէն մին է արտահանուող քարիւղը:

Իրաքի Հիւսիսը՝ Թուրքիոյ կողմէ յաճախակի օդային ռմբակոծումներու թիրախ սկսաւ հանդիսանալ, քիւրտ ազատամարտիկները հետապնդելու նպատակով: Առիթէն օգտուելով՝ ԱՄՆ-ի կառավարութիւնը կը ծրագրէ 11 պիլիոն տոլարի գէնք վաճառել Իրաքի առանց լրջօրէն հաշուելու այս երկրի ապագան: Միւս կողմէ շինարարական բազմաթիւ մեծ ընկերութիւններ առաջարկած են մասնակցիլ Իրաքի վերակառուցման գործին: Երկրէն ներս անիշխանական իրավիճակը կը շարունակուի:

ՍՈՒՐԻԱ

Սուրիոյ Արաբական Հանրապետութեան տարբեր քաղաքներու մէջ տեղի ունեցան ցույցերը կը միտէին ժողովրդավարական կարգերու հաստատումն ու քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը, ինչպէս նաեւ Սահմանադրութեան բարեփոխութիւնը, մասնաւորաբար ծրոյ յօդուածը չեղեալ նկատել: Արդարեւ այդ յօդուածին մէջ կ'ըսուի «Պաաս կուսակցութիւնը կը ղեկավարէ պետութիւնն ու հանրութիւնը»: Այսպիսով առիթ կը տրուի նաեւ նոր կուսակցութիւններու կազմաւորումին: Արդարեւ ներկայ վարչակարգը բաւական գիշուումներ կատարեց եւ խոստացաւ առաջարկուած բարեփոխութիւնները հաշուի առնել եւ գործադրել:

Եւրոյ ինը ամիսներ տեւող բախումներու գոհ գացին աւելի քան չորս հազար քաղաքացիներ եւ ապահովութեան ուժեր: Կ'ըսուի թէ արեւմտամէտ արտաքին ուժեր եւ գործակալներ մեծ բաժին ունին այս խմորումներէն ծնունդ առած իրադարձութեանց մէջ: Անոնց նպատակն է ամէն գնով տապալել Պաշար Ասատի իշխանութիւնը:

Արաբական Լիկայի դէտերու Սուրիա ժամանումը՝ կրնայ թերեւս մեղմացնել կացութիւնը: Այլապէս՝ քաղաքացիական պատերազմ մը կամ արտաքին միջամտութիւն մը մօտալուտ կը համարուի:

Վերջերս արձանագրուած դրական երեւոյթներէն մին կը համարուի 750 քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը: Արդարեւ, անոնց ընդհանուր թիւը երկու հազարէն աւելի է:

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈ՞ՒՆ- ԹԵ՛ ԱՆՈՐՈՇ ՁՍԵՈՒ

Շարունակուած էջ 12-էն

Նշենք նաեւ որ Սուրիա քարիւղ արտադրող երկիր է: Իսկ վերջին ինը ամիսներու պատահարներուն պատճառով քարիւղի արտադրութիւնը իջած է մէկ երրորդի:

Բարեբախտաբար սուրիական այս տագնապալի օրերուն տեղւոյն հայ գաղութը որդեգրած է շատ խոհեմ եւ ճկուն քաղաքականութիւն մը:

ԼԻԲԱՆԱՆ

Անցնող տարեշրջանին Լիբանանն ունեցաւ տագնապալի բաց խաղաղ տարի մը: Երկրի անդորրութիւնը խանգարողն էր Իրանի գորակցութիւնը վաչելող Հրգպալլա կուսակցութիւնը: Այս կազմակերպութիւնը կառավարութեան հետ մեծ տարակարծութիւն մը ունենալով ցարդ կը մերժէ իր ծանր ու թեթեւ գէնքերն ու հրթիռները լիբանանեան բանակին յանձնել: Միւս կողմէ երկիրը կը բոլորէ տնտեսական մեծ տագնապ մը: Սակայն, հակառակ տիրող գործազրկութեան կալուածներու եւ բնակարաններու գիները աճելիօրէն սղած են եւ հասած երեւակայական համեմատութիւններու:

Հարեւան Սուրիոյ մէջ տիրող քաղաքական իրադարձութիւններու պատճառով Լիբանանի պատկան մարմինները խիստ հակողութեան տակ առած են սահմանային անցքերը, արգիլելու համար ապօրէն գէնքերու եւ գինամթերքի փոխադրութիւնները: Իրերու այս կացութեան դիմաց Լիբանան որդեգրած է շատ զգուշաւոր քաղաքականութիւն մը: Սահմանը բաց է մասնաւորաբար գաղթականներու եւ յատկապէս թրի-



փոլի եւ կամ Պէյրութ ժամանող հիւանդներու համար: Միւս կողմէ արաբական Լիկայի նիստերու ընթացքին Լիբանան նախընտրած է չափաւոր կեցուածք մը ցուցաբերել:

Վերջապէս լիբանանահայ գաղութը եւս որդեգրած է զգուշաւոր քաղաքականութիւն մը ի տես գոյութիւն ունեցող տարածաշրջանի վերիվայրումներուն: Նախորդ տագնապներուն հայտնութիւնը աւելի խոհեմ կեցուածք մը որդեգրած էր...:

ՍՈՒՏԱՆ

Հարաւային Սուտանի Տարֆուր տարածաշրջանի անկախացումէն եւ այդ շրջանը պաշտօնապէս Հարաւային Սուտանի պետութիւն ճանաչումէն ետք, բախումները կը շարունակուին: Հիւսիսային Սուտանի կառավարութիւնն իրագործած է Տարֆուրի ցեղասպանութիւնը, որուն զոհ գացած են 300,000 քաղաքացիներ վերջին 8 տարիներ-

ըր ընթացքին: Ներկայիս կռիւնները լայն համեմատութիւններու հասած են, յատկապէս Տարֆուրի ազատարական բանակի ղեկավարներէն եւ Արդարութիւն ու Հաւասարութիւն Շարժումի պատասխանատու Նալիլ Իպրահիմի սպանութենէն ետք:

Սուտանի այժմու նախագահ Օմար Ալ Պաշիր կը նախընտրէ բանակցութիւններու գիծով լուծում մը գտնել տարակարծիքներուն եւ վերջ տալ արիւնալի կռիւներուն:

Միւս կողմէ կ'ուզենք նշել որ այս օրերուն, Արաբական Լիկայի կողմէ Սուրիա առաքուած դէտերու պատուիրակութիւնը գլխաւորողը Տարֆուրի ցեղասպանութիւնը պատրաստողներէն սուտանցի գորավար մըն է, Մուհամմատ Ահմատ Մուսթաֆա Ալ Տալի անունով: Այսպիսի անձ մը ինչպէ՞ս կ'ընայ անկողմնակալ ըլլալ եւ գլխաւորել նման պատուիրակութիւն մը յատկապէս

Վիճարոյց շրջանի մը մէջ:
ՊԱՂԵՍՏԻՆ

Համեմատաբար առաւել գործնական քայլեր առնուեցան վեց տասնամեակներէ ի վեր անլուծելի մնացած պաղեստինեան տագնապի լուծում մը տալու: Արդարեւ տարիներէ ի վեր ներքնապէս պառակտուած երկիրը՝ իր վերամիաւորումն ունեցաւ «Պաաս» եւ «ՊԱԿ»ի միջեւ հաշտութիւն գոյանալով: 2011 թուականը բախտորոշ էր նաեւ Պաղեստինի համար: Քիչ մնաց որ անդամ ըլլար Միացեալ Ազգերու կազմակերպութեան: Սակայն... բախեցաւ ամերիկեան «վեթօ»ին: ԱՄՆ կ'ուզէր հաճելի երեւնալ իր դաշնակից Իսրայէլին...: Այս գետնի վրայ պայքարը պիտի շարունակուի: Միւս կողմէ Պաղեստին քանի մը ամիս առաջ պաշտօնապէս անդամ ընտրուեցաւ ՄԱԿ-ի աւրնթեր «ԻԻՆՅՍՔՕ»ի համաշխարհային մշակութային կազմակերպութեան: Այս երեւոյթը խոր ընդվզում յառաջացուց Իսրայէլի մօտ:

Օգտուելով տարածաշրջանի խառնակ կացութենէն Իսրայէլ սկսաւ 1000 բնակարաններու ապօրէն շինութեան արեւելեան երուսաղէմի մէջ, անտեսելով եղած բոլոր միջազային ազդարարութիւնները:

Դժբախտաբար պաղեստինեան արդար դատի լուծման եւ ինքնուրոյն պետութեան ճանաչման համար բանակցութեանց բոլոր ճանապարհները փակ կը մնան: Իսկ օրային ուժակոծումները կը շարունակուին կազալի խաղաղ ազգաբնակչութեան դէմ: Գալով Արաբական Լիկային՝ անտեսած է Պաղեստինեան հարցը, թիրախ ունենալով միայն Սուրիան...:

The Management and Staff of



FIRST CALIFORNIA BANK

Wish

**The Armenian Community
of Southern California**

**Happy New Year
& Merry Christmas**

505 N. Brand Boulevard, Suite 110
Glendale, CA 91203
Telephone: 818.244.2504
Fax: 818.244.2863

fcbank.com Member FDIC

ՄԱՍԻՍ - 2012

«ՄԱՍԻՍ»-Ի 30-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ
ՀԱՅԱՊԱՅՊԱՆՄԱՆ ԶԱՏԱԳՈՎԻ
ԴԻՐՔԵՐՈՒՄ
ՎԱՅԱՆ ՊԱՅԱՐԵԱՆ

1915 թ. Թուրքիայի կողմից Հայերի ցեղասպանությունից մազապուրծ ազատուած հայերն սիրուեցին աշխարհով մէկ՝ յատկապէս իրենց սիրալիր ընդունող Մերձաւոր Արեւելքի արաբական երկրներում: Նրանք օգնութեան կարիք ունէին: Հայ ժողովուրդը ցնցուած էր տեսնելով աշխարհի հօգորներ թոյլտուութեամբ հայերի բնաջնջումը Թուրքիայի կողմից՝ անմարդկային, հրէշային խոշտանգումներով և դժոխային ձեւերով:

Բազմաթիւ կազմակերպութիւնների կողքին հայերին օգնողների թուում էին նաեւ մեր աւանդական կուսակցութիւնները, որոնք գիտակցեցին պահի լրջութիւնը, օգնեցին ժողովրդին եւ յուսադրեցին նրան ապագայի լաւատեսութեամբ:

Օգնութեան կարեւորագոյն ոլորտների թուում, նրանք ձեռնամուխ եղան նաեւ տեղեկատուութեան՝ որով ժողովրդին լուսաբանում էին հայերի և տեղի ունեցող միջազգային իրադարձութիւնների մասին: Այդ գործընթացը շարունակուում է մինչեւ այսօր: Նրանք աստարում են հայապահպանման գործընթացին և օգնում հայրենիքին:

Երկրի անկախութեան, պատերազմի և այլ հանգամանքների բերումով տարիների ընթացքում հայերի տեղաշարժեր եղան այս կամ այն երկրից դէպի այլ երկրներ, և որտեղ էլ հաստատուեցին նրանք, աշխատեցին պահել իրենց ինքնութիւնը:

Հայ ժողովրդի կեանքում խոշոր իրադարձութիւններ տեղի ունեցան 20-րդ դարի վերջին շուրջ 30 տարիներին, երբ վերոյիշեալ պատճառներով տարբեր երկրներից, այդ թուում և Հայաստանից սկսեց հայերի մեծ հոսք յատկապէս Ամերիկա (որոշ չափով էլ Գանատա): Հայկական մեծ սիրուեք առաջացաւ յատկապէս Լոս Անճելէոսում, որտեղ մէկը միւսի ետեւից սկսեցին ստեղծուել նոր կազմակերպութիւններ՝ արուեստի, գրականութեան,

հայրենակցական և այլ բնագաւառներում, որոնք օդի ու ջրի նման պահանջ ունէին տեղեկատուութեան եւ այն չուշացաւ: Անկախ անհատների կողմից մէկը միւսի ետեւից սկսեցին հրատարակուել թերթեր՝ «Նոր Կեանք», «Նոր Հայաստան», «Հայ Կեանք», «Փարոս» և այլն եւ հեռուստածրագրեր: Ակտիվացաւ կուսակցական մամուլը՝ ՀՅԴ-ի «Ասպարէզ» և ՌԱԿ-ի «Նոր Օր» օրգանները:

1980 թ. դժուարին պայմաններում հիմնադրուեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան «Մասիս» շաբաթաթերթը, որի հիմնադրման գործում իր շօշափելի լուծման ունեցաւ եւ երկար տարիներ նրա խմբագրի պաշտօնը վարեց հանգուցեալ դոկտ. Յարութիւն Սաղրեանը:

Թերթերը ջատագովեցին հայապահպանման՝ աշխարհի բոլոր ծագերից ու Հայրենիքից ստացուած լուրերով յագեցնելով ժողովրդի ծարաւը:

«Մասիս»-ում լոյս տեսնող հետաքրքիր յօդուածները լուսաբանութիւններով անմիջապէս գրաւեց ընթերցողի ուշադրութիւնը:

Այնուհետեւ «Մասիս»-ի խմբագրի պաշտօնն ստանձնեց Տօքթ. Արշակ Գազանճեանը, որն իր շուրջը հաւաքեց մտաւորականների մի բոյլ, որոնց օգնութեամբ թերթը դարձրեց աւելի հետաքրքիր: Նա շարունակում է եռանդուն գործունէութիւնը խմբագրի պաշտօնում: Վերջին տարիներին թերթն անաչառ լուսաբանեց Հայաստանի ընդդիմութեան գործունէութիւնը եւ նախագահական ու տեղական ընտրութիւնների իրականութիւնը ճշմարտացիօրէն: Նա շարունակում է իր ազգային գործունէութիւնը: Թղթակիցները մեծ սիրով են թղթակցում «Մասիս»-ին, որն այսօր փնտռուող թերթ է ու տարածուում է նաեւ համացանցով:

«Մասիս»-ի 30-ամեայ յոբելեանի առիթով շնորհաւորում ենք

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԵՒ «ԱՐԳՈՍ»
ԻՇԽԱՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ
ԹՈՐԳՈՍ ՓՕՍԹԱՃԵԱՆ

Հայ մամուլը ունեցած է միշտ եւ ունի դեռ կարեւոր առաքելութիւն մը, հանդէպ հայ ժողովուրդի եւ հանդէպ մեր Հայրենիքի:

Այդ առաքելութիւնը կը կայանայ մեր հայրենիքն ներս եւ դուրս տեղի ունեցած բոլոր իրադարձութիւնները ճշգրտօրէն տեսնելու եւ ներկայացնելու ընթերցող հասարակութեան:

Մամուլի այդ կարեւոր դերը՝ յստակօրէն պատկերացնելու համար, փափաքեցայ ներկայցնել հոս յոյն դիցաբանութեան վերցուած առասպել մը:

«Արգոս» է անունը այդ դիցաբանական իշխանին որ ըստ առասպելին օժտուած էր հարիւր աչքերով:

Երբ «Արգոս» իշխան կը քնանանար, միայն իր յիսուն աչքերը կը քնանային իր հետ: Իսկ իր միւս յիսուն աչքերը արթուն կը մնային հսկելու համար առ ի ապահովութիւն իր անձին եւ իր իրաւասութիւններուն:

Այս առասպելը ունի տիւր վախճան մը, «Հերմես» անուն դիք մը կախարդական սրինգով կը քնացնէ «Արգոս» իշխանը: Ան կը յաջողի քնացնել նաեւ Արգոսի հարիւր աչքերը միանգամայն: Յետոյ դաւադրաբար ան կը հատէ Արգոսի գլուխը՝ տիրանալու համար անոր սիրած «Իո»ին:

Մոռնալով պահ մը այս առասպելի տիւր վախճանը կը փափաքեմ հայ մամուլը նմանցնելը հարիւր աչքերով օժտուած Արգոս իշխանին:

Հայ մամուլը (իր խմբագրական կազմով) պարտի օժտուած ըլլալ միշտ հարիւր անքուն աչքերով՝ որպէսզի ճշգրտօրէն տեսնէ, Ազգային եւ Միջազգային բոլոր անցուղարձերը եւ ճշմարտութիւնը միշտ ներկայացնէ հայ ընթերցողներուն:

խմբագրական կազմին Տօքթ. Արշակ Գազանճեանի գլխաւորութեամբ, ցանկանում ուժ ու եռանդ

Հայ մամուլը եւս «Արգոսեան» հարիւր աչքերով պարտի տեսնել նաեւ մեր Հայրենիքն ներս կատարուած բոլոր իրադարձութիւնները եւ ներկայացնել զանոնք հայ հանրութեան:

Հայ մամուլը Արգոսեան հարիւր աչքերով միշտ ճշմարտութիւնը պիտի տեսնէ եւ ներկայացնէ զանոնք յօգուտ մեր ժողովուրդի բարօրութեան եւ Հայրենիքի ուղեւորման:

Հայ Մամուլը պիտի մնայ միշտ արթուն եւ միշտ արթուն պահէ իր «Արգոս»եան հարիւր աչքերը՝ որպէսզի դաւադիր «Հերմես» մը, կախարդական սրինգով չի քնացնէ զինք եւ իր վախճանին շառաջնորդէ Հայ Մամուլը:

«Մասիս» շաբաթաթերթի երեսնամեայ տարեդարձը՝ մղեց զիս կատարելու այս օրինակելի խորհրդածութիւնը:

Երեսուն տարիներէ ի վեր, կանոնաւորաբար ստացած եմ «Մասիս» շաբաթաթերթ, եւ զնահատած թերթի խմբագիրներու եւ աշխատակիցներու «Արգոսեան» աչքերով կատարած «ուղղատեսութիւնները»:

Ես բաղդը ունեցած եմ ներկայ ըլլալու երեսուն տարիներ առաջ կատարուած թերթի առաջին տարեդարձին՝ հրաւէրով թերթի նուիրեալներէն Տիրամերեանի, ուր ծանօթացայ թերթի առաջին խմբագիր Յարութիւն Սաղրեանին, որոնք տարիներ անվերջ անվատ կերպով ծառայեցին թերթին եւ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան:

Իմ խորագգայ շնորհաւորութիւններս թերթի ներկայ խմբագիր Արշակ Գազանճեանին բոլոր նուիրեալ միւս աշխատակիցներուն որոնք շարունակ ուղղամտօրէն եւ ուղղատեսօրէն կը պահպանեն հայ ժողովուրդի եւ հայրենիքի իրաւունքներն ու շահերը:

և յետագայ յաջողութիւններ ի նպաստ հայապահպանման և Հայրենիքի բարօրութեան:



ՄԱՍԻՍ - 2012

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԶԱՐ ՏԵՂԵԿԱՏԻՈՒԹԵԱՆ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Գիրքը սնունդն է հոգու եւ մտքի, թերթը ջահ է տեղեկատուութեան, երկուսն էլ լոյսի եւ անձրեւի պէս յոյժ կարեւոր են մեր կեանքի համար: Այս հարցի անհրաժեշտականութիւնը 18-րդ դարում քաջօրէն գիտակցել է լուսահոգի Յարութիւն Շմաւոնեանը, այդու 1794 թուին Հնդկաստանի Մադրաս քաղաքում առաջին անգամ լինելով Իրանահայ քահանան, այն օրերին, այն հեռուոր Հնդկաստանում, թերթ է հրատարակում: Հրատարակիչի նպատակակէտը, ձգտումը եղած է՝ Հայաստանի մասին լուրեր փոխանցել հայ գաղութին, նրանց սիրտն ու հոգին կապի մէջ պահել հայրենիքի հետ: Հայաստանը որտեղ, Հնդկաստանը որտեղ եւ էն օրերի հաղորդակցական կապերի ահաւոր դժուարութիւնները: Ահա՛ այդ քահանայ հայրը տես ինչ մեծ առաքելութեան է մղուած Հայաստանի մասին իր անվերապահ ձգտումով:

Անդրադառնալով «Ազդարար» թերթի այս առաքելութեան ուզում եմ հետեւութիւն անել որ այսօրուայ պայմաններում հայ մամուլը առաւել մեծ դեր ու պարտականութիւն ունի Գլոբալիզացիայի այս դարում ազգային ռազմավարութեան քա-

ղաքականութիւն առաջ տանելու՝ մեր ազգային մշակոյթը պահպանելու, ցեղասպանութեան ճանաչման հետեւողական աշխատանքների շարունակութիւնը թափ տալու, բռնագրաւուած հողերի վերադարձը եւ հայրենիքի հզօրացման անսակարկ եւ միասնական զօրակցութեանը սատարելու:

Ահա՛, «Մասիս»ը մէկը մեր սփիւռքեան լրատու օրգաններից իր ծառայութեան 30 ամեակի սոնակատարութեան սեմին մաղթենք յարատեւութիւն: Մեր ներկայ պայմաններում թերթ հրատարակելը հերոսութիւն է, մեծ զոհողութիւնների կարիքն է զգացւում: Ամէն մի հրատարակող թերթ մի բերդ է պաշտպանութեան:

Ամենայն բանիւ եւ գործով պէտք է որ սատար կանգնենք մեր թերթերին որպէսզի լոյսն ու ջերմութիւնը շարունակ մեր տները հասնեն, որին բոլորս էլ հացի պէս որպէս գոյութեան սնունդ կարիքն ունենք:

«Մասիս»», շնորհաւոր յոբելեանդ, մաղթենք անխափան հրատարակութիւն:

Վարձքներդ կատար:
Ուժ եւ կորով խմբագրական կազմին:

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ

«ՄԱՍԻՍ»Ը

ՀԱՅԿ ՆԱԳԱՇԵԱՆ

«Մասիս»ի տարիքը կը գուգադիպի երկու կարեւոր իրադարձութիւններու՝ Լիբանանի Եղբայրասպան պատերազմին եւ այլազան վնասներէ ու վտանգներէ վերապրած լիբանանցիներու արտագաղթին, ի միջի այլոց հայերու, որոնց մեծ մասը հաստատուեցաւ Մ.Ն. Գալիֆորնիա նահանգը: Նորեկներով աւելի եւս աշխուժացաւ տեղւոյն ազգային կեանքը, հիմնելով նոր եկեղեցիներ, դպրոցներ ու մամուլ, որոնց կարգին իր պատուոյ տեղը ունեցաւ «Մասիս» շաբաթաթերթը: Անոր ճակտին գրուած է «Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի»:

Ազգային կուսակցութիւններու երիցագոյնը հանդիսացող Հնչակեան այս օրկանը մոլեռանդութենէ գերծ, համերաշխութեան ու համագործակցութեան հաւատացող մըն է: Կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան հետ համերաշխ այս ուղեգիծին մէջ որոշիչ դեր ունի խմբագիր Արշակ Գազանճեանը: Մասնագիտութեամբ ատամնաբոյժ է



ան, բայց նախընտրած է ակուաներու առողջութեան համար աշխատելու փոխարէն, ամերիկեան մեծ ձուլարանին դէմ հայերէն լեզուն, ազգային գիտակցութիւնը եւ հայրնասիրութիւնը պահպանելու աշխատանքին մասնակցիլ:

«Մասիս»ի երեսնամեայ վաստակը անհերքելի ապացոյցն է այդ առաքելութեան մէջ իր ունեցած թանկագին դերակատարութեան:

Նոր Տարուան առթիւ նոյն առաքելութիւնը շարունակելու տարի մը եւս կը բացուի «Մասիս»ի առջեւ, եւ հիմնուելով անոր երեսնամեայ վաստակին վրայ, կրնանք վստահ ըլլալ նոր նոյն հետեւողականութեամբ ու նուիրումով ան պիտի շարունակէ իր ազօգուտ եւ հայրենասնուէր ուղին:

Շնորհաւոր եւ շնորհաբեր Նոր Տարի:

ՏՕՆԱԿԱՆ ԼՈՅՍԵՐՈՎ ՅՈՐԴՈՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԵՍԵԱՆ

Այս որքան լոյս,
Այս որքան գոյն,
Լոյսերու մէջ քաղաքի,
Ճամբաներուն մէջ ծանօթ
Փողոցներուն ամալի:

Երդիքներուն տակ բոլոր,
Տօնածառ կայ զարդարուն,
Իր ողողուն լոյսերով
Ու մսուրով Ծնունդի
Կ'աւետէ զալուստը յոյսի:

Այս որքան փայլք
Այտերուն վրայ մանկական,
Այս որքան կեանք
Աչքերուն մէջ փոքրերուն

Օրերուն այս սոնական:

Ու մանուկները ճուռող
Մօր սիրտ հատցնող
Հօր ժպիտ բաշխող
Սրբութիւնը մարդկային
Մանուկները աշխարհի:

Իրենցն է Կաղանդ Պապան,
Որ կուգայ սարերէն
Ղօղանջներով զանգակի
Ու միբզերով, խաղալիքով,
Որ պիտի գրկած ննջեն
Մինչեւ յոգնիլը անոնցմէ
Մանուկներուն է բոլոր
Կաղանդ Պապան բեռմնաւոր
Խաղալիքներ բաշխելու:

ՄԱՍԻՍԻ ՆՄԱՆ

«ՄԱՍԻՍ»-Ի ԵՐԵՍՆԱՄԵԱԿԻՆ


Ն. Տ. ՍԵՍՐՈՊԵԱՆ

Համակ նուիրում մարտի, պայքարի,
Դու գաղափարի անխորտակ մի բերդ,
Ազատութեան վեհ մտքի քահակիր,
Նուիրեալների անխափան շքերթ...

Եղար խօսնակը մայր կուսակցութեան,
Ու քարոզեցիր միշտ ազատութիւն,

Սերունդներ եղան քեզի ուղեկից,
Դարձան պայքարի անխոնջ մասնակից...

Երեսունամեայ, բայց դեռ պատանի,
Ազատ ու արդար մտքերի պաշտպան
Մայր հայրենիքին պաշտպան, պիտանի,
Դու յաւերժ կանգուն Մասիսի նման...



ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾԲ

ՔԵԱԼԼԱՅ ՆԻԿՈՂՈՍԸ ԵՒ ՄԵՐ ԱՄԱՆՈՐԸ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... 1964-ի աւարտին մեր հա-
րեւան Օնոբրիոսի երկյարկանի
առանձնատան առաջին յարկի մէկ
սենեականոց բնակարանում վար-
ձակալական հիմունքներով ամուս-
նական մի գոյգ տեղաւորուեց: Ինչ-
պէս մեր, այնպէս էլ միւս հարեւան-
ների հետաքրքրութիւնը մեծ էր
այդ գոյգի նկատմամբ: Կիրնը, ար-
տաքինիք էլ երեւում էր, որ օտար
է, սլացիկ հայեացք, շիկահեր մա-
զեր, որ առատորէն փռուած էր
ուսերին, իսկ տղամարդն էլ՝ իսկա-
կան խափշիկի էր նման, կարճահա-
սակ ու մեծ, պարարտ ստամոքսով:
Ինչպէս յայտնել էր հօրս ֆրանսա-
հայ Օնոբրիոսը, Նիկողոսի կիրնը
գերմանուհի էր, անունն էլ սարա:

Սարան մշտապէս տանն էր,
իսկ ամուսինը առաւօտից գնում էր
աշխատանքի ու միշտ ուշ էր վե-
րադառնում: Ինչպէս յետոյ իմա-
ցանք, Նիկողոսը, որին մենք կրճատ
ձեւով Նիկօ էինք ասում, լուսանկա-
րիչ էր և աշխատում էր Լենինի
հրապարակում եւ անցորդներին էր
լուսանկարում: Ի հարկէ միայն
Նիկոն չէր, որ «սպասարկում» էր
հրապարակի անցորդներին: Իրե-
նից բացի հրապարակում կային
եւս երեք լուսանկարիչներ, որոնք
մրցման մէջ էին իրար հետ եւ
յաճախորդ էին փախցնում միմեա-
նից:

Մի օր, Նիկոն ու իր կիրնը, որ
միայն մի քանի բառ գիտէր հայե-
րէն, առաջին անգամ լինելով թա-
կեցին մեր դուռը:

- Հենրիկ, - առանց բարեւ-
բարի լոյսի, անմիջապէս վրայ
տուեց Նիկոն, - խնդրեմ օգնէ ինձի,
օգնէ...

- Սպասի՛ր, սպասի՛ր Նիկօ,
ի՞նչ է եղել, ներս մտէք, շատ
լուզուած ես երեւում, նստէք խնդրեմ
բազմոցին եւ պատմի՛ր, - անակն-
կալի եկած ասացի ես, -հա՛, աչքիդ
տակի կապո՞յտը ինչից է...

- Հէ՛չ մի հարցնէ՛ր..., տղաքը
լաւ մը ծեծի քաշեցին ինձի:

- Ի՞նչ տղաք, ովքե՞ր էին...

- Կեցի՛ր, կեցի՛ր, որ պատմեմ:
Գիտես, որ լուսանկարիչ եմ: Երջտո-
վետ կ'ըսէք, ինչ կ'ըսէք, ծանօթ
մէկն ալ չունիմ անոր մէջ, որ ինձի
կարենայ օգտակար ըլլալ նկարչա-
տուն մը բանալու համար, շիտակը

դրամ ալ չունիմ...

- Մի երկարացրու Նիկօ, ասե-
լիքդ ասա:

- Ի՞նչ ըսեմ եղբայրս, նկար-
չական գործիքս առի եւ գացի
Լենինի հրապարակ՝ անցորդնե-
րուն լուսանկարելու: Հոն ինձի պէս
երեք լուսանկարիչներ կան եւ
անոնցմէ ամէն մէկը անցորդներուն
ետեւէն վազելով կը ջանար յաճա-
խորդ գրաւել: Ես ալ հեռուն կեցած,
գործիքը վիզէս կախած, կը սպա-
սէի բախտիս: Եկուր տես, որ առանց
մասնաւոր ջանք թափելու, աւելի
յաճախորդ գրաւեցի, քան միւս
երեքը:

- Նիկօ՛, երկար ըրի, գործ
ունիք բարեկամս, ըսելիքը ըսէ եւ
լմնցուր, խոհանոց պիտի երթամ
խաշը մաքրելու, դուք փաշա կ'ըսէք,
շաբաթ օրը հիւրեր ունինք -
գայրոյթից արեւմտահայերէնի ան-
ցայ ես:

- Ինչ ըսի՞ր..., իա՞նչ ըսի՛ր,
իշտէ մեր գիտցած փաշա՞ն..., փա-
շան ի՞նչ է ճանըմ, քեալլա՞յ ըսէ,
քեալլայ..., բայց կեցիր Հենրիկ,
կեցիր, քիչ վերջ կը խօսինք քեալ-
լայի մասին..., քեալլայ գիտես չէ՞
ինչ ըսել է՝ քուլուխ, ոչխարի
քուլուխ:

- Ծօ՛, կարգին խօսէ տղայ,
գլուխ ըսէ, ոչ թէ քուլուխ: Ամօթ
է, ամօթ, քիչ մը հայերէն սորվէ:
Աչքիդ տակին կապոյտին անցիր,
հայդէ...

- Կապոյտի՞ն ըսի՛ր..., հա՛...,
մայրամուտի տեսն, երբ գործեր-
նիս լմնցուցած տուն պիտի դառ-
նայինք, այդ երեք տղաքը ինձի
տարին դիմացի Չուրերու խանու-
թին ետեւը եւ յարձակեցան վրաս,
քանի մը հարուածներ հասցուցին
քիթիս, բերնիս եւ հայհոյանքնե-
րու տարափին տակ ալ սպառնա-
ցին, ըսելով որ ոտքերս կը կտորեն,
եթէ անգամ մըն ալ երեւնամ հրա-
պարակին շուրջը: Ատ ալ չէր
բաւեր, գործիքս առին ձեռքէս:

- Լաւ է, որ չեն կտորած
բարեկամս: Իրապէս, ինչո՞ւ ուրիշ
տես չես կեցած եւ մարդոց յաճա-
խորդներուն տիրացած ես: Ինչ է,
հրապարակին վրայ ուրիշ տեղ
չկա՞յ, մանաւանդ Նոր Տարուան
այս օրերուն: Լենին պապիկի ար-
ձանին քովը կենայիր, մանաւանդ
Արմենիա հիւրանոցն ալ քովն է:

Լեցուն եկող-գացող կայ: Հիմա ի՞նչ
է ուզածդ Նիկօ:

- Դուն ասոնց լեզուն լաւ կը
հասկնաս, հաճի՛ս, գործիքս առ
ասոնց ձեռքէն Հենրիկ:

- Լաւ, կը խոստանամ տղանե-
րուն հանդիպիլ եւ նկարչական
գործիքը քեզի վերադարձնել, միայն
թէ խօսք տուր որ ուրիշի «հացին
վայ պիտի չըսես»: Այդ խեղճերը
իրենց վաստակածէն բաժին կը
հանեն ոստիկաններուն եւ հսկիչ-
ներուն, ատանկ հայալլայ երթալ եւ
աշխատիլ չըլլար Նիկօ:

- Շատ շնորհակալ կ'ըլլամ,
Հենրիկ, եթէ կարենաս գործիքս
ազատել ասոնց ձեռքէն, ես ալ քեզի
ուզածդ նուէրը կ'ընեմ:

- Նուէր-մուէր չեմ ուզեր Նի-
կօ, միայն թէ անգամ մը քեալլայ
եփէ, գիտնանք թէ ինչ ըսել է: Քիչ
առաջ խօսք ըրիր այդ մասին: Մեր
տունին մէջ միայն իաշ, փաշայ
կ'եփուի:

- Սիրով Հենրիկ, ուզածդ թող
ատ ըլլայ, թէեւ երկար աշխատան-
քի կը կարօտի քեալլայ եփելը,
գիտե՞ս որքան համով կ'ըլլայ ոչ-
խարի քուլուխին մէջի ուղեղը,
աչքերը, լեզուն: Ամէն մէկ անգամ
իր համը ունի:

- Հոն կեցիր Նիկօ, ես ատանկ
բաներ ուտելու վարժուած չեմ,
լեզու, ուղեղ, քիթ, կոկորդ, ալ չեմ
գիտեր ի՞նչ..., ես իաշ ալ չեմ
ուտեր, միայն կը սիրեմ իաշին
մթնոյտը, երբ իրարու գլուխ կը
հաւաքուին տղամարդիկ եւ ամ-
բողջ օրը ուտել-խմելով կ'անցը-
նեն, կենացներ կը խմեն, թաւու կը
խաղան: Խաշին ալ կը յաջորդէ
կէսօրուան խորովածը, իսկ իրիկ-
ուան՝ էջմիածինի քէօթֆէ...:

- Աստուած իմ, այդչափ ու-
տել կ'ըլլա՞յ...

- Կ'ըլլայ, կ'ըլլայ եղբայր
պատուական: Շաբաթ օրը եկուր՝
կը տեսնաս: Տիկինդ ալ թող գայ,
մերիններուն հետ քովի սենեակը
լաւ ժամանակ կ'ունենայ: Բայց
դուն խոստումէդ վազ պիտի չ'անց-
նիս: Ես քեալլայ կ'ուտեմ կամ ոչ՝
միեւնոյնն է, ընկերներս կը վայե-
լեն:

- Շատ աղէկ, մինչեւ Ամանոր
դեռ երկու շաբաթ կայ, գալ շաբթ-
ուայ մէջ կ'ուտենք քեալլան, միայն
թէ հոս, տունիդ մէջ, գիտես, ես եւ

տիկինս մէկ պզտիկ սենեակի մէջ
կ'ապրինք:

- Եղաւ Նիկօ, վաղը նկարչա-
կան գործիքդ ձեռքդ կ'ըլլայ:

Մեր այս ամբողջ գրոյցի ըն-
թացքին Նիկոյի կիրնը՝ Սարան
բերանը չբացեց: Միայն ստեպ առ
ստեպ, ամուսնուց աննկատ, կիսաժ-
պիտ, գրգռիչ ու յանդուգն հայ-
եացք էր ուղղում ինձ:

Մէկ շաբաթ յետոյ խոստաց-
ուած քեալլան չ'երեւաց մեր սեղա-
նին, ոչ էլ խօսք եղաւ այդ մասին:
Անշուշտ, ես կարողացայ տղաների
ձեռքից վերցնել Նիկոյի լուսան-
կարչական ապարատը եւ յանձնել
նրան՝ առանց ակնարկ անգամ անե-
լու քեալլայի մասին:

Նոր տարուց յետոյ Նիկոն
թողեց լուսանկարչութիւնը: Չդի-
մացաւ մրցակցութեանը եւ որոշեց
աշխատել աւտոդողերի գործարա-
նում: Նա վաղ առաւօտեան գնում
էր աշխատանքի եւ բաւական ուշ էր
վերադառնում: Գրեթէ ամէն օր
երեկոյեան ժամերին նա այցելում
էր մեզ, եւ համարեա ընթրիքի
ժամերին: Մշտապէս խեղճ Նիկոն
անօթի էր լինում եւ մեծագոյն
հաճոյքով վայելում էր մայրիկիս
պատրաստած կերակուրները: Նա
իրեն աւելի ազատ էր գզում մեր
տանը, քան իր տանը:

- Կնիկս կերակուր պատրաս-
տել չի գիտեր, - ասում էր նա ու
բնաւ չհետեւելով քաղաքավարու-
թեան կանոններին, ինչ ընկնում էր
ձեռքը՝ վայրկեանի մէջ կուլ էր
տալիս: Աւելին, կուշտուկուռ լա-
փելուց յետոյ, «ձեռքի հետ», սեղա-
նի վրայից վերցնում այն ամէնը՝
ինչ սովորաբար դժուար էր գտնել
խանութիւններում, ի մասնաւորի՝ մէկ-
երկու շիշ եգիպտական գարեջուր:

- Աս գարեջուրին արժէքը
դուք չէր գիտեր, իմ ծննդավայրէս
կու գայ՝ Աղեքսանդրիայէն: Գիտէք
չէ՞, ուր կը գտնուի այդ ծովեզրեայ
քաղաքը՝ Եգիպտոսի մէջ, հպարտ-
հպարտ ասում էր նա ու առանց
խայնելու, վերցնում էր մէկ-երկու
շիշ ու դուրս գալիս տնից՝ յաջորդ
օրերին նոյնը կրկնելու վճռակա-
մութեամբ:

Նիկոյի կնոջը՝ Սարային
հագուազիւտ կարելի էր տեսնել

Մար.ք էջ 38



ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՀԱՄԲԻԿ ԵՒ ՆԱՅԻԱ
ՍԱՐԱՑԵԱՆ

S.D.H.P. Central Committee Message

As 2011 becomes history, the world welcomes the New Year with new hopes and expectations along with the wish that the upcoming year will create better conditions for peaceful coexistence between nations and its peoples for a brighter future.

A most significant development in 2011 was the wave of mass protests that swept through the Arab world, resulting in the overthrow of long standing regimes that were once considered irreplaceable. However, these protests also paved the way for religious groups to gain considerable political power, which has become a major concern for the youth who have been advocating freedom and democracy.

The protest movements have also reached the western world, where the financial crisis has further deepened the economic disparity between the classes. These protests are primarily directed against the international financial and banking institutions considered to be responsible for the current world economic crisis. The successive economic collapses put many European countries on the brink, even threatening the very existence of the European Union.

During the past year Armenians all over the world marked the 20th anniversary of the independence of the third Republic of Armenia. However, even this proud occasion was not able to bring about a national jubilation. Armenia's unfavorable social, economic and political conditions have disappointed the nation's youth, who after twenty years of independence, were expecting to see a thriving country. Unemployment, imbalanced economic equality, and the absence of democratic and judicial equality are forcing many to seek opportunities in other countries. Emigration has reached catastrophic levels and yet the Armenian authorities have not done enough to prevent this phenomenon.

Artsakh remained the center of attention for all Armenians, receiving the ardent care of our people. International mediators failed to achieve the desired peace due to Azerbaijan's militaristic policy. Meanwhile, the Republic of Nagorno-Karabakh continues to be excluded from its worthy place at the negotiation table.

During 2012, the citizens of the Republic of Armenia will once again have the opportunity to go to the polls and vote for their new Parliamentarians in the National Assembly. It is the Armenian government's responsibility to restore the people's faith in their country by organizing free, fair and transparent elections that will ultimately yield a new Parliament that is truly representative of all segments of the population. Otherwise, we will face new upheavals, further disillusionment and a greater wave of emigration from the country.

Following the mutual freeze of the Armenian Turkish Protocols, the year ended with French National Assembly's approving a motion making it a crime to deny the Armenian Genocide. While commending the stance taken by French President and the National Assembly, we hope that the bill will be promptly approved by the French Senate, paving the way for it to become law. Until such time, the Armenian authorities along with the Armenian people, taking into consideration past examples, must refrain from expressing excessive exuberance.

Year 2012 is also the 125th anniversary of the founding of Social Democrat Hunchakian Party in 1887, the first national, political and revolutionary organization of the Armenian people. In the course of its entire history, the party served its people in its struggle for national liberation, sacrificing thousands of its most dedicated members. The party always remained faithful to its ideology and its principles in support of the Republic of Armenia.

This jubilee creates a new impetus for all party structures, sponsored organizations and institutions, to carry on their missions with renewed dedication.

On the eve of New Year, the Social Democratic Hunchakian Party once again reaffirms its belief in the notion that only through harmonious cooperation and collaboration can Armenia and the Diaspora overcome the serious challenges and the difficulties facing our nation. All of us are called upon to do our utmost in order for Armenia to truly become a country of liberty, justice, equality and democracy. This is the only way to keep the Armenian people attached to its land and establish a prosperous homeland.

We hope that the New Year brings peace to the world and that our homeland finds its rightful place among the progressive countries, while rallying around all Armenians scattered across the globe.

On this occasion, we wish the Armenian people a year full of successes and victories.

S.D. H. P. Central Committee



French Senate to Speed Up Vote on Armenian Genocide Bill

Aznavour and Other Intellectuals Call for Passage of the Bill



PARIS -- French media reports say France's upper house of parliament will vote this month on a bill to criminalize the denial of an Armenian Genocide.

The French lower house adopted the bill last month, prompting Turkey to recall its ambassador and suspend contacts and military cooperation with France.

If the bill passes the Senate, as expected, people who deny that the mass killings of Armenians by Ottoman Turks during World War I constituted genocide will face a one-year jail term and a fine of up to 45,000 euros (\$58,000).

Turkey has threatened a new round of retaliatory measures if the Senate passes the bill.

Intellectuals Call for Passage of the Bill

Famous singer Charles Aznavour, director Robert Guédiguian, lawyer Serge

Klarsfeld, philosophers Bernard-Henri Lévy and Michel Onfray, as well as Turkish writer Erol Özkoray have signed a joint appeal aiming to persuade the French Senate to ratify the the Armenian Genocide bill.

"As Elie Wiesel has written, the denial of the genocide is killing its victims for the second time. We welcome the adoption of the bill on racism, discrimination and denial by the French National Assembly on December 22.

Our target is the ban of denial on state level that the Turkish authorities bring up to France. In order the text to become a law, we call the French President, the government and the leading parties to confirm their gesture and let the Senate ratify the bill," reads the appeal published in Le Journal du Dimanche.

French Philosopher Bernard-Henri Lévy: Armenians Were Victims of a Methodic Attempt at Annihilation

"The law whose purpose is to penalize negationist revisionism, voted before Christmas by the French parliament, does not propose to write history in the place of historians. And this for the simple reason that this history has been told and written, well written, for a long time," French philosopher and writer Bernard-Henri Lévy writes in an article published in The Huffington Post.

"This we have always known: that, beginning in 1915, the Armenians were the victims of a methodic attempt at annihilation," the author writes. "In other words, this law has nothing to do with the will to establish a truth of state. No representative of the French National Assembly who voted for it saw himself as a substitute for historians or their work. Together, they only intended to recall this simple right, that of each of us not to be publicly attacked - and its corollary, the right to demand reparations for this particu-



larly outrageous offense which is the insult to the memory of the dead. It is a question of law, not one of history."

"Let us confront this specious line of argument with the wisdom of national representation. And may the senators complete the process by refusing to be intimidated by this little band of historians," Bernard-Henri Lévy concludes.

Campaign 2012: A Look Through the Armenian-American Lens

By Taniel Koushakjian



We are now less than a year away from the 2012 elections and the campaign trail is already heating up. The race for the white house has catapulted various GOP candidates to the top of the mountain, only to see them tumble from its peak. So far we have seen some historic debate gaffes, incredibly bold policy proposals and unorthodox candidates try to distinguish themselves from each other, all in an effort to be the anti-Romney; the presumptive GOP nominee. But this election season is going to be unlike any other. Fresh campaign tactics, new technologies, redistricting and the latest player in the political arena, the SuperPAC, are all poised to dramatically change the way Americans vote in 2012. And these factors will impact not only the presidential race. What we see in the presidential contest will be evident in congressional races as well.

So what does this all mean for the Armenian-American community? Let's take a look.

In congressional elections, for decades Armenian-Americans have been active in raising Armenian issues and concerns, upon which politicians compete for our vote. In recent years, the small but growing Turkish-American community has followed suit. From its peak in the 110th Congress, the Congressional Armenian Caucus boasted over 160 Members of Congress. Today it stands at 135 Members strong. At the same time, the Congressional Turkish Caucus grew its ranks from just over 60 in 2006, to 126 Members today, a 200% growth rate.

So far this year, 17 House Democrats and 9 House Republicans have announced their retirement or will not be seeking re-election in their present seat. The number of outright retirements can be attributed in large part to the redistricting process, a once a decade phenomenon. The announced retirement of Rep. Barney Frank (D-MA), a strong leader on Armenian issues, is a prime example. Additional retirement announcements can be expected in the coming weeks.

As of this writing, the Armenian Caucus is set to lose 9 Members: Representatives Lynn Woolsey (D-CA), Dennis Cardoza (D-CA), Jerry Costello (D-IL), John Olver (D-MA), Barney Frank (D-MA) and Dan Kildee (D-MI) have all announced retirement. Congressman Kildee's nephew, Dale Kildee, is a candidate for his uncle's seat. In addition, three Armenian Caucus Members are running for other office: Rep. Bob Filner (D-CA) is running for mayor of San Diego, Rep. Chris Murphy (D-CT) is running to replace Joe Lieberman (I-CT) in the Senate and Rep. Shelly Berkeley (D-NV) is also running for the Senate. As of this writing, the Congressional Turkish Caucus is set to lose 7 Members: Reps. Mike Ross (D-AR), Dan Boren (D-OK) and Geoff Davis (R-KY) are retiring outright, while Reps. Connie Mack (R-FL), Denny Rehberg (R-MT) and Jeff Flake (R-AZ) are all running for the Senate. Rep. Mike Pence (R-IN) is running for Governor. Mack, Flake and Pence all sit on the House Foreign Affairs Committee where they

voted against the Armenian Genocide resolution in 2007 and 2010.

Redistricting has resulted in some of the above retirements, but it is also putting pro-Armenian incumbents in head-to-head battles and making re-election much more difficult for others. Looking at congressional champions of Armenian issues, Armenian Caucus Co-Chair Frank Pallone, Jr. (D-NJ) and Armenian Genocide resolution sponsor Adam Schiff (D-CA) have not been adversely affected by redistricting. However, Armenian Caucus Co-Chair Ed Royce (R-CA) and Armenian Genocide resolution sponsor Robert Dold (R-IL) are not as fortunate. Redistricting has made Dold's seat bluer, and given his narrow victory in 2010, he is a top target for Democrats in 2012. Congressman Ed Royce has also been victimized by redistricting, putting him in a dual-incumbent battle with Armenian Caucus Rep. Gary Miller (R-CA). In New Jersey, reports indicate that Armenian Caucus Member Steven Rothman (D-NJ) has decided to challenge his colleague, fellow Armenian Caucus member Bill Pascrell (D-NJ) in the redrawn 9th Congressional district, setting up a costly dual-incumbent primary.

The most prominent tete-a-tete battle to result from redistricting has put two pro-Armenian (and pro-Israel) incumbents in the same district: House Foreign Affairs Committee Ranking Member Howard Berman (D-CA) and House Foreign Affairs member Brad Sherman (D-CA), both champions on Armenian issues. Rep. Berman has a decades-long record on Armenian issues, particularly the Armenian Genocide. Congressman Berman has a similarly strong record and as Chairman of the Foreign Affairs Committee in 2010, ensured the successful passage of H. Res. 252, the Armenian Genocide resolution. While Sherman has ratcheted up over 30 endorsements from House colleagues, Berman has the backing of three SuperPACs. A product of the 2010 Citizens United vs. FEC Supreme Court ruling, SuperPACs are independent expenditure only committees that can raise and spend unlimited amounts of money.

In addition to working with our friends in Congress, electing Arme-

nian-Americans is long overdue. This year we saw a new face emerge, Oregon Labor Commissioner Brad Avakian who sought the Democratic nomination for the 1st Congressional district. Although unsuccessful, he was able to garner 22% of the vote in the primary, no small feat. As of this writing, only one Armenian-American has officially filed papers to run for Congress, while another is preparing to jump in: David Krikorian and Danny Tarkanian, respectively.

David Krikorian is no stranger to Armenians, having unsuccessfully challenged Rep. Jean Schmidt (R-OH) in 2008 and 2010. Schmidt, the top recipient of Turkish PAC money, filed a complaint against Krikorian with the Ohio Elections Commission (OEC) after Krikorian accused her of taking Turkish "blood money" on campaign advertisements in the 2010 race. The OEC ruled in Schmidt's favor. However, following the election, the House Ethics Committee began an investigation into the free legal services provided to Rep. Schmidt by the Turkish American Legal Defense Fund and the Turkish Coalition of American. Although the House Ethics Committee found no wrong doing on Schmidt's part, she was ordered to repay the \$500,000 legal bill and amend her financial forms to reflect this in-kind contribution. According to a December report in Roll Call, Schmidt "has yet to amend her financial disclosures or begin repaying the debt."

Danny Tarkanian, the son of University of Las Vegas basketball coach Jerry Tarkanian, is preparing to run in the new 4th district of Nevada. According to a December poll by the conservative Public Opinion Strategies, Tarkanian overwhelmingly leads his primary challenger (73% to 9%) and when matched up with the Democratic front-runner, he holds an 11-point advantage. Tarkanian has not officially filed and

has stated that he will announce his intentions in January.

Turning to the presidential race, we have President Obama, whose record on Armenian issues is not unfamiliar. Obama deserves acknowledgement for his audacity to speak about the Armenian Genocide inside the Turkish Parliament, something no U.S. President has ever dared, and for overseeing the signing of historic Protocols by Turkey and Armenia. However, his broken promise of employing the proper term, Armenian Genocide, in the annual April 24 statement, as well his policies toward Azerbaijan, from disproportionate military funding to Ambassador Bryza's recess appointment, leaves many Armenian-Americans skeptical.

Looking at the GOP field today, we have two front-runners: Mitt Romney and Newt Gingrich. Neither can be viewed as favorable through the Armenian-American lens. During Clinton's second term, then-Speaker Gingrich built a leadership team that consisted of Dick Arme, Robert Livingston, and Dennis Hastert; all of who went on to lobby on behalf of Turkey against U.S. reaffirmation of the Armenian Genocide. Turning to Mitt Romney, it was positive to see pro-Armenian officials, such as former Senator Robert Dole (R-KS), Senator Mark Kirk (R-IL) and former Congresswoman Susan Molinari (R-NY), endorse Romney for the GOP nomination. However, from a legislative standpoint, it is cause for concern that Senator Roy Blunt (R-MO) is his Congressional liaison. In 2007, Blunt, then-House Republic Whip, was appointed by President Bush to the Foreign Affairs Committee the day before a vote on the Armenian Genocide resolution, in order to whip his Republican colleagues to vote against the bill. Recently, Senator Blunt won a top post, securing his position within the Republican Senate leadership, and is working to rake up Congressional support for Romney.

It's definitely too early to say what is going to happen between now and November 6, especially in the race to the White House. While the focus is on the Republican primaries, Democrats are activating their grassroots in what is likely to become one of the nastiest and most expensive campaign seasons ever. In politics, anything is possible and there is certainly a long road ahead. In the meantime, it is critical that Armenian-Americans know where our elected officials stand, with whom they are associated, and their record in support or opposition to Armenian issues.

Twitter: @Taniel_Shant

*Merry Christmas &
Happy New Year*

On the Armenian Genocide: The Response of a Handful of Historians

By Bernard-Henri Lévy (French philosopher; Writer)


Are these people really incapable of comprehending? Or are they just pretending not to understand?

The law whose purpose is to penalize negationist revisionism, voted before Christmas by the French parliament, does not propose to write history in the place of historians. And this for the simple reason that this history has been told and written, well written, for a long time. This we have always known: that, beginning in 1915, the Armenians were the victims of a methodic attempt at annihilation. A wealth of literature has been devoted to the subject, based in particular upon the confessions offered by the Turkish criminals themselves, starting with Hoca Ilyas Sami, almost immediately after the fact. From Yehuda Bauer to Raul Hilberg, from researchers at Yad Vashem to Yves Ternon and others, no serious historian casts doubt upon this reality or denies it. In other words, this law has nothing to do with the will to establish a truth of state. No representative of the French National Assembly who voted for it saw himself as a substitute for historians or their work. Together, they only intended to recall this simple right, that of each of us not to be publicly attacked -- and its corollary, the right to demand reparations for this particularly outrageous offense which is the insult to the memory of the dead. It is a question of law, not one of history.

Presenting this law as one that denies liberty, one likely to hamper the work of historians is another strange argument that makes one wonder. It is the negationist revisionists who, up until now, have hampered the work of historians. It is their mad ideas, their

hare-brained concepts, their twisting of facts, their terrifying and breathtaking lies that shake the earth upon which, in principle, a science should be built. And in punishing them, making their task more complicated, alerting the public that it is dealing not with scholars but with those who would enflame minds, that the law protects and shelters history. Is there one historian who has been prevented from working on the Shoah by the Gayssot law punishing denial of the Holocaust? Is there one author who, in good conscience, can claim that it has limited his freedom to do research and to raise questions? And isn't it clear that the only ones this law has seriously hindered are the Faurissons, the Irvings, and the other Le Pens? Well, the same applies to the genocide of the Armenians. This law, when the Senate will have ratified it, will be a stroke of fortune for historians, who can finally work in peace. Unless... Yes, unless those who oppose the law express this other, cloudier reservation: that it would be a bit premature to come to a conclusion, precisely and for nearly a century, of "genocide".

Some still say, isn't there some other way than the law to intimidate the "assassins on paper"? And hasn't the truth in itself, in its starkness and its rigour, the means to defend itself and to triumph over those who would deny it? It is a vast debate, one which has been discussed, in parenthesis, since the origins of philosophy. And to which one adds, in the case at hand, a specific parameter stating that, when in doubt, it is prudent to make sure one is backed up by the law. This parameter is the negationist revisionism of



the Turkish State. And this specificity is that the negationists there are not just a vague bunch of cranks, but people who are supported by resources, diplomacy, the capacity for blackmail and retaliation of a powerful State. Imagine the situation of the survivors of the Shoah had the German State been a negationist State after the war. Imagine the immensity of their additional distress and anger had they been confronted, not with a sect of loonies, but with an unrepentant Germany that brought pressure upon their partners by threatening them with angry retaliation should they call the extermination of the Jews at Auschwitz genocide. It is, mutatis mutandis, the situation of the Armenians. And that is also why they have the right to a law.

And finally, I would add that it's time to stop mixing everything up and drowning the Armenian tragedy in the ritualized blahblahblah assailing the "memorial laws". For this law is not a memorial law. It is not one of those dangerous power plays capable of laying the path for dozens if not hundreds of absurd or blackguardly rules, codifying what one has the right to say about the Saint Bartholomew's Day

Մեծ հայր-թոռնիկ այս խօսակցութեան ներկայ է անշուշտ տիկին Հռիփը, որու համար պատշաճութեան օրէնքները... իմաստ չունին անշուշտ. «ի՞նչ կ'ըլլայ որ... եթէ մտիկ ընէ այս բոլորը. չէ՞ որ տէր պապային ընտանիքին բարեկամն է ինք...»:

Կրնանք երկարել այցելութիւնը, մասնաւոր ընելիք մըն ալ չունինք տիկինս եւ ես, Շաբաթ օր է, բայց աւելի երկար եթէ մնանք, քանի մը դժգոհութիւն կամ կարճ գանգատ եւս պիտի լսենք. ուրեմն՝ յարմար է կարճ կապել այցելութիւնը:

Դուրսն ենք:

- Տարօրինակ են ծերերը, կ'ըսէ կինս: Հարիւրը անցեր է, տակաւին շաքարի-մաքարի մասին մտահոգութիւն ունի, դեղ կ'ուզէ, սա կ'ուզէ, նա կ'ուզէ...: Փառք թող տայ Աստուծոյ, որ ողջ է, ան ալ՝ Ամերիկայի մէջ...:

Տիկինս արդարացի է: Ես մեծցայ տան մը մէջ, ուր մեծ հայրս, մօրս կողմէն մեծ մայրս, հօրաքոյրս ալ կ'ապրէին: Մնայուն հարց մըն էր ինծի համար, թէ հօրս ու մօրս ծանր աշխատանքին կողքին, վաթսուն տարեկանը նոր անցած սա մարդը ինչ կ'ընէր օրուան ընթացքին՝ երբ ամէն էրիկ մարդ կ'աշխատէր տեղ մը: Բնական իրաւունքի պէս հանգիստ կենք մը պարգեւեր էին իրեն իր հարազատները եւ առանց հարցադրումի: Կը յիշեմ որ կէսօրուան ճաշէն ետք՝ հանգիստ պէտք էր

ընել եւ մենք՝ փոքրերս, ձայն պէտք չէ հանէինք: Քալելու կ'երթար այնթապցի Գէորգ աղան՝ էշրեֆիէի մեր թաղամասին հայ խանութպաններուն այցելելով՝ առանց անապարանքի, հանդարտ քալուածքով մը... որ չյոգնէր. ամբողջ կէսօրէ ետքը անվնաս այցելու կու տար սա կամ նա խանութպանին՝ թաղին միւս տարիքոտներուն նման: Երեկոյեան ժամը իննին անկողին կը մտնէր: Այս էր իր կենքի հոլովոյթը: Միշտ առողջ էր կարծեմ, եւ մտահոգութիւն կոչուած բանը անծանօթ էր երջանիկ այս մարդուն համար...:

- Է՛հ, ի՞նչ ընենք... իր ալ մտահոգութիւնը այս է կ'երեւի այս տարիքին, ե՞րբ լուրջ բանով մը մտահոգուէր է կենքին ընթացքին. «առողջութիւն ըլլայ ուրիշ բան չեմ ուզեր արդէն», չէ՞ր ըսեր միշտ. իր հերթն է կարծես առողջութիւն պահպանելը... ու հագիւթէ խօսքս վերջացուցած,

- Պարոն, պարոն կը յարէ տիկինը: Պարոն, քիչ մը անդինը հիւանդ մը կայ, կ'ըսեն կոր որ շատ կարեւոր գրող է եղեր: Եկէք, ձեզի հոն տանիմ, կը պնդէ ան:

Փաստօրէն, անուես չի գիտեր այս կինը. բայց օգտակար եւ հաճելի ըլլալու աւելորդ պատրաստակամութիւն մը կայ իր մօտ.

- Ի՞նչ գրող, ի՞նչ հիւանդ, կը հարցնեմ խուսափելու զգալի ճիգով մը. ապա՝

- Ո՞վ է, ի՞նչ է անունը հասկցե՞ր ես...:

Ձինք նեղը դնելով լուցնելու փորձ մըն է ըրածս, մանաւանդ որ դէմքս կնոջս դարձուցած՝ զինք մտիկ չընել կը ձեւակերպեմ.

-Գիտեմ որ Նիւ ձըրգիէն բե-

րեր են, ամմա անո՛ւնը... կարծեմ Բենիամին է - Մենեամին է, ինչ է, վստահ չեն: Դուռին վրայ գրուած է անունը:

Եւ մեզ կ'առաջնորդէ դէպի «կարեւոր գրողին» սենեակը:

Ու սենեակներուն առջեւն կը յառաջանանք:

- Քանի մը օր առաջ պարոն Անդրէասեանը եկաւ իր կնիկին՝ տիկին Ազատուհիին հետ եւ քովերնին ծերուկ մարդ մըն ալ կար, չեմ գիտեր ով էր...:

Հարցը քիչ մը լրջանալ սկսաւ: Եթէ Անդրանիկ Անդրէասեանը Ազատուհիին հետ այցելել է այդ գրողին՝ տիկին Հռիփը վստահաբար հաճելի անակնկալ մը ունի տալիք... անգիտակցաբար: Իսկ քովի «ծերուկ մա՞րդը»: Իր հետ կարճ ծանօթութենէն հասկցած եմ որ Անդրէասեան կենքին մէջ ինքնաշարժ չէ վարած. զինք ասդին անդին տանողը ընդհանրապէս իր մտերիմը՝ Ալեք Գլըճեանը եղած է, որու համար մարդու օգնելն իսկ երջանկութիւն է, ուր մնաց՝ Անդրանիկը գոհ պահելը...:

Դուռ մը կը բացուի.

- Նայէ, նայէ, ահա քեզի ուրիշ հիւր մը բերի. տէր Շահէին ազգականն է, պարոն Անդրանիկին գիտէ կոր:

Ներսն ենք: Նեղ առանձնասենեակ մը, ձախին՝ անկողին մը ու մէջը՝ նստած եւ ճաղատ գլուխը ձիգ վեր բռնած մարդ մը, վիզին մկանները պրկուած, անշարժ, որ սֆիքսը յիշեցնող բան մը ունի:

Աստուած իմ, գիրքերու եւ թերթերու մէջ իմ տեսած Բենիամին Նուրիկեանն է՝ կոյրի դի-

Շաբ.ը էջ 38



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՀԷ ԵՒ ՄԱՐՕ ԱՉԱՊԱՀԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2012

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ԿԻԼԻԿԵԱՆ ԹԵՄԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ (1970-1990)

ԴՈԿՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Թէեւ ժամանակավրէպ եւ ապարդիւն նկատուի ներկայ գրութիւնը, սակայն Ամերիկահայ Թեմի պատմութեան համար ուսանելի կը գտնեմ զայն, անձնապէս որպէս մասնակից եւ գործակից ըլլալով կատարուած քսան տարիներու աշխատանքներուն: Նոյն այդ շրջանին ութ տարիներ երկու շրջանի համար, անդամ էի Ամերիկայի Արեւելեան Թեմի Թեմական Խորհուրդին, միեւնոյն ատեն ստանձնելով Խորհուրդին ատենադպիրի պաշտօնը Թորոնթո Արքեպս. Մանուկեանի առաջնորդութեան տարիներուն:

Հայ Եկեղեցւոյ կառուցչին հակառակ Ամերիկահայ կանոնական թեմի կողքին 1957 թուականէն սկսեալ գոյութեան եկած էր Կիլիկեան թեմը եւս՝ Անթիլիասի իրաւասութեան ներքեւ՝ հակառակ Մայր Աթոռի գիտութեան եւ Երջան. Ամենայն Հայոց Վազգէն Կաթողիկոսի կամքին:

1968 ապրիլ 28ին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետ օծումը կատարեց Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարին պատէճ առիթը ընծայուեցաւ որ իր արտօնութեամբ բանակցութիւններ սկսէին Մայր Աթոռի եւ Կիլիկեան թեմերուն միջեւ թեմական մակարդակի վրայ, միակ նպատակ ունենալով միացնելու Ամերիկահայ Թեմը՝ իրաւասութեանը ներքեւ Ամենայն Հայոց Հայրապետութեան ի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Երկուստեք գոյացած համաձայնութեամբ երկարամեայ բանակցութիւններ սկսան թեմերու ներկայացուցչական յանձնախումբերու կողմէ, որոնք տեւեցին ուղիղ քսան տարիներ եւ սակայն յանգեցան ապարդիւն վախճանի մը: Հարկ է անմիջապէս հաստատել որ երկուստեք նշանակուած իննական անդամներու յարատեւ աշխատանքը գլխաւոր մասամբ եղաւ անկեղծ, ուղիղ, սրտբաց եւ սրտցաւ միան-

գամայն, երբ երկու յանձնախումբերը տրամադրեցին անդուլ աշխատանք եւ անհաշիւ ժամանակ օրինաւորապէս որոնելու ուղիներ ու արահետներ, յուսալով որ օր թերեւս մը կրնային միանալ երկու թեմերը:

Այդ օրերուն, որպէս 1956 թուի տազնապի օրերու վկաներէն մին եւ միաբան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, անձնապէս կը զգուշացնէի ժողովականները որ նման բանակցութիւններ ժամավաճառութիւն պիտի ըլլային պարզապէս, որոնք ի վերջոյ պիտի մնային ապարդիւն, եւ սակայն «փորձ մըն է որուն կ'արժէ ընթացք տալ» կ'ըսէին: Եւ այդ փորձը եղաւ:

Վերապահումներ, թերահաւատութիւններ, ու երբեմն ալ իսկական խոչնդոտներ յաճախ ձգձգեցին ժողովներու արդիւնաւոր գումարումները, քանի որ առնուելիք քայլերը ի վերջոյ պիտի ենթարկուէին եկեղեցական կեդրոններուն, Մայր Աթոռ եւ Անթիլիաս, ու անոնց հաւանութեամբ պիտի իրագործուէին:

Առաջին քայլերը առնուեցան թեմակալ առաջնորդ Թորոնթո արքեպիսկոպոս Մանուկեանի եւ Թեմական Խորհուրդին կողմէ, երբ առաջնորդը իր 1969 սեպտեմբեր 16 թուակիր պաշտօնագրով տեղեկացուց Կիլիկեան թեմի առաջնորդ Հրանդ արքեպիսկոպոս Խաչատուրեանին բանակցութեանց յատուկ յանձնախումբին կազմը, առաջարկելով որ իրենք եւս պատրաստեն իննանուն ցանկ մը որպէսզի բանակցութիւնները սկսէին: Ամիսներ ետք, 1970 մայիս 18 թուակիր պաշտօնագրով կը հասնէր պատասխանն ու նշանակեալ ինը հոգինոց յանձնախումբի անունները:

ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄ

Միացեալ յանձնախումբերու առաջին ժողովը կը գումարուէր 1971 ապրիլ 17ին Եօթնական անդամներու մասնակցութեամբ ուր համաձայն կը գտնուէին հետեւեալ

երկու հիմնական եւ անառարկելի պայմաններուն, որոնց վրայ կարելի պիտի ըլլար յառաջացնել բանակցութիւնները: Այդ երկու պայմաններն էին.

Առաջին, Ամերիկայի առաջնորդութիւնը ենթակայ կը մնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան.

Երկրորդ, թեմը կ'ունենայ միակ կեդրոնական առաջնորդարան մը մէկ առաջնորդով որ ինքնին ենթակայ պիտի ըլլայ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Մայիս 22-ի երկրորդ ժողովին սակայն, Կիլիկեան թեմի ներկայացուցիչները ետ քաշուեցան պատասխանատու որոշումներ առնելէ, առարկելով որ բանակցութիւնները յառաջ տանող սկզբունքները հարկ էր որ «վերին մարմիններու կողմէ ընդունուէի նկատուէին»: Անցան ամիսներ եւ Ամերիկահայ Թեմի ներկայացուցիչները վերատեսութեան ենթարկելով առարկելի կէտերը, աւելի նպաստաւոր դարձուցին բանակցութեանց ընթացքը: Սակայն այս եւս երկար չտեւեց ու մինչեւ 1972ի վերջը երկու յանձնախումբերը ժողովի չկրցան նստիլ: Ի վերջոյ սակայն Ամերիկահայ Թեմը ներկայացնող յանձնախումբերը համաձայնաբար օրինագիծ-ուղեցոյց մը պատրաստեցին զայն ենթարկելու համար երկու թեմերու թեմական խորհուրդներու վաւերացման:

ՕՐԻՆԱԳԻԾ - ՈՒՂԵՑՈՅՑ

1973 ապրիլ 12ի նիստին Ամերիկահայ Թեմի Թեմական Խորհուրդը քննելէ եւ թելադրութիւններ կատարելէ ետք, յանձնարարեց իր յանձնախումբին զայն անգամ մը եւս բերելու միացեալ ժողովին ու մի- ասնաբար ընդունելու այդ ուղեգիծը: Նոյն ուղեգիծը զրկուեցաւ նաեւ Կիլիկեան Թեմին, նոյնը հոն եւս կատարելու համար, ուրկէ սակայն օգոստոս 20 թուակիր նամակով բանակցութեանց յետաձգում առաջարկուեցաւ, պատճա-

ռաբանելով իրենց նորընտիր առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սարգիսեանի ժամանումը:

Կարեւոր հանգրուանի մը հասեր էին զոյգ յանձնախումբերը, մանրագնին կերպով շարադրելով վերոյիշեալ «ուղեցոյց»ը որուն համաձայն յետագայ քայլերը կանոնաւոր կերպով պիտի առնուէին: Սակայն ինչ որ հասաւ Կիլիկեան թեմէն 1974 փետրուար 19ին, նորահնար եւ միակողմանի ուղեգիծ մըն էր, տարբեր միացեալ յանձնախումբերու որդեգրածէն, որ կուտար առաջին ազդանշանը շեղելու իսկական միացման ճիգերէն, քանի որ այդ ուղեգիծը «միութիւն համագործակցութեամբ» սկզբունքը առաջ կը քշէր, բան մը որ անընդունելի պիտի ըլլար Մայր Աթոռի Թեմին համար, քանի որ համագործակցութիւնը միութիւն չէ:

Բացատրելի կը մնայ այս կէտը անշուշտ, որովհետեւ Կիլիկեան թեմին փնտռածը համագործակցութիւնն էր, ուր հոն կանգ առնելով ու անջատ մնալով, «միութիւն» մը պիտի գոյանար ըստ իրենց, առանց սակայն իսկական վարչական եւ թեմական միութեան որուն համար կը բանակցէին երկուստեք: Թեմական խորհուրդի երեք անդամներ, Զաւէն Ծ. վարդապետ Արզումանեան, Տաճատ քահանայ Դաւիթեան եւ ատենապետ դատաւոր Ճան Նաճարեան, նամակ մը խմբագրեցին հրաւիրելով Կիլիկեան Թեմի թեմական խորհուրդը վերադառնալու նախորդ համաձայնագրի ոգիին եւ բովանդակութեան ու շարունակելու սկսուած գործը:

1974 յուլիսին միացեալ յանձնախումբերու գումարած ժողովը կրկին ձեռք առաւ ուղեցոյցի վերախմբագրման գործը: Երկար ժամանակ տեւեց մինչեւ որ միացեալ յանձնախումբերու միջեւ խմբագրուած ուղեցոյցը վերջնական ձեւ ստանար: 1976ի Արեւելեան Թեմի Թեմական Պատգամաւորական Ժո-

Շար.ը էջ 27



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԿԵՐԻ ԵՒ ՍՈՒՉԱՆՆԱ ՄԻՆԱՆԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ԿԻԼԻԿԵԱՆ ԹԵՄԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ (1970-1990)

Շարունակում է շ 26-էն

ղովին ներկայացուելով չիշեալ ուղեցոյցը, ժողովը գայն որդեգրեց թեմական խորհուրդին կողմէ կցեալ յանձնարարութիւններով միասին: Նոյն տարին Կիլիկեան Թեմի Պատգամաւորական ժողովը եւս որդեգրեց նոյն ուղեցոյցը, առանց ընդունելու սակայն թեմական խորհուրդին «կցեալ» տեսակէտները:

«ՄԻԱՅԵԱԼ» ԹԵՄԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յաջորդ հանգրուանը պիտի ըլլար միացեալ թեմի կազմական կանոնագրութեան խմբագրումն ու որդեգրումը երկու թեմերուն կողմէ, որուն վրայ թեմերը պիտի կարենային օրինաւորապէս միանալ՝ համաձայն ուղեցոյցի տրամադրութեանց: Այս ուղղութեամբ Մայր Աթոռի էջմիածնական թեմի կողմէ կազմուեցաւ եօթ հոգինոց կանոնագրութեան յանձնախումբ մը, երեք հոգեւորականներէ եւ չորս աշխարհականներէ բաղկացած, որ պիտի փոխարինէր մինչ այդ գործող յանձնախումբը: Նոյն առաջարկը գրաւոր կերպով ներկայացուեցաւ Կիլիկեան Թեմի յանձնախումբին, եւ սակայն մերժում ստացուեցաւ այն առարկութեամբ որ չէին յարգուած «համագործակցութեան» համար առնուելիք այն քայլերը որոնք ուղեցոյցին մէջ նախատեսուած էին, ինչպէս, ուսումնական ծրագիրներու միացեալ պատրաստութիւնն ու Ապրիլեան Եղեռնի միացեալ ոգեկոչումը, մոռնալով սակայն որ անոնք պիտի կատարուէին միացեալ թեմի կազմական կանոնագրութեան երկուստեք ընդունուելէն ետք միայն:

1981 յուլիսէն 1982 մայիս, զոյգ յանձնախումբերը հինգ յաջորդական նիստեր գումարելով խմբագրեցին եւ ընդունեցին ուղեցոյցի նոր բնագիր մը զոր ենթարկեցին թեմերու թեմական խորհուրդներուն: Էջմիածնական Թեմի 1982 թուի թեմական պատգամաւորական ժողովը վաւերացուց գայն, այն պայմանաւ որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւս

վաւերացնէր գայն: Նոր ուղեցոյցը կը բաղկանար հակիրճ նախաբանէ մը, որուն կը յաջորդէր բովանդակութեան կառուցը եւ գործադրութեան համար մանրամասնեալ ծրագիրը՝ իր վեց ստորաբաժանեալ յօդուածներով: Կը ճշդուէր թէ երկու թեմերը պիտի միանային վարչական գետնի վրայ ու որպէս մէկ միաւոր դառնար Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ենթակայ թեմ ինչպէս անցեալին՝ հաստատուած Մկրտիչ Ա խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն:

Հոն նախատեսուած էր օրինական ձեւն ու կերպը միացեալ թեմի առաջնորդի ընտրութեան, եւ թեմին ունենալիք յարգալից յարաբերութիւնը Կիլիկիոյ Աթոռին հետ: Ուղեցոյցին ընձեռած գործադրութեան կերպն ալ մանրամասնօրէն եւ հետեւողական կերպով ծրագրուած էր գործակցութեան, կանոնագրութեան խմբագրման, միեւնոյն թուականին եւ միեւնոյն վայրին մէջ երկու թեմերու առանձին թեմական ժողովներու վերջին անգամ գումարման՝ 1983 թուականի Յունուար 15էն առաջ, կանոնագրութեան երկուստեք ընդունման, ու անոր Ամենայն Հայոց եւ Կիլիկիոյ Կաթողիկոսներու կողմէ վաւերացման յաջորդական քայլերով: 1982ի ուղեցոյցը որդեգրուեցաւ նաեւ Կիլիկեան Թեմի Պատգամաւորական ժողովին կողմէ, ինչ որ լաւ նշան մը կը նկատուէր յառաջացող բանակցութեանց ճամբուն վրայ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ԴԻՐՔԸ

Ամերիկահայ Թեմի թեմական խորհուրդը այդ ուղեցոյցը իսկոյն յղեց Մայր Աթոռ, եւ հաւանաբար նոյնը ըրին նաեւ միւսները՝ ուղեցոյցը ղրկելով Անթիլիաս, ուրկէ պիտի հասնէին իւրաքանչիւրին հաւանութիւնը եւ կամ բացատրութիւնները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրաւորապէս կը պատասխանէր իր Յուլիս 14 թուակիրով, եւ զնահատելով հանդերձ ուղեցոյցին համար տարուած խղճամիտ աշխատանքը կը թելադրէր որ Կիլիկիոյ

կաթողիկոսութեան յատուկ յօդուածները վերցուէին գրութանց մէջէն, նկատի ունենալով որ երկու աթոռներու միջեւ եղած անհամաձայնութիւնները իրենց յատուկ մակարդակին վրայ պէտք է լուծուէին, քան թէ թեմական մակարդակի վրայ:

Ակնարկուած յօդուածները մասնաւոր դիտարկութեամբ դրուած էին հոն որպէսզի աւելի նպաստաւոր եւ ապահով ըլլար Անթիլիասական Թեմին ուղղեալ հրահանգը, թէ՛ թեմին եւ թէ՛ Կիլիկիոյ Աթոռին ի նպաստ: Մայր Աթոռի դիտողութիւնը տրամաբանական էր այնուհանդերձ, ու չէր խանգարեր կատարուած միացման ճիգերը, եւ սակայն շատ դիւրաւ որպէս պատրուակ պիտի ծառայէր անհարկի ձգձգման:

Թեմական խորհուրդը լրջօրէն նկատի առնելով եղած հայրապետական դիտողութիւնը, իսկոյն պատգամաւորութիւն մը յղեց Մայր Աթոռ, զլիաւորութեամբ թեմակալ առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի, որուն կ'ընկերակցէին թեմական խորհուրդի ատենապետ Մամբրէ քահանայ Գուգուեան, եւ թեմերու միացման յանձնախումբի ատենապետ՝ դատաւոր ձան Նաճարեան, որոնք 1982ի Օգոստոս 29էն Սեպտեմբեր 6 խորհրդակցութիւններ ունեցան վազգէն Կաթողիկոսի հետ: Ասոր արդիւնքը մնաց նոյնը, եւ Կաթողիկոսը իր տեսակէտին վրայ մնաց, սրտագինս յանձնարարելով որ բանակցութիւնները երկու թեմերուն միջեւ յաջողութեամբ շարունակուէին ու արդիւնաւորուէին:

ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՒՆ ԴԻՐՔԸ

Միւս կողմէ Կիլիկեան Թեմն ալ պատգամաւորութիւն մը ղրկեց Անթիլիաս, տեղեկացնելու համար 1982ի ուղեցոյցն ու անոր նկատմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիրքն ու յանձնարարութիւնները, ուրկէ սակայն հասան խնդրոյն նկատմամբ անյարիբ բացատրութիւններ: Թէեւ ի վերջոյ բանակցութեանց յաջորդ կարեւոր քայլը առնուեցաւ զոյգ յանձ-

նախումբերուն կողմէ, պատրաստութեամբը «միացեալ» թեմին ներքին նոր կանոնագրութեան, ամենայն բժախնդրութեամբ հայերէն եւ անգլերէն լեզուներով, զոր եւ ներկայացուցին երկու թեմական Պատգամաւորական ժողովներուն:

Ի վերջոյ սակայն տարիներու ճիգը ձախողութեան մատնուեցաւ երբ հասկնալի եղաւ որ Կիլիկեան Թեմի ժողովը կանոնագրութեան կարեւոր մի քանի յօդուածները բոլորովին ջնջել եւ կամ այլափոխել պահանջած էր, խնդրոյ առարկայ ընելով նաեւ Գանատայի իրենց եկեղեցիներու դիրքը, որոնք մաս կը կազմէին իրենց թեմին եւ որոնք սակայն չէին համաձայնեցրել թեմերու միացման գործընթացին: Հոս արդէն կանգ կ'առնէին բանակցութիւնները անելի մատնելով զանոնք:

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԹԵՄԻ ՀԱՐԻՐԱՄԱՆԿ

1998ին, Ամերիկահայ Թեմի հաստատման 100-ամեակին այլեւս երջանիկ երազ մըն էր որ թեմերը միանային Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ կատարուած յոբելինական հանդիսութեանց բարեպատեհ առիթով, նախագահութեամբը Երջան. Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին որ անձամբ Նախ Եորք եկած էր այդ առիթով: Գարեգին Կաթողիկոս սկիզբի օրերէն զլիաւոր դերակատարներէն մին ըլլալով բաժանումին, ըլլալով նաեւ նախկին առաջնորդը Ամերիկայի բաժանեալ թեմին, եւ շատ լաւ գիտնալով կացութիւնը, եւ անցնելով մէկ Աթոռէն Միւս Աթոռը, թողուց այն տպաւորութիւնը թէ հեղինակութիւնը կ'ունենար միջամտելու՝ ինքն իսկ գիտնալով հանդերձ թէ նոյն երազը պիտի կրկնուէր:

Յիրաւի, ամենէն լաւ առիթն էր հարիւրամեակի այդ տարին, երբ Կիլիկիոյ Կաթողիկոսին ներկայութեամբն իսկ երկուստեք յայտարարէին երջանիկ լուրը, սակայն այդ եւս պիտի ըլլար երրորդը երազներու շարքին, բոլորիս շատ յայտնի պատճառներով:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՄԻՀՐԱՆ ԵՒ ԹԱՄԱՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ



ՆԱԲԱՍԱՐԴ ԼԵՐԱՆ ԼԱՆՁԻՆ

(«ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ ՄՈՒՍԱՆԵՐԻ ԼԵՐԱՆ ՇԷՆ» ՀԱՏՈՐԻՑ ԿՐՃԱՏՈՒԱԾ ՄԻ ՀԱՏՈՒԱԾ) ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Իրենց աշխարհի լեռների քա-
րայծների մորթուց պատած թմբուկ-
ներն էին որոտում, փողեր հնչում,
հարիւր, հարիւր մարդիկ իրենց
մանչերի հետ հայոց Արքային էին
դիմաւորում: Թմբուկի յաղթ գար-
կերի որոտից, Արքայի, Վարդանի,
Բագարատի նժոյգներն էին երկու
ոտքերը վեր բարձրացրած բարեւի
կանգնել: Շէնի մարդիկ խոնարհե-
լով Արքայի, Վարդանի ու Բագա-
րատի առաջ, բարձր կանչել էին.

- Փառք արմէնների աշխար-
հի Արքաների Արքայ Տիգրանին:

Թմբուկների խրոխտ գարկե-
րով, Արքային ու նրան ուղեկցող-
ներին առաջնորդել էին լեռան
լանջ: Տները դիմացի ճանապարհի
եզրի ձիթենիների, թզենիների հո-
վանու տակ եղէգից հիւսուած աթոռ-
ներ ու սեղաններ էին: Պարոյրը,
Տիգրան Արքային, ծովակալ Վար-
դանին, Փոխ Արքայ Բագարատին
հրաւիրել էր նրանց համար պատ-
րաստուած սեղանին: Այդ եւ միւս
սեղանների վրայ շէնի լանջի դա-
րաւադներին հասունացած խաղող,
տանձ, խնձոր, դեղձ, թուզ, հատա-
պտուղներ էին: Միհր արեւ աստծոյ
ծիածանն էր իջել սեղաններին,
հրաբխահար արիւնոտ խաղողն էր
հրավառուած: Կնաչել էին Արքայի
հետ եկած Անտիոքի արմէններին
բազմել սեղաններին: Արքան նայել
էր սեղաններին, ժպտացել.

- Միհրի լոյսն էք փռել սե-
ղաններին, մեղմիկ խօսել էր:

Դիմացի արտի խոզանի բա-
ցատն էր հարթեցուած ու յարդա-
խառն ցեխով ծեփուած, եղէգից
պատրաստուած աթոռներ, սեղան-
ներ, ցորեանի ցողուններից հիւս-
ուած խսիրներ էին փռուած:
Թմբուկներն էին ելել բացատ,
Նաւասարդին նուիրուած պարի
եղանակներ էին զարկել: Հայոց
Սասուն աշխարհի շէներում, ասում
են, հիմա էլ նման զարկերով թմբուկ
է որոտում: Այն յուշն է իրենց
հեթանոս աշխարհի նաւասարդեան
տօնախմբութիւնների: Շէնի այ-
րերը, հարցերը իրար թեւանցուկ
առած բացատ էին ելել, կարծես
իրենց աշխարհի մեհանները իրենց
աստուածներին գրկած՝ Նաւասարդ-
եան շուրջպար էին բռնել: Այդ
շուրջպարերը հազար, հազար տա-
րիներ յետոյ էլ յարատեւում են

հայոց աշխարհում: Տեսե՞լ էք արդ-
եօք Խոսրով թագաւորի անտառի
դիմացի բարձունքին յառնած Միհր
աստուծոյ տաճարի առաջ հեթա-
նոսացած արմէնների վահագնի
ծնունդին նուիրուած շուրջ պարե-
րը: Եւ յանկարծ, մանչ Տիգրանը
վազել էր շուրջ պարի կեդրոն,
կարմիր թաշկինակը վեր պարզած
պար էր նմանակել: Բոլորը ապշած
նայել էին, նրա հոգուց պայթել իր
նախնիների աստուածների ոգու
կրակը:

- Տիգրան արքայ, իրենց ման-
չերը լանջերին սեղմած շէնի նո-
րահասերն են, ձեռքը դէպի նրանց
երկարելով ասել էր Պարոյրը: Այս
տները պատելուց, շէնի կրակա-
րաններից դէպի իրենց աստուած-
ների տիեզերական տաճարներ
իրենց լինելիութեան պատգամը
յղելուց, արտերի հողը հերկելուց,
այդ ձորերի կողերին դարաւանդ-
ներ արարելուց, ցորեանի առջին
բերքը հաւաքելուց յետոյ... մայրա-
ցել են շէնի պարմանուհիները:
Նրանք իրենց մանչերն բերել, որ
քու եւ քու նախնի մեծերի քաջու-
թեան արարումների ոգու կրակը
հոսես նրանց սրտիկներին, քու
ափերով քաղած արեւ աստուած
Միհրի լոյսով ցողես դէմքերը նրանց,
իւրաքանչիւրին պարզեւես քու եւ
արմէն նախնիների անուններ՝ Հայկ,
Արա, Արամ, Արամէ, Արամայիս,
Արամանեակ, Արաստ, Արմենակ,
Տիգրան, Արտաշէս, Սաթենիկ, Ար-
տաւազդ, Տիրան, Երուանդ, Արթ-
վարդ, ու հայոց աստուածների
անուններ՝ Արա, Արամազդ, Վա-
հագն, Անահիտ, Աստղիկ, Նանէ,
Ծովինար, Միհր, Վանատուր, Գի-
սանէ, Տիր, Արէգ, Հրանդ, Վարազ
Տիգրան Արքան փողերի անուշ
հնչութիւնների, թմբուկի մեծ գար-
կերի ուղեկցութեամբ, գիրկն էր
առել իւրաքանչիւր մանչի, արմե-
նական անուն շնորհել, Միհր աս-
տուծոյ արեւի ճառագայթների քա-
ղած լոյսով օծել դէմքերը նրանց:

Անտիոքի արմէնները, հաց,
պտուղ, խորոված միս, գինիի ու
գարիի ջուրի փարչեր, շէնի հար-
սերը, իրենց արտերի ցորենի հացը,
լեռան անտառներում որսացած վա-
րագների խորոված միսը փռել էին
սեղաններին: Նաւասարդ էր, իրենց
խոնջանքի երախայրիքն էին նուի-

րում իրենց բարեպաշտ աստուած-
ներին, փառաբանելու իրենց դի-
ցամայր Անահիտի մայրութիւնը,
գովերգելու Հայկ Նահապետի ազա-
տութեան կուռի յաղթանակը: Հա-
յոց աշխարհի լեռների յուշը իրենց
սրտերում, խրախճանալու էին այն-
պէս, ինչպէս իրենց աստուածների
մեհանների առաջ կատարած սո-
նախմբութիւնների ատեն:

Միջօրէ, Միհր արեւ աստ-
ուածն էր կանգնել լեռան լանջի
շէնի կապոյտ երկնակամար, լոյս,
լուսեղէն ժպիտ ցանում: Տիգրան
Արքան էր բացատի կեդրոն.

- Նաւասարդ է այսօր, կանչել
էր արքան, լոյս երկնած Միհր
աստուած է բազմել լեռան լանջի
երկնակամար, կրակալոյս հոսում,
ձորի կողերի դարաւանդներին հա-
զար գոյնի ծիածան կապել:

- Նաւասարդ, արմէնների
տարիի առաջին օրն է այսօր:
Երկու հազար հինգ հարիւր քառա-
սուն տարիներ առաջ, արմէնների
Նահապետ Հայկը ազատութեան
կուռի էր տարել իր քաջերին:
Նրանք կուռի էին ելել ոչ թէ
մահուան գնալու, այլ մահ սփռելու
իրենց երկիր եկած թշնամու շար-
քերին: Նահապետն արմէնների, շատ
հեռուից, նետահարել էր իրենց
ստրկացնելու եկած թշնամու թա-
գաւորին: Ամէն տարուայ այս օրը,
իրենց աստուածների մեհանների
հրապարակներում, արմէնները
իրենց նահապետի յաղթանակն են
տօնախմբում, փառաբանում իրենց
մարդացած աստուածներին: Գու-
սաններն էին երգել խորհուրդը
նրանց: Այս լեռան լանջի շէնի
արտի բացատում, ձեզ հետ միասին
այսօր Նաւասարդ ենք տօնախմբե-
լու:

- Քաջեր, արմէնների լեռ-
նաշխարհի երկնակամար եկած Հայկ
Նահապետի աստղաբոյլի բոցավառ
աստղի լոյսը սրտերում, իրենց
զէնքով հասան ծովեր, ծովերից այն
կողմը աշխարհներ, հասան այս
լեռներ: Որտեղ որ հասաւ իմ
քաջերի զէնքը, նրանց ստրկացրին
աշխատանքը նրանց մարդկանց,
այնտեղ տարան իմաստութիւնը
իրենց աշխարհի արարումների,
հայոց մտքի լոյսի ջահերը վառե-
ցին շատ, շատ հեռուներ, պաշտպա-
նական կառուցներ պատեցին: Ինք-

նակառավարման իրաւունք շնոր-
հեցին նրանց մարդկանց քաղաքնե-
րին: Ճանապարհներ շինեցին, որ
տարբեր ազգերի ժողովուրդներ
իրենց արարումները տանեն վա-
ճառեն, փոխանակեն, հաղորդակից
լինեն իրարու իմաստուն գործե-
րին: Քաջերն այդ, զէնքով զնացին
աշխարհներ, որ արմէնների արար-
չութեան ոգին հոսէր հեռուներ:

- Հայացել է լեռան լանջն
այս, հայացել են այս ձորերի կողե-
րը, այնտեղ է հասել հայոց աշխար-
հի լեռների գագաթներից ժայթ-
քած կրակ խաղող, պտուղներ, իրենց
աստուածներ երկրնի աստղերի բո-
ցերից հրդեհուած ծիրանների: Տի-
եգրքի տաճարների հանդերից աստ-
ուածների Արմինա երկրի բերած
ցորէնն է այս արտերում: Բարձր
գագաթներով լեռ է ձեր թիկուն-
քին: Փարած մնացէք այս լեռներին,
վտանգի ժամանակ բարձրացէ՛ք
նրանց գագաթներ: Լեռն ի վեր
բարձրացող թշնամու վրայ ժայ-
ուեր նետէ՛ք, տեսէ՛ք, նրանց ինչպէս
են փախչելու:

- Ծովի կապոյտն է ձեր առաջ
փռուել, նոր շէներ թող հասնեն
նրա ջրերին: Ծովն ապահով էլք է
դէպի Կիլիկիայի իմ նաւահան-
գիստներ, Հելլէն բնակավայրեր:
Ով կարող է կանխատեսել պատմու-
թեան ընթացքը: Արօրների ու հողի
մշակման գործիքների հետ նիզակ,
թուր, աղեղ, կապարճներով նետեր
արարէք: Չէնքին, ուժին, հրաբխա-
ծին վահագն աստծոյն, արմէնների
աստուածներին փառաբանեցէ՛ք,
նրանք ձեր սրտերին քաշութեան,
բարեպաշտութեան ոգի կը հոսեն:
Հողին պաշտամունք նուիրեցէ՛ք,
ձեր մանչերին զէնք կրել վարժեց-
րէ՛ք: Այս լեռները որպէս վահան
պահած, կուռի ելէ՛ք թշնամու դէմ:

- Լցրէ՛ք գինու թասերը, Նա-
ւասարդեան ողջոյն բոլորիդ, Հայկ
Նահապետին յաւերժութիւն, Արա-
մազդն ու արմէնների աստուածնե-
րը գօրավիզ լինեն իմ քաջերին,
արմէնների աշխարհին, նրալոյս
այս շէնին: Խմէ՛ք գինի, ցնծացէ՛ք,
ծիծաղէ՛ք, արբեցէ՛ք: Նաւասարդ է
այսօր, հեթանոսական խրախճան-
քով ինդան ձեր հոգիները: Փառք
հայոց աստուածներին, որ այսքան

Շար.ը էջ 29

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՄՈՒԻԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՄԻՍԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ՆԱԲԱՍԱՐԴ ԼԵՐԱՆ ԼԱՆՁԻՆ

Ծարուճակուած էջ 28-էն

բարիք են հոսել այս լեւրան լանջերին:

Տիգրան Արքան, Վարդանը, Բագարատը, մանչ Տիգրան գրկին Արտեմիս, Անտիոքի արմէնները, շէնի հայերի հետ նստել էին խսիրներին, սեղանների աթոռներին ճաշակել իրենց աստուածների պարգեւած ուտելիքը: Կարմիր գինիով լի թասերը գարկել էին իրար, խմել, արբեցել, գրկախոնտել իրար, գողթան երգեր նմանակել, իրենց Նաւասարդէն էր, հեթանոս արբեցում, կեանքի արփիագեղ ըմբռչանում:

- Հայոց Արքան ողջ լերու, կանչել էր շէնի աւագ Պարոյրը: Շէնի արմէնները ոտքի կանգնած, գինու թասերը վեր պահած, ցանկանում են խմել Տիգրան Արքայի, նրա քաջերի ողջութեանը, թող նրանց զէնքները երբեք չպաղեն:

- Նաւասարդ է այսօր, Տիգրան Արքայի նախապապ Հայկագուն Արտաշէս Արքայի ըղձանքն է եղել:

«Ո՛ տայր ինձ գծուի ծխանի եւ գառաւօտն Նաւասարդի

Ձվագելն եզանց եւ զվագելն եղջերուաց,

Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանեաք,

Որպէս օրէն թագաւորաց»:

- Հայոց աշխարհի անուշ շէնների ըղձանքը, պայթած աղբիւրների ջրերի խոխոջիւնը, լեւրան լանջերի անտառների դողի հեշտանքը, հայրենի հողի կարօտի ոգու սարսուռ մեր սրտերում, Տիգրան Արքայի զօրքի հետ հասել են այստեղ, հայու արարման իմաստութիւնը հոսելու այս կողմն աշխարհի: Հայկեան ոգու արարչագործ իմաստութեամբ հայացրել ենք այս լեռները, հողը նրա:

- Տիգրան Արքան, աշխարհի այս կողմի հեղինակի աւանդապատումի յուշը պանծացնելու համար, փոխ արքայ Բագարատին թելադրել է Անտիոքի մատենաւում լեռն այս անուանել այնպէս, ինչպէս իրենք էին կոչել՝ «Մուսանների Պաշտամունքի Լեռ» եւ այս շէնը «Մուսանների Լեւրան Շէն»:

Հոգ չէ անուանը, լեռն այս, նրա լանջի շէնն այս «Արմէն-Հայ» է, այն դարերին կը գնայ, պատմութիւն կը դառնայ: Եւ ո՛վ իմանայ... նրա սխրանքները հայոց զէնքին ինչ-

քան փառք կը բերեն: Ըմպում ենք աստուածների խմիչք արիւնոտ գինի, Տիգրան Արքային յաղթական ճակատամարտեր, հայոց աստուածները գինի, Տիգրան Արքային յաղթական ճակատամարտեր, հայոց աստուածները անասան պահեն արմէնների աշխարհի գահը, արքայի հայկագունեան թագին արեւի անմառ շողեր, լոյսի կրակ շեղջեր:

- Ծովակալ Վարդանը ողջ լերու, լեւրան լանջի շէնի արմէն-հայեր Անտիոքի արմէններ, արիւնոտ գինիով լիքը թասերը դէպի Միհր արեւ աստուած բարձրացրած, խմենք նրա ողջութեանը, նրա նաւերը անխորտակ մնան, մշտապէս տիրեն այս ծովին: Հայկեան Նաւասարդի խնդութեամբ արբեցած արմէններ, վագէք դէպի ծովակալը, թասերը գարկէք նրա թասին, գինու ծով թող հոսի նրա աւաջ: Հարսեր, որպէս Նաւասարդեան ջրախող, թասերով ջուր ցանէք ծովակալի վրայ:

- Ողջոյն Անտիոքի փոխ արքայ գորավար Բագարատին, հայոց անուշ հարս Արտեմիսին, մանչ Տիգրանին, ողջ լերուք: Հեղինները, արմէնները հիացած են Անտիոքը կառավարեու ձեր հմտութեամբ: Արմէնների արարման իմաստութիւնն էք բերել Անտիոք: Առաւել բարգաւաճել է քաղաքը: Արտեմիս քնքուշ հարս, քու Տիգրան մանչը արժանաւոր լինի հայոց արքայի անուանը, արմէնների զօրքի ջուր կատներ մարտի առաջնորդի: Գինով լի ձեր թասերը գարկէ՛ք Բագարատի ու Արտեմիսի թասերին, գրկեցէ՛ք մանչ Տիգրանին, բարձրացրէ՛ք դէպի արեւ աստուած Միհր, դէպի հայոց նահապետ Հայկի աստղերի բոյլ, Նաւասարդեան հրայրք նրա սրտիկին:

Բացատն էր բացուել, ալեհեր արմէն-հայի առաջնորդութեամբ մի խումբ պարմաններ արքայի առաջ կանգնած, գողթան երգիչների Նաւասարդեան երգեր են հնչեցրել: Արքան էր ոտքի, ակներից հրճուանքի լոյս հոսող դէմքով հետեւել նրանց երգին:

- Թմբկահար, գա՛րկ թմբուկը՝ ի պատիւ Հայկ նահապետի յաղթանակի, գա՛րկ թմբուկը, որ Արքայի քաջերի զէնքերը ամրանան, գա՛րկ թմբուկը, որ հայոց աստուածների յաւերժութիւն լինի, գա՛րկ թմբուկը, որ Արքայի գարմին անմահութիւն լինի, նրա

թագին՝ Միհրի արեւալոյսի մշտավառ շողեր:

Բացատն էր մտել թմբկահարը, որոտում էր թմբուկը, արբեցած արմէնները, կարծես լեւրան զագաթները գրկած, շուրջ պար էին բռնել:

Արմէնների բոլոր շուրջ պարերը հեթանոս աստուածների տիեզերական ոգու քնքշանքը, նրանց պաշտամունքի ոգեղէն խորհուրդն են երկնում: Ծուրջ պարի երկու թեւերի Վարդան ծովակալը ու փոխ արքայ Բագարատն էին, Արտեմիսն էր նրանց առաջ պարի ելել: Եթէ տեսնէիք նրա նազանքը, Մուսաններ քոյրերի նման կարծէք սահում էր լեւրան լանջերին, գնում նրա կարմիր գագաթ կրակ քաղելու: Եւ յանկարծ, Նաւասարդով, Նաւասարդեան գինով արբեցած արքան բացատ էր իջել: Միհր արեւ աստուածն էր նրա ծիրանի պարեգօտից հագար գոյներ քաղած՝ հոսում պարողների վրայ: Պարի շարքերը սեղմուել էին արքայի շուրջ: Եւ նրան որպէս մեհեան վեր պահած, խելայեղ պար էին եկել, զէնքով աշխարհներ անցած խենթացած արմէններ:

«Բացէ՛ք բացատը», կանչել էր թմբկահարը: Քաջերի թմբուկ էր գարկում: Երկու կողմերից պարմաններ, մերկ սուրերը վեր պահած, պարի խրոխտ շարժումներով, մօտեցել էին իրարու, գարկել սուրերը: Կայծեր էին ժայթքել, վախեցած մանչեր կպել էին մայրերի հագուստներին: Ետ էին ընկրկել, շարունակել պարել են նորէն, նորէն սուսերների ճարճատուն, կայծեր էին թռչում, բարձրանում երկինք սատղերին զարնուելու: Արմէններն էին իրենց կանչելով խրախուսում նրանց: Արքան էր հրճուալից նայել նրանց զէնքերի վարժ շարժումներին, սրերի յանդուզն բախումներին, նրանց մենամարտ պարին:

Անտիոքի ու հայոց շէնի պարմանուհիներն էին բացատ, փողահարներն էին մեղմ, անուշ նուագ հնչեցնում: Արտեմիսն էր մտել այնտեղ: Պարում էին նազանի ջրահարների ելեւէջներով, ծովի ալիքների նման փրփրում, հովիկներին յենած թռչում դէպի լեւրան լանջեր, արեւի ճառագայթներ քաղում, ոսում Արքայի ծիրանի պարեգօտին, ձիւնոտ ափերը վերեւ պահած Միհրի լոյսը բուռ, բուռ

նետում հայերի շէնին: Մարել էին հնչիւնները նուագարանների, քանդուել էին շուրջ պարի շարքերը, շանթուած սրտերով պարմանները վագել խելագար գրկել նրանց, Նաւասարդեան խոյանքի հրճուանք էր:

Նաւասարդի հրավառութեամբ արբեցած արմէններ, կաւէ սափորներով ջուր էին ցանում իրար վրայ, ջրում, ջրում, ջուր ցանում արքայի ծիրանի պարեգօտին: Մանչ Տիգրանն էր ջուր ցանում Արտեմիսի ու Բագարատի վրայ: Ջրուած արմէն այրեր ու տիկնայք գրկում էին իրար, պինդ փաթաթում: Պարմանները վագում պարմանուհիների վարսերից, իրաններից հոսած անուշ ջուրը ըմպում, սքանչանում, արբենում կեանքի հեթանոսական վայելքով: Նաւասարդ էր, իրենց նահապետի յաղթանակի տօնահանդէսը:

- Նաւասարդեան խաղեր թող լինեն, կանչել էր Տիգրան Արքան: Անտիոքի արմէնների եւ լեւրան շէնի կտրիճ, առոյգ տղաներ թող բացատ ելլեն: Ծովակալ Վարդանը թող վարի հայոց նախնիների Նաւասարդեան մարտական խաղերը, որոշի յաղթողին:

Ծովակալ Վարդանն էր կագնել բացատ, առաջարկել Անտիոքի արմէններին ու շէնի հայերին իրենց քաջերին բացատ առաջնորդել: Ջերմ բացագանչութիւններով ողջունել էին իրար: Բացատի բոլորակ էին ելլել գօտեմարտի առաջին գոյգի մասնակիցները: Կիսամերկ երկու կտրիճ տղաներ կանգնել էին իրարու դիմաց, ողջագուրուել, պինդ գրկել իրար, երգուել նախնիների սահմանած կարգով գօտեմարտել: Լեռնականներն էին գոչել յաղթանակը կտրիճին է վայել:

Վարդանը, ձեռքը առաջ պարգելով, ազգարարել էր սկսել մարտը: Կտրիճները խոյացել էին իրարու վրայ, հնարքներ փնտուել գրկելու հակառակորդի իրանը: Վերջապէս բռնուել էին, տապալել էին իրար, առանց կարողանալու հակառակորդի իրանը սեղմած պահել գետնին: Կողմերի երկրպագուներն էին բարձր կանչերով ոգեւորում իրենց քաջին: Բացատի շարքերից երկու պարմանուհիներ էին առաջ եկել, իրենց ակների շանթե-

Շարք էջ 30

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԱՌՕ ԵՒ ԱԼԻՍ ՄԱԶՍԱՆԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2012

ՆԱԽԱՍԱՐԴ ԼԵՐԱՆ ԼԱՆՁԻՆ

Ծարունակուած էջ 29-էն

րով ուժ հոսել նրանց բազուկներին: Եւ լերան շէնի կտրիճի սրտին իրենց Անգեղաց Տան Տորքի ուժի հրայրքն էր պայթել, զգեստնած հակառակորդի կռնակն էր հողին սեղման պահել: Ծովակալն էր երկու ձեռքերը վեր բարձրացրած՝ յաղթանակ շնորհել նրան:

Նաւասարդեան տօնախմբութեան հրայրքից պայթած ոգու, հայոց աշխարհից բերած տնկիւնների խաղողից քամուած գինու կրակից վառուած պարմանուհին, զգուշու, տենչալու, համբոյր շաղկուտ հեթանոսական տենչանքով վազել էր դէպի յաղթող քաջը, զրկել նրան: Մի կարճիկ պահ յետոյ, վազել էին դէպի դարաւանդներ, վայելելու իրենց աստուածների պարգեւած հեթանոսական հեշտանքը, արգասաւորութիւնը նուիրաբերելու իր քաջին:

Ծովակալը հրամայել էր, բացատրից հինգ հարիւր ոտնաչափ հեռաւորութեան քարին գինով լիքը թաս դնել: Երկու հազար տարիներ առաջ, իրենց Նահապետ Հայկն էր հինգ հարիւր ոտնաչափ հեռաւորութիւնից նետով խոցել իր երկիր եկած բռնակալի լանջը: Եւ հազար, հազար տարիներ իրենց ազգապետ Նահապետի սիրանքը փոխանցուել է սերունդներին: Հայերը, հարիւր-հարիւր դարեր այդ ասքը տանում են իրենց յաւերժութեան ճանապարհներով: Չէ, ոչ ոք պիտի կարողանայ մարել այս արիական ցեղի ոգու ճրագալոյսը: Այրեցին շէներն իրենց, փլեցին տաճարները, ողջերը հասան անպատաններ: Այդ ողջ մնացածները, դարձեալ արմենական հանճարի լոյսը ճառագեցին աշխարհներ, եւ դարձեալ ծիծաղեցին աշխարհին: Եւ հիմա թշնամին հազար դռներ զարկած՝ սպանում է, աղաչում ,է իրենց մարդ սպանող չյայտարարել: Նրանց ասում են, դուք մարդ էք սպաննել, այդ յանցանք է մարդկութեան հանդէպ:

Վարդանն էր գիծ արել հողի եզրին, հրաւիրել առաջին նետաձիգին: Յաղթ տղան, մի պահ ուժ

էր հաւաքել, իրենց ձգել աղեղի լարը, պահել պինդ, նշան բռնել, ապա թողել այն: Նետն էր սուրալով թռել... կպել քարին, կայծեր ժայթքել: Լուռ էին շէնի հայերը:

Երկրորդ տղան էր կանգնել գծի եզրին: Մի պահ նայել թասին, ապա ետ դարձած՝ փնտուել իր պարմանուհուն: Կանգնել էր ձգուած հասակով: Առանց բազուկը շարժելու դէպի իրեն էր քաշել աղեղի լարը, նետի ծայրն էր նշանին ուղղել, պահել աղեղը պինդ ու թողել լարը: Նետն էր արծուակին թռիչքով սուրացել, փշրուել էր թասը, գինին կարմիր, կարմիր շիթերով հոսել քարին, կարծես խոցուած Բելի արիւնն էր հոսում:

Շէնն էր նորէն դողացել ծափերի որոտով, Անտիոքի արմէն կտրիճ տղան էր խոցել գինութասը: Նաւասարդեան տօնահանդէսի խորհուրդի վայելքը ըմբռնանա՞ծ պարմանուհին, զրկել էր յաղթանակած քաջին, աղեղը կարել էր վզից, փարուել նրան, ո՞վ պիտի կարողանար մարել նրանց հեթանոսական հեշտանքի վայելքի դողը: Եւ նրանց էլ վազել էին դէպի դարաւանդներ: Նաւասարդ էր, կարգն էր այդպէս:

Ծարունակուել էին Նաւասարդեան տարբեր խաղերի մրցամարտերը՝ կռիւմարտ, մուրքի նետում, սուսերամարտ, վազք, սկաւառակի նետում, ձիավարութիւն: Հայոց աշխարհում, քաջերին էր վայել ձիերին գինակիր բազմած, մարտի գնալ: Հայոց այրուածի, բազում յաղթանակներ պարգեւել հայոց աշխարհին: Հայոց լեռնաշխարհի նրբիրան նժոյգներին հարաւ էին տարել, որոնց յետագային «Արաբական ձի» պիտի կոչէին:

- Այս լերան շէնի հայեր, բացազանչել էր Արքան, այսօր ինձ ու ծովակալ Վարդանին, Նաւասարդեան տօնահանդէսի ու բազում խաղերի խրախճանքը պարգեւեցիք: Իմ գօրքի քաջերի հետ մարտերի եմ գնում, շրջագայում հպատակեցրած երկրներ, մարտիկներին գինավարժութիւնների տանում, քաղաքացիական, ռազմական հետախուզութիւններին հետեւում,

գնում իմ նուաճումների հանդէպ ոտնձգութիւններ կատարողներին «Խելքի բերելու»: Երկար տարիներ Նաւասարդեան տօնախմբութիւններին չէի մասնակցել, հայոց աստուածներին փառաբանելու թասերով գինի չէի ըմպել, արբեցած չէի շուրջ պարի հեշտանքով:

- Ինչքան եմ հրճուել այսօր, որ այս լերան լանջին հայկեան լոյսի կանթեղ եմ վառել: Հայեր եմ տարել իմ նուաճած երկրներ, որ այնտեղ հասնի լոյսը հայոց Հայքերի, նրա իմաստութիւնը գնայ աշխարհներ, հայանան լեռներ, ծովեր, դաշտեր, գետեր, շէներ: Այդ սեւ հունով գետի ջրերից մինչեւ իմ նաւերի կառանման ծովախորշը գնան ձեր շէները: Հազար, հազար տարիներ այս լերան լանջերով բարձրանան այս կողմն աշխարհի հայոց շէների կրակարանների ծուխի սիւները դէպի Վահագն աստուծոյ տաճար: Արեւ աստուած Միհրն է յոգնել երթից, գնում ծովի ջրերին բազմելու: Ժամանակն է ետ դարձի:

- Տիգրան արքայ, միջամտել էր Պարոյրը, շէն ի մարդիկ ցանկանում են Անտիոք վերադառնալու ձեր ճանապարհին բարձրանալիք մօտիկ ձորի կողերին իրենց ստեղծած դարաւանդների մրգաստաններ, քայլէիք նրանց հողին, տեսնէիք իրենց արարումը: Նրանց սերունդները կը պատգամեն դարերին, որ հայոց Տիգրան Արքան է անցել այդտեղից: Ձեզ ուղեկցող Չոկատի մարտիկները նժոյգները կը տանեն գետի եզերք:

Մուսայլեոցի խրոխտ գաւակներ, դուք, ես շառաւիղներն ենք այդ շէների հայերի: Նաւասարդով, գինիով, ծիծաղով արբեցած շէնի հայերը, երգերով ու կանչերով Արքային, Ծովակալին, փոխ արքային, մանչի ձեռքը պահած Արտեմիսին, Անտիոքի արմէններին առաջնորդել էին դարաւանդներ: Հազար գոյնի ճարմանդներ իրենց թեւերին, ծառերն էին արեւի ճառագայթներից հուրհուրում: Հայեացքները դէպի դարաւանդներ յառած, ունկնդրել էին վերեւ բարձրացող գեփիւռի քննչանքից օրօրուող ծառերի սօսափիւնը, դիտել

նրանց ոստերի դողը, այնտեղ յառնած լոյսի հրավառութեան սքանչանքը: Ո՞վ իմանար, գուցէ Անահիտ դիցուհին էր իջել դարաւանդներ, գրոյցի կանգնել մայրացած ծառերի հետ: Մեհեան չկար այնտեղ, որ նրա քուրմերը մեկնաբանէին, գուշակէին մրմունջը նրանց:

- Լերան ձորի այս դարաւանդները հրավառուում են հայոց արարման ոգու ջահերով, բացազանչել էր Տիգրան Արքան: Ծիծաղում են դարաւանդները, հայոց լեռնաշխարհի հրաբուխների կրակալոյսն էք փռել այս լերան լանջերին, հազար, հազար դարերին տարէք այն: Հայոց արարման հրավառութեամբ այս լերան լանջերի նոր շէներ պատէք մինչեւ իմ նաւերի կառանման ծովի ափեր: Անցորդները թող ասեն, որ հայեր են այստեղ, ցեղակից հելլենների աստուծոյ Մուսա դուստրերի անունով հայացած լեռ այն:

Արքան էր, երկար վարսերը գեփիւռի համբոյրին տուած, խրոխտ բարձրացել դարաւանդների շարքեր, կանգնել նրանց եզրերին, բարձր կանչով գովաբանել հողի արարման հրայրքի նրանց ոգին: Աշնանային հազար գոյնի երանգներով դեղձ է փրցրել, հասուն, անուշ, շաղկաբոյր աշնանային դեղձ: Ծովակալը, փոխ արքան հիացմունքի կանչերով քայլել էին դարաւանդներով: Մանչ Տիգրանն էր փախել Արտեմիսի ձեռքից, վազվզել դարաւանդների շարքերով, պտուղ լցրել ծոցիկը:

Լերան շէնի հայերը նրանց հետ իջել էին գետի եզերք: Նաւասարդեան խրախճանքով արբեցած Տիգրան Արքան իր աշխարհի նրբիրան նժոյգին բազմած՝ թեւ գետի միւս ափ: Իրեն էին հետեւել ծովակալ Վարդանը եւ որդին լանջին սեղմած Արտեմիսին գրկած՝ փոխ արքայ Բագարատը: Նաւասարդեան ոգու հրայրքով լեցուն, Անտիոքի ձիավար արմէններն էլ ճախրել էին միւս ափ: Նժոյգների թռիչքի Նաւասարդեան հանդէս էր գետի վարար ջրերի վրայ: Երկու ափերից, բարձր կանչերով ողջերթ էին մաղթել իրարու:



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱԶԳԷՆ ԵՒ ՍԵՂԱ ԽՈՏԱՆԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2012

**ՀԱՃԵԼԻ ՅՈՒՇԵՐ
ԱԶՆԻԻ ԹԱՐԽԱՆԵԱՆ-ԱԳԻԼԵԱՆ**

Եթէ ինձ հարցնէին, իմ կեանքի մէջ լաւագոյն եւ հաճելի յուշերը պատմել, ես կը պատմէի այն հատուածը որը ես սովորել եմ Կիլիկեան ճեմարանում եւ մէն մի օրը դարձել էի իմ կեանքի ամէն մի էջը, քանզի իմ կենսագրութիւնն է եւ տարիներ յետոյ՝ երբ յետագարձ հայեացք եմ նետում, տեսնում եմ, որ այդ էջերը աւելի արժէքաւոր եւ իմաստալից են դառնում:

Յիշում եմ, երբ մանկապարտէզը աւարտեցի Նոր Գիւղի Կիլիկիայում, այդ տարին երկրորդ յարկը կառուցեցին եւ ես առաջին դասարանը զնացի նոր յարկում: Այդ առաջին օրը անմոռանալի օր էր ինձ համար, իսկ ուսուցիչները նոյն ուսուցիչներն էին ովքեր, որ դասաւանդել են իմ մայրիկիս, քեռիներիս եւ մօրաքոյրիս (Աթոքեաններին) եւ ես նրանց համբաւն եմ լսել: Երբ ես սովորում էի նախակրթարանում, ուսուցիչները միշտ օրինակ էին բերում ասելով (սովորէ՛ք Գէորգ եւ Թագուհի Աթոքեանների նման, իսկ ես հպարտութեամբ էի լցում եւ այդ իօսքերը ինձ պարտաւորեցնում էին, որ ես պէտք է հետեւեմ Աթոքեանների վարքին: Իսկ տնօրէնը Հրանդ Մուրատեանը մեծատառով մարդ էր: Այդ մարը 1918 թուին Հայաստանից դուրս էր եկել տառապալից ճանապարհով, նա գիտէր մի քանի լեզու եւ մեզ դասաւանդում էր հայոց լեզու: Դասերի ժամանակ մեր դասարանի չարածճի տղաները, բարկացնում էին նրան եւ նա ասում էր թրքերէն լեզուով, «Ալլա վերմամը շիեղամբէր ատամ նէ եափսըն»: Պարոն Մուրատեանը հանդէսների ժամանակ այնպէս էր բանախօսում կարծես համակարգիչ լինէր: Ես յետոյ իմացայ, որ ինքը վերադարձել է հայրենիք եւ այնտեղ իր մահկանացուն կնքեց: Խոնարհւում եմ իր շիրիմի առաջ:

Անցան տարիները եւ ես յաճախեցի Կիլիկեան ճեմարան, արդէն քեռիս եւ մօրաքոյրս ուսուցիչներ էին: Յիշում եմ 7րդ դասարանում քեռիս մեզ ժամանակաւոր հայոց լեզու դասաւանդեց, բայց հիմնականում մինչեւ 12րդ դասարան

դասաւանդում էր անգլերէն լեզու: Մի օր մեզ յանձնարարեց, որ շարադրութիւն գրենք Կիլիկեայի մասին, ես շատ շփոթուեցի, որ ես այդքան պատրաստ չէի այդ թեմայով գրել եւ ես յիշում էի Կիլիկիայի քաղաքը, ես էլ պատրաստի յանձնեցի թղթին, յաջորդ օրը՝ ես քեռիս տանն էի քեռիս կանչեց ինձ եւ հարցրեց «Ի՞նչ գրեցիր Կիլիկիայի մասին» եւ նա քթի տակ ծիծաղում էր, այդ մասին ես յաճախ յիշում եմ եւ ծիծաղում, ահա թէ ինչ տարիներ յետոյ ինձ առիթ է ընձեռուել գրել Կիլիկիան ճեմարանի մասին, այո հիմա ես խորապէս ազդուած եմ կատարուածի մասին եւ կեանքս չեմ խնայի Կիլիկիայի ազատութեան համար: Հայաստանում՝ երբ շուկով էին խօսում հայոց ցեղասպանութեան մասին ես իմ որդիներին Շահինիս եւ Վարդանիս Ապրիլի 24ին ատիպում էի Շիրազի տողերը արտասանեն դասարանում, մի օր վարդանի դասդեկը կանչել էր նրան ուսուցչանոց եւ 5 էր նշանաւրել: Միշտ յիշում եմ, որ 7րդ դասարանում մենք նոր տարուայ հաւաքոյթ կազմակերպեցինք քեռիս գլխավորութեամբ եւ պայմանաւորութեանք ամէն մէկը մի հոլմոր պիտի պատմի, երբ հասաւ պահը որ քեռիս պիտի պատմէր, այդ պահին չէր յիշում ոչ մի բան եւ մեզ ասաց «բոլորդ ոտքի կանգնեցէ՛ք» եւ շատ լուրջ դէմքով մէկին-մէկին նայեց մեզ ու ասաց «նստեցէ՛ք», այդպէս կրկնեց մի քանի անգամ եւ մենք դեռ սպասում էինք, որ մի բան պիտի ասի այնքան նստեցինք ու կանգնեցինք, որ արդէն ծիծաղից չէինք կարողանում կանգնել ոտքի վրայ ու հարցրեցինք ո՞ւր է հոլմորը եւ նա ասաց «ծիծաղեցիք աւելին, քան պէտք էր ասէի»:

Յիշում եմ երբ Սովետական Միութեան պասքէթ պոլի հաւաքականն էր եկել Հայկապ եւ հանդիպեց էր Հայկապի Շապիպի հետ, Սովետական Միութեան մասնակիցն երից երկուսը հայ էին, մեր Կիլիկեան ճեմարանի աշակերտները իրենց հետ բերել էին մեծ

աքսաֆոն նուագում էին եւ բոլորը հայերը գոռում էին «Արարատ» մեր մաթեմատիկայի ուսուցիչն էլ այնտեղ էր եւ նա ազգութեամբ արաբ էր «Թալէպ Աշկարը» ինք մեզ տեսաւ թէ մենք երկրպագում էինք Սովետական թիմին եւ գոռում էին «Արարատ» ուղղակի դաշտը պայթում էր Արարատ ասելով, յաջորդ օրը Պարոն Թալէպ Աշկարի դասին, երբ նա ներս մտաւ շատ նեղուած ու վիրաւորուած էր մեզ ասաց «ո՞ւր էր Արարատը, որ գոռում էիք, եթէ ֆրանսացիների հետ խաղային որո՞ւն պիտի պաշտպանէիք եւ մենք էլ ասացինք «այնտեղ երկու մասնակիցներ կային որոնք հայեր էին եւ մէկը Միսն էր, միւսը Մասիսը ահա թէ ինչո՞ւ էինք գոռում «Արարատ»:

Մեծ մարդ էր Պարոն Թալէպ Աշկարը, երբ մեզ դասաւանդում էր ձապրան մեզ շատ խրատներ էր տալիս եւ մենք երիտասարդ էինք եւ չէինք հասկանում այդ խրատների արժէքը եւ ասում էինք թէ ուսուցիչը մեր դասից շեղում է եւ շատախօսում է, այն ինչ նա մեզ բացատրում էր, որ էլ ձապրան կեանքի վարուելակերպի չափանիշն է եւ մեզ սովորեցնում էր ինչպէս պէտք է վերաբերուենք մեծերի, փոքրերի հետ, տարիներ անցան եւ իմ կեանքի մէջ փաստեցի, որ շատ ճիշտ ու արժէքաւոր, կարեւոր էին նրա խրատները: Փառք ու պատիւ նրան եւ շատ բախտաւոր ենք, որ մեզ դասաւանդել է երջանակալիշատակ Պարոն Թալէպ Աշկարը խոնկ ու ծաղիկ նրա շիրիմին եւ միշտ երախտապարտ պէտք է լինենք, որ արաբ ուսուցիչները հայ ուսուցիչներին կողքին որակեալ-մակարդակով դասաւանդեցին, մեր սերունդը, այդ է վկայում իմ յաջորդ յիշողութիւնս, երբ մենք պետական քննութիւն էինք յանձնում վերջի օրը արաբերէն լեզուն էր եւ շարադրութեան թեման ծառի մասին էր, ես շարադրեցի ծառի իմաստը եւ կարեւորութիւնը ամէն տեսակէտով, իսկ մեր թաղին Զը աշակերտ էր մասնակցում որից հայր միայն ես էի, ամէն քննութեան վերջում մենք

քննարկում էի թէ ով ինչպէս է գրել ինձ էլ ասացին, որ ես սխալ եմ գրել իսկ իրենք գրել էին Նոր Տարուայ տօնածառի մասին, մէկ ամիս յետոյ՝ երբ արդիւնքները դուրս ելան մեր թաղի ծայրը հայ խանութի առաջ արաբ տղաները նայում էին թերթի մէջ իրենց անունը ակնկալելով այդ խանութպանը եւ մեր հայ հարեւանուհիները վերցրեցին այդ թերթը եւ իմ անունը կարդացին (մինչեւ հիմա ունեմ ինձ մօտ այդ թերթը) եւ ի հարկէ ես շատ բաւարարուած էի, որ իրենց ուրախացրել եմ մէկ հայ լինելով իմ յաջողութեամբ եւ միւս աշակերտները խոստովանեցին, որ իրօք մեր ուսուցիչները որակեալ ուսուցիչներ են եւ ասեմ, որ մեր արաբերէն ուսուցիչն էր Ապտըլ Կատեր Անատանին, փորձառու արաբերէն լեզուի մասնագէտ էր:

Հայկապում մեր երիտասարդութեան ժամանակ բոլոր հայերը շատ հայրենասէր էին վերջապէս բոլորը Կիլիկիայի տարագիրներ էին անկախ դրանից գաղափարապէս տարակարծութիւններ ունէին սակայն մեր ազգի նեղութեան պարագայում միասնական էին այդ է վկայում իմ յաջորդ յիշողութիւնը: Ի հարկէ մենք Կիլիկեան ճեմարանի ուսանողներս յատուկ տարագ էին կրում եւ ես օգտուում էի տաքսիի սերվիսից եւ վերջի կայանում հայ դաշնակցական մեքինեստներ էին աշխատում, որովհետեւ երբ իջնում էի տաքսիից անմիջապէս սկսում էին երգել «Լեփօ-լէյլ լեփօ լէյլ քաջութիւնը դաշնակցութեան կը վայելէ» ինձ բարկացնելու համար ես էլ ծուռ նայելով շարունակում էի իմ ճանապարհը եւ յանկարծ մի օր էլ տաքսիի մէջ հայ տիկիները կային եւ ես համարձակութեցի նստել, վերջի կայանում այդ տիկիները իջան տիկիներից վերջինը փակեց դուռը չսպասեց որ ես էլ էի իջնելու եւ վարորդը անմիջապէս շարունակեց տաքսին վարել եւ դուռը բացեցի գրքերս թափուեցին դուրս եւ մարմինս կիսով

Շաք.ը էջ 32



ՀԱՃԵԼԻ ՅՈՒՇԵՐ

Շարունակում էք 31-ին

կախույնը դուրս, այդ հայ մեքի- նեստները մի շնչով վազեցին եւ կտրեցին տաքսիի առաջ եւ մի լաւ դաս տուին նրան: Այս դէպքից յետոյ ես քայլելով էի գնում գալիս դպրոց ընկերուհիներին հետ միասին եւ դասերի մասին կարծիքներ էինք փոխանակում, հիմա մի քանիսը այստեղ Ամերիկայում ենք երբ իրար մօտ ենք գալիս կարօտով լիչում ենք այդ հաճելի օրերը:

Յիշում եմ այդ տարիներին քեռիս հանդէսներ էր կազմակերպում եւ ներկայացումներ էր գրում ու բեմականացում եւ այդ ներկայացումներում ներկայ էին լինում Հայկազ քաղաքի քաղաքապետը եւ դեկավար անձերը ոստիկաններն ու պաշտօնական զինուորականները եւ ի հարկէ քեռիս վաշտում էր նրանց յարգանքը, իշում եմ նաեւ մի տարի Լիբանանից հայ դերասաններ հրաւիրեց եւ Հայկազի հայ դերասանների հետ բեմականացրեց Շեքսպիրի Համլէթ ներկայացումը եւ ներկայ էինք մենք հին ու նոր Կիլիկեան ճեմարանցիներս ինչ հաճելի օրեր էին:

Այդ տարիներին ինձ էլ բախտ վիճակուեց երկու տարի դասաւանդել Նոր Գիւղի Կիլիկեան վարժարանում, այնուհետեւ շատ դժուար բաժանուելով իմ համադասարանցիներին եւ մեկնեցի հայրենիք իմ ընտանիքիս հետ միասին նաեւ ուրախ էի, որ պիտի շարունակէի իմ ուսումը:

Անցան տարիներ այն տարին՝ Սովետական Հայաստանի 60 ամեակն էր, ես իմացայ որ քեռիս կենտրոնը հրաւիրել էր քեռիս հաստատուն որոշում չունէր, յետոյ համոզել էին, սակայն քեռիս մեզ դասեց, որ գալու է ցանկացաւ մեզ անակնկալ անել, մի երեկոյ հեռախօսի գանգը հնչեց եւ վերցրեցի այն հարցին թէ «Աքելեանների բնակարանն է» եւ անմիջապէս ճանաչեցի քեռիս ասացի «քեռի դու ե՞ս երկուսս էլ չուզուած էինք,

Վանաձոր էինք ապրում մենք եւ Վանաձոր քաղաքի դեկավարները քեռիս բերել էին Ղարս ռեստորան Վանաձորի քաղաքապետը Պարոն Օհանեանը հարցրել էր քեռիս Աքելեանի անունը ի՞նչ է այսինքն ձեր փեսայի քեռիս էլ ամուսնուս անունն էր տուել քաղաքապետը ասել է «Սարգիսը իմ լաւագոյն ուսանողներից է եղել» եւ նա վարորդի հետ ուղարկեց քեռուս մեր տուն, այդ գիշեր մենք վաշտեցինք քեռիս մինչեւ լոյս գրուցեցինք եւ նա միշտ կրկնում էր թէ Սարգիս ես շատ հպարտացայ քեզանով: Քեռիս շատ կապուած էր մեզ հետ ինձ եւ 5 եղբայրներիս հետ Հայկազում նա շատ աշխատանք է տարել մեզ համար առողջութեամբ եւ դաստիարակութեամբ, երբ հայրիկս քաղաքում չէր լինում մեր նեղ ժամանակ գիշերով էլ հասնում էր մեզ մօտ այդ իսկ պատճառով շատ էր հետաքրքրում մեզանով մանաւանդ, որ ընտանիք չունէր:

Անցան տարիներ մենք եկանք Ամերիկա քեռիս յաճախ հեռախօսով խօսում էր մեզ հետ, ես տեղեկութիւն տուեցի թէ տղաս հայաքուլի մէջ Համլէթ ներկայացումը բեմականացրեց եւ Համլէթի դերակատարն էլ ինքն էր եւ յետագայում արդէն ասացի ոսկէ մետալով աւարտեց, իսկ միւս տղաս արծաթով, մի որոշ ժամանակ յետոյ իմացաւ համալսարանն էլ աւարտեց փայլուն ոսկէ մետալով եւ իմացաւ, որ ես էլ հայկական դպրոցում հանդէս եւ ներկայացումներ եմ կազմակերպել մի օր ինձ ասաց հեռախօսով խօսում էինք «Ազնիւ դու էլ երեխաներդ էլ ինձ էք քաշել, որովհետեւ նմանուող բաներ եմ տեսնում, ես հասկացայ, որ իմ մէջ նա տեսնում էր իր գաւակին եւ երախաներիս իր թոռներին էր տեսնում եւ ի հարկէ ես շատ բաւարարուած էի այն, որ ես էի հպարտացել նրանցով, որ քեռիս եւ մօրաքոյրս պարգեւէլ էին ինձ այն բերկրանքը եւ ես ինչ որ ձեւով հատուցեցի նրանց, միայն թէ շատ

ախոս եմ գգում, որ քեռիս չտեսաւ Անիի հայաքուլի աւարտելը, նա էլ արծաթով աւարտեց եւ պարգեւատրում ստացաւ, որպէսզի երկու ամսուայ գոլեճը սովորի ձրի այնուհետեւ համալսարան ընդունուեց:

Յեղասպանութիւնից յետոյ ընդամէնը մի քանի տարի յետոյ Հայկազում հիմնուեց Կիլիկեան ճեմարանը մեր հայրենիքը արիւնաքամ եղած, սեւ սեւ ամպեր խաւարի միջով մեր տարագիրները ճեղքեցին այդ խաւարը Քրիստոսի լոյսով փարոս դարձած եւ նահատակների ոգով ներշնչուած ուղեկցեցին մեր սերունդները, որպէսզի կերտենք մեր պայծառ ապագան: Այս տարի մենք տօնում ենք Կիլիկեան ճեմարանի 90 ամեակը: Այսօր մենք չպէտք է մոռանանք, որ արաբ ժողովուրդը մեր ազգի համար դժուարին տարիներին օգնեց մեր հազարաւոր տարագիրներին տալով նրանց օթեւան: Երբ ինձ յանձնարարուած էր շարագրութիւն գրել Կիլիկիայի մասին քեռիս կողմից, այդ ժամանակ ես մանկահասակ էի եւ ես ինձ պարտք եմ համարում հիմա գրել Կիլիկիայի մասին եւ շատ ուրախ ես այս առիթը ինձ ընձեռուեց եւ շատ շնորհակալ եմ կազմակերպողներին եւ այս սողերը նուիրում եմ Կիլիկիան ճեմարանի 90 ամեակին:

Դու իմ Կիլիկիա դրախտավայր Երկիր իմ նայիրեան Դրախտի գետերն են քո մէջ հոսում, որ սկիզբ են առել քեզնից եւ դարձան քո երակները Մարդկութեան կեանքէ սկսուեց քեզնից Քո որդիները՝ դեռ Քրիստոսի օրով հաւատքով լցուեցին Վկայ է Եդեսիայի Աբգար թագաւորը, Վասն Քրիստոսի վասն հայրենեաց պայքարեցին Ու ազգովի՝ որպէս Քրիստոս խաչուեցին: Քո գետերը ողողուեցին նահա-

տակներդ արիւնով եւ հիմա այդ արիւնը հոսում է տարագիրներիդ երակներում բաբախում է տարագիրներիդ սիրտը անվերջ

Քանի, որ մօտ է այն օրը՝ որ խաչից իջեցնելու են նահատակներիդ

Եւ կը լինի այն ժամանակ՝ որ Քրիստոսն է գալու խաչով

Եւ վերջապէս իշխելու է արդարութիւնն ու խաղաղութիւնը:

Յիշում եմ իմ բոլոր ուսուցիչներին մանկապարտէզից մինչեւ ճեմարան Պարոն Հրանդ Մուրատեանին, օր. Լիւսին, մանկապարտէզի տնօրէնուհին էր Տիկ. Էֆրոնին, օր. Եփրուհին (որ չորրորդ դասարանից մեկնեց Լիբանան եւ շատ կարօտած եմ) օր. Ժանէթին նրա քրոջ օր. Շամիրամին, Պարոն Յարութիւն Նաճարեանին, Պրն. Ժանին, Պրն. Թալէպ Աշկարին, Ապտըլ Կատեր Անատանին, Պրն. Տիրարեանին ճեմարանի տնօրէնին եւ իր տիկնոջը Տիկ. Արաքսին եւ վերջապէս մօրաքոյրիս Թագուհի Աթոքեանին, որ շատ շնորհակալ է եղել նախակրթարանում բոլոր հանդէսները կազմակերպում էր իր գլխաւորութեամբ եւ փորձառու մանկավարժ է եղել, այդ իսկ պատճառով դպրոցից դպրոց էին խլում նրան եւ շատ շնորհակալ եմ Աստուծոյ, որ կայինք եւ դեռ շատ պէտք է մեզ ես շատ եմ սիրում նրան եւ այս սողերը նուիրում եմ նրան:

Թագուհին եւ Յալէպի մանկավարժների, Առաքինի եւ ու բարի գերուել ենք մենք քո պայծառ մտքին

Ուր էլ որ լինես դու յիշիր Յուրն եւ սիրոյ մեր սրտի Իսկական դու հպարտ հայուհի:

Իսկ այժմ քեռիս մասին: Գէորդ Աթոքեանը հայ ազգի արժանի գաւակ էր, նա Ս. Գէորդ Զօրավարի պէս իր լուսաւոր կան-

Շարք էք 39

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը շնորհաւորէ համայն հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը լաւագոյն բարեմաղթանքներով

ՄԻ ԱԶԳԻ ՈՂՋ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹԱԳՈՒՅԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Այո, բայց բացի հրաշքների երկրից, Հայաստանը նաև մեր հայրենիքն է:

Մի մասի համար դա հայրենի հողն է, միևնույնի համար՝ լեզուն, երրորդների կարծիքով՝ ժողովուրդը: Ըստ ինձ հայրենիքը սրբազան երրորդություն է՝ հողի, լեզուի, ժողովրդի միասնությունը: Հայրենիքը ինձ համար մեր լեռներն են, սէզ ժայռերը, գանգրահեր անտառները, լեռնային երգեցիկ առուակներն ու սառնորակ աղբիւրները:

Այս տարի, Սեպտեմբեր ու Հոկտեմբեր ամիսներին ընտանեօր գտնուած էինք Հայրենիքում որպէս Գէորգ էմիլի խօսքերով ասած Չարմանալի հայ, Որ որպէս հիւր է իր տունը գալիս, Եւ որպէս տուրիստ իր տան մէջ գալիս Ու ետ գնում տուն, Որ Նիս է կոչում Յալէպ կամ Շանհայ...

Իմ դէպքում վերադարձս Լոս Անճելըս էր: Գտնուած էի հայրենիքում տարբեր առիթներով: Նախ պէտք է մասնակցէիք 2 եղբայրների՝ Սարգիս եւ Վազգէն Գրբոյեանների որդիների սուրբ ամուսնութեան արարողություններին: Նաև հրաւիրուած էի մասնակցելու Սփիւռքի ղեկավարների եւ կազմակերպությունների ներկայացուցիչների 3 օրեայ համաժողովին, որպէս Լարբի փոխ տնօրէնուհի: Այդ ընթացքում ունեցայ հարցազրույցներ տարբեր լրագրողների հետ, ելույթներ, բայց այս մասին չէ, որ ուզում եմ գրել:

Ինձ բախտ վիճակուեց իրականութիւն դարձնել իմ տարիների երազանքը, աւելի ճիշտ տենչանքը, տեսնել Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկեան, կանգնել մեր սեփական, բայց գերուած հողերի վրայ եւ... եւ...

Ինձ բախտ վիճակուեց տեսնել

«Եթէ իմ հարցնեն, թէ մեր մոլորակի վրայ որտե՞ղ կարելի է հանդիպել առաւել շատ հրաշքների, ես առաջին հերթին կը տամ Հայաստան անունը»:

Ռոքսել Բենթ

Արարատի խոռված տեսքը, որ վեհաշուք ու պատկառազու թուրքին թիկունք է արել եւ գեղատեսիլ է միայն մեր կողմից, նահապետի իմաստուն համբերութեամբ այն սպասում է իր աստեղային ժամին, երբ իր շուրջը կը համախմբի սիրելի ժողովրդին, բացելով նրա առջև իր առեղծուածները:

Մեր խումբը, որոնց հետ ես ճանապարհորդում էի, կազմուած էր 8 հոգուց, բոլորն էլ բանիմաց անձնաւորութիւններ, որոնց թոււմ նաև Հ.Հ. պատկերասրահի նախկին տնօրէն, այժմ վեհափառի խորհրդական (արուեստի գծով) արուեստաբան Շահէն Խաչատրեանը: Մուսա Լեռցիների Միութեան նախագահ Պերճ Ղազարեանը: (Երթը սկսուեց Երեւանից, այնուհետեւ Թբիլիսից անցանք Արտասան, որից յետոյ Էրզրում, Պինկիոյ, Տիգրանակերտ, (Տիգրակերտ), Ուրֆա, Այնթապ, Մուսա Լեռ, Ատանա, Մերսին որ տեղից բռնեցինք վերադարձի ճանապարհ դէպի Պաթման, Պիթիւս, որտեղ տեսանք Ուիլիւմ Սարոյեանի տունը, Թաթուան, Վան, Արթամար, Իգտիր, Ղարս, Անի: Ճանապարհորդութեան առիթ հանդիսացաւ Տիգրանակերտում Ս. Կիրակոս Եկեղեցու բացումը, որն իր շուրջն էր հաւաքել շուրջ 3000 հայեր, աշխարհի տարբեր երկրներից: Եկեղեցու իշխանաւոր հովանաւորներից երկուքին՝ Նիւ ձրգիից Պրն. Հրաչ Թուֆէյեանին եւ Դամասկոսից Պրն. Գաբրիէլ Չեմբերջեանին անձամբ էի ճանաչում, որոնց խմբի հետ էլ շրջագայեցինք ողջ Տիգրանակերտում:

Յուզուած էինք բոլորս եւ եկեղեցու բակում երբ Հայաստանի հեռուտատեսութեան ներկայացուցիչը ցանկացաւ հարցազրույց ունենալ ինձ հետ, ես կրկնեցի հետեւեալ

խօսքերը. «Կարող են կործանել Այնին, այրել Տաթեւի վանքը, խեղազարութեան հասցնել Կոմիտասին, բայց չեն կարող ասպատակել մեր ժողովրդի հանճարը»:

Կիրակի առաւօտեան Ս. Պատարագի արարողությունից յետոյ մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Ամբողջ ճանապարհին ես ասմունքում էի, այն յորդում էր իմ հոգուց եւ չէր կարող չյորդել, քանի որ խառնուած էին զգացմունքներս ցատուսն ու յուզումը, տիրութիւնն ու ուրախութիւնը, յուսահատութիւնն ու հպարտութիւնը...

Այո, պատմական Հայաստանի 1/10 մասի վրայ է այսօր հայն ապրում ու արարում: Մեր դրախտավայր հայրենիքի արգաւանդ հողերի, հանքերի ու ջրային ռեսուրսների առիւծի բաժինը մեր թշնամու ձեռքում է:

Աչքիս առջև տեղահանուածների անձայր քարաւանն էր, ցնցոտիածածկ, ցաւատանջ մանուկների խեղդուած հեծկտոցը, ծերերի մրմունջն ու ցամաքած ստինքներով երեսամայրերի նուազուն հաւաչանքը:

Աչքիս առջև այրուող եկեղեցիներն ու քարերով ջախջախուած հանճարեղ գլուխներ էին, գետը նետուող կոյսեր, խաբուած ու գինաթափ արուած հայդուկներ, գոհեր՝ խոշտանգուած ու պղծուած, մորթուած սերունդներ, արնաներկ հողեր ու գետեր:

Ամբողջ ճանապարհին հառաչում էի «Դէ եկ վարդապետ, մի խելագարուիր»:

Ուրֆայում գրուցում էինք մի թուրք երիտասարդի հետ: Եղբօրս այն հարցին, թէ քո մէջ կարծես հայի արիւն կայ, որտեղի՞ց են նախահայրերդ, նա պատասխանեց մեծ մայրս հայ է եղել, իսկ նրա

բոջը՝ Եփրատ գետն են նետել...»:

Այնթապի եկեղեցու, որ բացառիկ գեղեցկութիւն ունէր, քիւրտ պահակը անկեղծացաւ եւ ցոյց տուեց մեզ, թէ ինչպէս թուրքերը փորձել են մաքրել խաչաքանդակները, որոնցից մէկը խորանի վրայի խաչն էր, որ մաքրելուց յետոյ հետքերը վերացնելու նպատակով փորձել էին թրքական դրօշակով փակել այն:

Յուզուած էինք բոլորս, մասնաւորաբար ես, եղբայրս եւ մեզ հետ միասին ճանապարհորդող Յարութիւն Կարապետեանը: Երեքս էլ այնթապցի գաւակներ էինք: Վերջինս գլխի ձայնով երգեց Այնթապի հերոսամարտի քայլերգը, որը գրուած է Այնթապի 314-օրեայ հերոսամարտի առիթով: Վերջում երգեցինք «Հայր Մեր»ը եւ արցունքով աչքերով դուրս եկանք եկեղեցուց:

Այնթաքիայում երկու օր մնացինք միջերկրական ծովի ափին Մուսալեռցի երկու հայ եղբայրների հիւրանոցում: Մուսա Լեռան հայ բնակչութիւնը ամփոփուած է Վաքըֆ գիւղի մէջ, որ Թուրքիայի միակ հայկական գիւղն է: Հայկական եկեղեցին ունի թաղական խորհուրդ, տիկնանց միութիւն:

Եկեղեցու բակում զարմացած լսում եմ հայերէն՝ արաբ քրիստոնեայ մի կնոջ շրթերից, որ հարս էր եկել հայի տուն եւ սիրելով հայերին, սովորել էր հայերէն լեզուն:

Միջերկրական ծովի ափին, լեռան գագաթին, ոգեշնչուած արտասանեցի Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» ցանկանալով որ ձայնս հասնի ալիքներին, բոլորին, ասելու համար, որ այս հողը մերն է: Դեռ գալու է հատուցման ժամանակը: Ձեր երազներն իջնելու են երկնքից, Տէր Զօրի անապատների դիերի վրայ կանգնեցուելու է աշխարհի ամենաբարձր յուշարձանը ի տես աշխարհի... Կը գայ այդ օրը.

Շար.ը էջ 39

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

Հ.Մ.Մ.ի Տիկնաոց Օժանդակ Մարմինը կը շնորհաւորէ իր բոլոր անդամուհիներու եւ համայն հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը



ԱՆՀԱՆՂՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏԻ Է ՎԵՐԱԾԻՈՒՄ ՀՐԱՎԱՐԴ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Տարիքի առաջ գնալու հետ մարդ արարածը յաճախ է ինքն իրեն միտք անում, տալիս-առնում, մտածում երկրի ու իր անցած ճանապարհի մասին: Բայց ինչ եղել է՝ եղել է, չես կարող հետ բերել: Կարեւորը նոր սխալներից խուսափելն է, մանաւանդ, երբ այդ սխալները քաղաքական երանգ ու հասարակական հնչեղութիւն են ստանում:

«Հայի ամէնից աննպաստը, գրում է Դերենիկ Դեմիրճեանը, - իր երկրի դիրքն է, սակայն ինքն ամէնից յամառ կառչեց նրան: Որքան անյայտ է թուում իր ապագան, բայց եւ որքան յուսացող է նա»: Քաջալերական այդ տողերի սպաւորութեամբ ես էլ ցանկանում եմ մի քանի խօսք սասել առաջին հայեացքից սարսափելի չթուացող մարդկային բնավորութեան մի յատկանիշի՝ անհանդուրժողականութեան մասին, որի հետեւանքները երբեմն աղճատում են ժողովրդի ազգային նկարագիրը, վտանգում բարոյական արժէքները: Բայց մինչ դրան անդրադառնալը երկու խօսք մեզանում տարածուած մի ուրիշ արատի մասին, որից ապաքինումը, անկեղծ ասած, շատ աւելի դժուար խնդիր է, երեւի թէ այսօրուայ սոցիալ-տնտեսական վիճակից ելնելով... Դա անսահման փողոսիւթութիւնն է, որի դրսեւորման եղանակներից մէկը սովորական կաշառքն է: Ընթերցողը կը հարցնի՝ իսկ աշխարհի ո՞ր ծայրում դա չկայ: Չեմ հակաճառում. միայն թէ մեր փոքրիկ երկրում այդ երեւոյթն իսկական «լայն սպառման» բնոյթ է ստացել: Ինչու եմ ասում «լայն սպառման», որովհետեւ դա ընդգրկում է սոցիալ-հասարակական կեանքի գրեթէ բոլոր բնագաւառները:

Մեխանիկորէն ընդօրինակելով պատմասոցիալական զարգացման միանգամայն տարբեր աստիճաններում գտնուող եւրոպական երկրների «փորձը», անտեսելով դարերի ընթացքում ձեւաւորուած մեր

ժողովրդի ազգային առանձնաչափութիւնները, առաւել եւս՝ վերջին 70 տարիներում ձեւաւորուած բնավորութեան գծերը, շուկայական յարաբերութիւնները մեզանում սկզբից իսկ ստացան յախուռն ու անկանոն բնոյթ: Հետեւանք եղաւ այն, որ ժողովուրդը երկփեղկուեց, տարանջատուեց: Անսովոր արագութեամբ ծնուեցին մեծահարուստներ՝ առաջ բերելով աղքատների զգալի մի խաւ: Հարուստներն այսօր աւելի հզօրացած՝ իրենց բոլոր խնդիրները լուծում են բարձր մակարդակով. նրանց երեխաները կարող են սովորել աշխարհի հեղինակաւոր բուհերում. նրանք իրենց հանգիստը կարող են անցկացնել աշխարհի գեղեցիկ անկիւններում եւ, վերջապէս, հիւանդութեան դէպքում՝ բուժուել արտասահմանեան գերլաւագոյն կլինիկաներում: Այստեղ են ասում՝ «փող ունես, մարդ ես, կ'ապրես: Փող չունես, կորած ես»: Եւ իրօք, ոչ միայն չունեւոր, այլեւ միջին կարողութեան տէր մարդը՝ մտաւորականութիւնը, ինտիլիգենցիան, իր կեանքը փրկելու համար չի կարող հազարաւոր տոլարներ տալ լուրջ վիրահատութեան համար: Այսօր հիւանդ մարդը խուսափում է հիւանդանոց գնալուց, դեղատուն մտնելուց... սարսափելի գներ: Ընթերցողը թող Եւրոպան կամ Ամերիկան չիջի. այնտեղ իրենց քաղաքացիների համար որոշակի արտօնութիւններ կան: Անարդար է, եւ մինչեւ ե՞րբ: Յետոյ ոմանք զարմանում են, որ արմատական ընդդիմութեան միջոցառումներին, որոնք աւելի պոպուլիստական են եւ չեն փայլում իրատեսական ծրագրերով, տասնեակ հազարաւոր մարդիկ են մասնակցում: Ժողովուրդն իր սոցիալական վիճակը բարելաւելու համար յոյսը չի ուզում կորցնել: Ոմանք էլ, եւ ոչ քիչ թուով, իրենց եւ իրենց երեխաների ապագան տեսնում են օտար ափերում: Ի դէպ, երախտագիտութեան զգացում էս ապրում, իմանալով, որ մեր մի շարք հայրենասէր մեծահա-

րուստներ, մասնաւորապէս Գագիկ Ծառուկեանը, Ռալֆ Յիրիկեանը եւ այլք, ամէն կերպ աշխատում են թեթեւացնել ժողովրդի հոգսերը՝ կազմակերպելով բարեգործական զանազան ակցիաներ: Ակցիաներով սակայն արմատական հարցեր չես լուծի:

Ինչպէս հիմա ընդունուած է ասել՝ մենք «ըմբռնումով» ենք մօտենում ստեղծուած վիճակին՝ շրջափակում, ռազմական պարտադրուած մրցակցք (այլապէս մենք չենք կարող դիմակայել դաւադիր թշնամուն): Դրանք ոչ միայն միլիոններ, այլեւ միլիարդներ են պահանջում: Միանգամայն հասկանալի է: Բայց երբ նայում ես մեր որոշ գորեղների կեանքին ու կենցաղին (արտասահմանեան շատ մեծահարուստներ կը խուսափեն նման շուկայութիւններից), մտածում ես, որ կան ռեալ տարբերակներ, ռեալ սուրներ ժողովրդական լայն խաւերի վիճակը թեթեւացնելու համար: Հարկաւոր է համարձակութիւն, վճռականութիւն... նոյնիսկ չզիջելով փափուկ կեանք ապահովուած մտերիմներին: Այդ սուրբ գործին պետութեանը պէտք է զօրավիզ լինեն հայրենակցական ու հասարակական զանազան կազմակերպութիւններ, նաեւ, առաջին հերթին, եկեղեցին: Լաւ է, որ ձախ ու աջ նոր եկեղեցիներ են կառուցուում (չեմ խօսում ճարտարապետական նկարագրի մասին, աւաղ, հնի պասիւր նմանակումներ), չնայած որքան շատանում է նորակառոյց եկեղեցիների թիւը, այնքան աշխուժանում են աղանդաւորները: Սպասենք առաքելական մեր եկեղեցու սպասաւորների զաղափարախօսական աշխատանքների աշխուժացմանը, թող իրենք ընտրեն պայքարի ձեւերն ու միջոցները: Այսօր նորակառոյց եկեղեցիներից աւելի կարեւորում է ծանր վիճակում յայտնուած հաւատացեալներին նիւթապէս զօրավիզ լինելը:


Հիմա անցնենք մեր հիմնական խնդրին՝ անհանդուրժողական

ութեանը, որն ինչ-որ չափով համարժէք է յիշաչարութեանը, այնտեղից էլ մի քայլ է վրէժխնդրութիւնը:

Այստեղ, իհարկէ, չես կարող կախարդական փայտիկով մէկից ամէն ինչ փոխել: Այդ վտանգաւոր յատկանիշները ամուր դիմակալութիւն ունեն բարոյական գործօնների ազդեցութեան նկատմամբ: Բայց հոգեւոր ժողովուրդ ենք համարուած եւ, այնուամենայնիւ, գաղափարական դաստիարակչական նպատակասլաց աշխատանքի դէպքում գուցէ ինչ-որ բան կարելի լինի շտկել: Լուսահոգի ակադեմիկոս Էմիլ Գաբրիէլեանը մահից մէկ տարի առաջ իմաստուն յօդուած էր գրել «Հայաստանի Հանրապետութիւն» թերթում (22.XI.2009). «Խօսքը դանակից վտանգաւոր է, - գրում էր նշանաւոր բժիշկը, - բալասանից հօր. նախանձը կարող է հանգեցնել մանր հիւանդութիւնների»: Բժիշկ հոգեբանը նկատում էր, որ նախանձը, յիշաչարութիւնն ու անհանդուրժողականութիւնը առաջին հերթին դրանք կրողին են վնասում: Յիշաչար ու նախանձ մարդիկ միշտ դառնացած են ինչ-որ բանից, որովհետեւ նրանց լափում են ոչ միայն սեփական անյաջողութիւնները, այլեւ՝ ուրիշի յաջողութիւնները: Հին խօսք է՝ մի թունաւորի ուրիշի կեանքը, քանի որ այդ թոյնից քեզ էլ բաժին է մնում:

Անհանդուրժողականութիւնը, յիշաչարութիւնը ուղեկցում են (կամ՝ արտայայտում) նաեւ սպանիչ բանբասանքով, մէկը տասը դարձնելով, մարդուն վարկաբեկելու, խայտառակելու եղանակով: Վերջերս թերթերից մէկում հանդիպեցի վրէժխնդրութեան մի տիպար փաստի: Ամբաստանում էին մշակութային մի ոչ մեծ հաստատութեան տնօրէնին: Բարեբախտաբար, ես լաւ գիտեմ այդ մարդուն՝ լայն ինտելեկտ ունեցող, բարեկիրթ անձնաւորութիւն: Յօդ-

Շար.ը էջ 35



ԱՆՅԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏԻ Ե ՎԵՐԱԾԻՈՒՄ

Շարունակում էք 34-էն

ուածի հեղինակն ինչ-որ մի բանից դժգոհ (գուցէ եւ այդ ընթացքում տնօրէնը մի սխալ թոյլ տուած լինի, հնարաւոր է), սակայն մոռանալով այն լաւը, եւ ոչ քիչ, որ տնօրէնն արել է, մոռանալով նրա անցած կեանքի ուղին, անխնայ պահարակում էր... Բերեմ մէկ ուրիշ օրիակ. Մանկավարժական համալսարանի կառավարական խորհրդի նիստում երկու վաստակաշատ գիտնականեր պատշապանեցին հանրապետութեան ղեկավարներից մէկի թեկնածութիւնը այդ խորհրդի նախագահի պաշտօնում ընտրուելու համար: Իրօք, ամէն ինչով արժանաւոր անձնաւորութիւն: Չարամիտների պատասխանը չուշացաւ. յաջորդ առաւօտեան ընդդիմադիր թերթերից մէկում կարողում ենք անպատասխանատու եւ շատ վիրաւորական խօսքեր այդ գիտնականների հասցէին: Մի կողմ թողնենք հանրապետութեան ղեկավարների նկատմամբ տրաֆարետային դարձած ատելութիւնը (երեւի թէ ոչ մի երկրում նման ծայրայեղութիւն չկայ), սակայն այդ գրչակները եթէ մի քիչ ծանօթ լինէին վերոյիշեալ դասախօս-գիտնականների վաստակին, նրանց հրատարակած տասնեակ գրքերին, նրանց միջազգային ճանաչմանը, երեւի թէ իրենց գուսպ պահէին: Բայց հիմա մողա չէ կարգալը: Նրանք տուրք են տալիս անհանդուրժողականութեանը, անզպուածութեանը, վրէժ լուծելու (թէ ինչի՞ց) անհագուրդ կրքին:

Խօսքի ազատութիւնը բոլորովին չի նշանակում սանձարձակ պահուածք, վիրաւորանք ոչ համախոհ մարդկանց նկատմամբ: Ինչպէս չի չի յալտնի ասացուածքը՝ «Հեշտութեամբ վիրաւորում են նրանք, որոնք գոհ չեն իրենցից»: Եւս մի օրինակ, որ խորապէս վշտացնում է ինձ: Իմ լաւ գործընկերներից մէկը, յիշուի շնորհաշատ եւ շատ համակրելի անձնաւորութիւն, մի գեղեցիկ օր իմանալով, որ ես չեմ կիսում իր քաղաքական հայեացքները, փոխեց վերաբերմունքն իմ նկատմամբ, թւում է, թէ չի էլ ուզում տեսնել ինձ: Ափսոս, շատ ափսոս, նման անհանդուրժողականութիւնը խաթարում է կրթնակալի, նաեւ ժողովրդի միասնութեան ներքին հոգեկան կապը: Իմ լաւ բարեկամ, տաղանդաւոր գրականագէտ Դաւիթ Գասպարեանը մի առիթով գրում է. «Մարդկային լիակատար արժէք-

ները ձեւաւորում են միմիայն պետական, հանրային, ընկերային, մշակութային եւ անձնային հասուն միջավայրում»: Ինչը, ցաւօք, մեզ մօտ չկայ: Թշնամութեան հասնող անհանդուրժողականութիւնը միայն լարում է, առանց այն էլ լարուած մթնոլորտը:

Յաւալին այն է, որ անհանդուրժողականութեան, աններողամտութեան անհատական-անձնական յատկանիշները երբեմն վեր են ածուած խմբային-կուսակցական գաղափարական մօտեցումների, տիրապետող են դառնում նոյնիսկ նրանց քաղաքական պլատֆորմում: Ըստ էութեան, այդ դէպքերում արդէն ակնառու է դառնում մեզանում դեմոկրատական բարեկիրթ փոխարարութիւնների պակասը: Այս կամ այն լիդերի անհատական-մասնաւոր կարծիքը, երբեմն նոյնիսկ խոցելի, խիստ սուբիեկտիւ, ընդունում է խմբաւորման կողմից: Ընկերները չեն համարձակում ասել՝ դա ճիշտ չէ: Մի ուրիշ վատ բան էլ կայ: Բորբոքուած ժողովրդի սէրը կամ վստահութիւնը չկորցնելու համար լիդերները երբեմն չեն համարձակում նրանց հակառակ բան ասել, կանգնեցնել վտանգաւոր անհանդուրժողականութեան ընթացքը: Յիշում եմ 90-ականների սկիզբը: Ինչպիսի վրիպումներ եղան: Լիցքաւորուած մասսաներին կանգնեցնել չէր լինում: Կարծես վերակենդանացել էր «քանդենք հինը, կառուցենք նորը» բոլշեւիկեան արատաւոր կարգախօսը:

Երբեմն այնքան ենք լարում ժողովրդին, անառարկելիօրէն հանդուած, որ նա այլեւս ոչ մի բանի չի հաւատում, չի հաւատում՝ հակառակ արդիւնքների, վերջում ապրում խոր յուսալքութիւն...

Այդ յախուռն ընթացքից փախ հասաւ նաեւ մշակույթին: Խորհրդային համակարգը նոյնացնելով ուսու ժողովրդի հետ (մոռանալով, որ խորհրդային կարգերը հաստատելու համար որքան ազնիւ հայ յեղափոխականներ կային), հունից դուրս եկած մասսաները փորձում էին աւերել արուեստի յուշարձանները, հանճարեղ գրողների արձանները: Իսկ լիդերները... լուծում էին: Փառք Աստծոյ, ինչքան լաւ էր, որ Ստալինի արձանը խորհրդային շրջանում հանուեց, այլապէս նրա հոյակապ պատուանդանը՝ մեծն իսրայէլեանի հանճարեղ գործը, հողին կը հաւասարուէր, ինչպէս դա արուեց Հանրապետութեան հրապարակում գտնուող Լենինի արձա-

նի բարձրարուեստ ու սքանչելի պատուանդանի հետ: Դա աններելի էր... Սրանք արդէն մշակութային մարգում քաղաքական անհանդուրժողականութեան, եթէ աւելի խիստ բառ չօգտագործենք, տխուր օրինակներից են: Յարիզմի երգիչուեալ թշնամի, սարսափելի դաժան ու չիշաչար Վլադիմիր Լենինը ժամանակին զուշացնում էր յեղափոխական մասսաներին՝ չոչնչացնել, չքանդել արուեստի գործերը, անկախ, թէ դրանք ում են ներկայացնում: Լենինի արձանը մեզ բոլորովին պէտք չէր, ընդհանրապէս նա մեր ժողովրդի համար օգտակար որեւէ բան չի արել, եթէ հակառակը չասենք, բայց այդ արձանի պատուանդանը արուեստի սքանչելի գործ էր եւ կարելի էր օգտագործել: Պէտք է իրատես լինել, նաեւ հեռատես: Ժողովուրդն ասում է՝ թուրքը լաւ չէ, խօսքը փորձաշատ է: Խորամանկ ու ծածկամիտ իշամ Ալիեւը, որը հոգու խորքում ատում է ուսմանը, այսօր ամէն մի առիթով պարծենում է ուսմանը մի մօտ, թէ անկախութեան խառնակ տարիներին Պաքում ոչ մի ուսական դպրոց չի փակել: Իսկ մեզ մօտ... մեր «յեղափոխականներին» թւում էր, թէ նրանք են խորհրդային երկիրը կործանում (ականջները կանչի Տետչերի, Գորբաչովի, Յակովլեւի, Շեւարճեանի, ամերիկեան հակահետախուզութեան ղեկավարների) եւ կարծում էին՝ ամէն ինչ պէտք է քանդել, ինչը խորհրդային էր: Աւերում էինք մենք մեր տունը: Այդ տարիներին նոյնիսկ մի հոստի բերած «փաստերի» հիման վրայ կանգնեցրինք հայկական ատոմակայանը՝ միլիոնների վնաս տալով մեր ժողովրդին ու աղքատ պետութեանը: Չեմ խօսում նրանց կատարած միւս «հերոսութիւնների» մասին՝ հակայ կառուցների կոպեկներով սեփականաշնորհելը, «Իւրատեսակ» բանկերի ծնունդն ու ժողովրդի ունեցուածքի յափշտակումը, որն ասեմ, որը թողնեմ... Թւում է, նախկին խորհրդային ոչ մի հանրապետութիւնում նման անհեռանկար անհամբերութիւն չի եղել: Ընդդիմութիւն բոլոր երկրներում էլ կան, նաեւ մեր հարեւանների՝ Վրաստանում, Ատրպէյճանում, բայց ոչ մի տեղ տնտեսութիւնն այդպէս չաւերուեց: Ոչ մի տեղ ընդդիմութիւնն իր սիրտը «բաց չի անում» եւրոպական կամ ամերիկեան «մարդասիրական» կազմակերպութիւնների առջեւ, ինչպէս մերոնք: Իսկ ով է շահում եւ ով տուժում:

Տուժում է Հայաստանը, օգտում են նրա թշնամիները: Մի՞թէ դժուար է տեսնել, թէ Եւրոխորհուրդը ինչպէս է վերաբերում այլ երկրներում կատարուած նման իրադարձութիւններին (մեծ ներողամտութեամբ), եւ ինչպէս մեզ՝ «պապայական» իրաւունքով:

Փաստօրէն մեզ մօտ գաղափարական քաղաքակիրթ պայքարը հեշտութեամբ վերածուած է անհանդուրժողականութեան, ատելութեան, վրէժխնդրութեան: Այսօր մեր հասարակայնութիւնը անհանգստացած է բանակում կատարուող սպանութիւններից: Մեղադրում ենք վերից վար բանակի հրամանատարութեանը: Դէ, իհարկէ, չես կարող չմեղադրել: Բայց կայ նաեւ բացարձակ մի ճշմարտութիւն: Մեծ հաշուով բանակը մեր հասարակութեան հայելին է. նոյն բարքերով դաստիարակուած երիտասարդներ, ցաւօք, նաեւ ինտելեկտուալ շատ ցածր մակարդակով: Պարզ է, որ այստեղ անհանդուրժողականութիւնը, չիշաչարութիւնը պէտք է պոռթկան, սահմաններից դուրս գան՝ վերածուելով գործնական վրէժխնդրութեան:

Ժողովրդին չի կարելի լարել այն աստիճան, որ այլեւս անկառավարելի լինի:

Շուտով սկսուելու են Ազգային ժողովի ընտրութիւնները. անհանգիստ եմ, մտավախութիւն ունեմ՝ չկրկնուեն նախորդ նախագահական ընտրութիւնների դէպքերը: Չեմ ուզում յիշել Ազատութեան հրապարակի մղձաւանջային օրերը... սիրում ենք ամէն առիթով ասել՝ «հին քաղաքակրթութեան ժողովուրդ ենք», բայց քաղաքակիրթ ժողովրդի ամենակարեւոր յատկանիշը բարեկիրթ լինելն է, հանդուրժողականութիւնն է, մարդասիրութիւնը եւ բարոյական միւս արժէքները գնահատումը: Ծիշտ կը լինէր նախապէս հանդամանօրէն պատրաստուել ընտրական գործընթացին. ընդդիմութեան շարքերում, իրօք, շատ կան խելօք տղաներ... Թող գտնեն տեխնիկական հնարանքներ՝ ամէն ինչ հսկողութեան տակ պահելու համար: Ես շատ կ'ուզէի, որ մոռանայինք մեզ վերագրուած եւս մի յատկանիշ. «Հայի չափը չափազանցնելն է, գարմանալի հաւասարակշռութիւն, որը ծայրահեղութեան մէջ է»:

ՀՐԱՎԱՐԴ ՅԱԿՈՒԲԵԱՆ
(Գիտութեան վաստակաւոր գործիչ, արուեստագիտութեան դոկտոր-պրոֆեսոր)



A.B.A. INSURANCE SERVICES





Season's Greetings

Շնորհակալութիւններ

Պոնակաւ Օրտրոս Սոնիքով

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՈՍ

ՄԱՐՈՆԵԱՆ



- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Annuity
- Estate Planning
- Will & Living Trust
- Workman's Comp.
- Mortgage Protection

- IRA

818 **500-9585** 818 **269-0909** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

ՄԱՍԻՍ - 2012

ԱՄԱՆՈՐԸ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԱԲԵՏԻՍ

Ռ. ԿՈՐԻԷՆ

*Ահա առաջին Ամանորը աղանա-
կերպ մուտք է գործում իւրաքան-
չիւրիս բնակարանը: Նա
խաղաղութեամբ, համեստութեամբ,
արդարամտութեամբ, հրապուրան-
քով եւ խոհերով է ներս մտնում:
Ամանորին յաջորդում է Յիսուսի
Ս.Ծնունդը, երկու ոգեւորութեան
առիթ, վերանորոգ մտքի եւ հոգու
տօներ, ընդառաջ գնանք նրանց եւ
մէկգմէկու շնորհաւորենք, քանի որ
նրանք*

Ուրախութեան աւետաբեր են,
Մէկգմէկու ոգեւորելու տօներ են:
Խաղաղութեան խորհրդանիշ
են,
Մէկգմէկու հաշտութեան տօներ
են:
Հոգու մաքրութեան առաջնորդ
են,
Մէկգմէկու չարից հեռացնող
տօներ են:
Յոյսի եւ հաւատքի երաշխիք են,
Մէկգմէկու վստահելու տօներ են:
Հաճութեան յար միջոց են,
Մէկգմէկու հաճելի լինելու
տօներ են:
Ներողամտութեան յորդորիչ են,
Մէկգմէկու ներելու տօներ են:
Կարեկցանքի սփոփիչ են,
Մէկգմէկու օգնելու տօներ են:
Նւիրումի խորհուրդ են,
Մէկգմէկու զոհողութեան տօներ են:

Պարտաւորութեանց առաջադ-
րանք են,
Մէկգմէկու խոստումը կատարող
տօներ են:
Նոր արարութեան ներշնչանք
են,
Մէկգմէկու արարումով ուրա-
խացող տօներ են:
Աշխատանքի մղիչ եռանդ են,
Մէկգմէկու քաջալերող տօներ
են:
Մեծարանքի գերարժեք են,
Մէկգմէկու արժեւորող տօներ են:
Հայրենիքն ու ազգը սիրելու
տօներ են,
Մէկգմէկու պատուելու տօներ
են:

*Ահա՛, այս մտորումներով
շնորհաւորում ենք Ամանորը՝ 2011
թիւր եւ Ս. Ծնունդը, թող ժամանող
տարին նորանոր յաջողութե-
աններով Ձեր կեանքը զուարթա-
ցնող ու ծաղկեցնող լինի:*

**ԹՈՂ ԳԱՆՈՒՄՏԻ
ԲԱՐԵՔԵՐ ԼԻՆԻ**

Ամանոր հին եւ նոր օրերի
Մուտքը թող բարի լինի,

Որ մտնում ես ամէն մի տուն,
Խի՜նդ ու ժպիտ թող լինի:
Դու գալիս ես ճիշտ ժամին,
Չես վրիպում ոչ մի տարի,
Սարեր, ձորեր ու վիհեր
Ծովեր, ովկիաններ անհուն
Բուք ու բորան ու սառնամանիք
Քեզ չեն վախեցնում երբեք,
Գործն բարի անվեհեր
Յաղթահարում ես ամէն
տարեք:

Ժամացոյցի թիք-թաք, թիք-
թաքերով,
Դափերի հարուածներով,
Շեփորների նուագներով,
Ձանգերի դողալներով,
Խանդավառ կանչերով
Պերճ եղեւնիք գարդարած
Շողոշողուն ճրագներով
պճնուած
Երեխաներ շուրջ պար բռնած
Քեզ են դիմաւորում
հրապուրած:

Դու մարդ-էակ չես, որ
շօշափուես,
Դու մարմին չես, որ տեսնուես,
Դու մտային յիշողութիւն ես,
Ասուած ու գրուած պատգամ
ես,

Տոմարների հաշուարկումով
տարին է՛ որ բոլորում է,
Քեզանով նորն է սկսուում,
Յունուար մէկով ես հռչակում:
Ամանոր ես, բայց խորհրդաւոր,
Քեզ խորհրդանշողն է կաղանդ
պապէն:

Նոր ես, սիրելի դառնաս,
Տօն ես՝ ուրախացնես,
Հրճանքի եւ զւարճանքի, ու
փայփայանքի,
Նորութեան ու թարմութեան,
Նորոգման ու մաքրութեան,
Խորհուրդը դառնաս:

Դու մուտք ես գործում ամէն
տնից ներս՝
Մ ե ծ ա հ ա թ ու լ ս տ ն ե թ ի
ապարանքներ,
ճոխութեան ու շռայլութեան մէջ
մխրճուած,
Բեհեզներով ու մետաքսներով
հագնուած
Ապարանջներ, ականջկիթներ ու
բրոշներ
Մատանիներ ու վզնոցներ
մարգարտեայ,
Ձարդերով պճնուած որպէս
պուպրիկներ,
Մեղաններ բարիքներով շռայլ:
Դու մուտք ես գործում ամէն մի
տնից ներս՝
Խրճիթներ անհրապոյր,

Հիւանդ ու անկար տնեցիներ,
Կարօտ հացի ու գուրգուրանքի:
Ոչ խի՜նդ ու ուրախութիւն կայ,
Ոչ ժպիտ ու խայտանք կայ:
Ի՞նչ կասեն սրան...

Մէկը կարօտ, միւսը յղփացած:
Դու մուտք ես գործում ամէն մի
տուն՝
Սգաւոր տնից ներս,
Հարագատ է կորցրել,
Տան հացբերն է մահացել,
Ցաւ է՛ վիշտ ու մորմոք...
Ինձ ասա՛, հէ՛յ Ամանոր,
Ինչո՞ւ այսպէս պիտի լինի...
Թող որ քո մուտքով ոչ մի տուն
Ոչ խեղճ լինի, ոչ անկեալ,
Ոչ սրտակից կորցրած լինի,
Ոչ տխրութիւն ու ցաւ լինի,
Գալովդ մխիթարանք եղիր,
Վիրաւոր սրտեր ամոքի,
Անխղճին գութ տուր,
Թող կարեկից լինի,
Արեւահամ մարդ լինի:

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Գալեցող տարւայ սեմին ենք
կանգնած,
Հինը մեկնելու վրայ է՛ յուշը ետ,
Նա այնքան էլ չի վռագում,
Ժամկէտին է սպասում,
Նա յամենում է տարին բոլորի,
Կծիկը աւարտին հասցնի,
Կամենում է վերջում՝
սպիտակով նախշեր կծկի,
սակայն անօգուտ,
քանի որ կարմրադեղին գոյնը
արդէն մատնում է նրա էութիւնը:
Ինչ յոյսերով էինք օրօրում
հնին կապուած...

Գանկութիւններ պէս-պէս՝
խաղաղութիւն աշխարհին,
բարգաւաճում երկրներից,
ապահով կեանք մարդկութեան,
պատերազմներից հրաժարում,
արդարութեամբ տնօրինում,
իրաւագրուած ժողովուրդների
պ ա հ ա ն ջ ն ե թ ի ն
վերահասութիւն,
պատմական սխալների ճշտում,
հայութեան հարցի լուծում,
ցեղասպան թուրքիայի
դատավարութիւն,
ինչ վսեմ սպասելիքներ,
մեր մոլորակը գեղեցկացնող՝
բուրաստան գունակ-գունակ
ծաղիկներով:
Բայց որ մէկն է իրականացել,
ամէն ցաւ անբուժ է մնացել,
պայթարներ ամենուրեք,
գերմեծերն իրենց կամքն են
թելադրում,

նրանք վերից են մայում,
տկարին են օգտագործում:
քանի բեւեռացումը,
սպառազինումը, գոռոզութիւնը եւ
ընչաքաղցութիւնը տիրակալ են՝
ոչ տեսնենք արդարութեան
աղանու թեւածում:

գիտուն մարդիկ են դա ասում,
նրանք են, որ
ժողովրդասիրութեամբ եւ
հայրենասիրութեամբ
պահում են աշխարհը քարը
քարի վրայ:
Նրանք երբեք չեն
յուսահատուում,
խոհեմաբար եւ
համբերատարութեամբ են առաջ
գնում,
բարի խորհուրդներով են
հրապարակ իջնում՝
հոգու եւ մտքի նորոգութեան,
շ ը ա հ ա յ ե ց ո ղ ու թ ե ա ն ,
կարեկցութեան,
ժ ո ղ ո վ դ ա ս ի թ ու թ ե ա ն ,
հանդուրժողականութեան եւ...

մէկն գմէկու նկատմամբ սիրոյ
եւ յարգանքի զգացումներով:
Ահա Ամանորն է գալիս
առաքինի,
տեսնենք այս տարի ինչ կը
կատարուի,
Յոյս Աստուծոյ յուսախափ չենք
լինի:

Հրաժեշտ են տալիս գնացող
տարուն,
Անցնում են անտարբեր մտքով
աննկատ
Ինչպէս անցնում են անպտուղ
ծառի մօտից
Սպասելիքներ շատ մնացին
անկատար:

Չեղածի համար ոչ մտածում են,
ոչ տրտմում
Թերացումը պէտք է փնտրել
արարքներում,
Անճարակութիւնը կեանքի
ոլորտներում,
Որը մեզ դէպ ձախողանք է
առաջնորդում:

Պէտք չէ ահ զգալ մտքերով մութ
ու մոլոր,
Ամէն ձախողանք նոր ճամբայ է
բացում,
Փորձ է կուտակուում նոր
մտքերով լուսաւոր,
Ապա մեզ դէպի յաջողութիւն
ուղեկցում:

ՉԵՍ ԱՍՈՒՄ


ՆԵՐՍԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Չեն ասում շնորհաւոր
Քեզ
Ով մարդ:
Մէկ թիզ էլ մօտեցար
Մայրամուտին
Ու կարճուեց օրերիդ ճանա-
պարհը:
Երբ հասնում ես վերջակէտին,
Երբ թեքում է ողնաշարդ գե-
տին
Երբ մաշուում է պաշարը օրերիդ՝
Ով մարդ
Քեզ
Չեն ասում շնորհաւոր:

ՏԱՐԵՍՈՒՄԻ ՍԵՄԻՆ

ՆԵՐՍԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Մի տարի էլ անցաւ մեր կեան-
քից,
Պոկուեց եւս մի էջ,
Անհունի մէջ կորաւ, խաւարեց
Անցեալը, սնամէջ...
Այս է կեանքը, անցնողը՝ կ'անց-
նի
Կը ծնուեն նոր մարդիկ,
Կը սպասեն գալիքին կարօտով,
Որ ապրեն երջանիկ.
Նրանք էլ մեզ պէս, կ'անցնեն
յաւէտ,
Ցաւով, ու ծիծաղով,
Նորից, նորից, նորերը կը գան,
Երգերով ու խաղով...



ՄԱՍԻՍ - 2012

ՀԱՍԱԿԻ ԳԻԾԸ
ՈԱՖԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆ

Այս դուռը շատ բան է տեսել, սիրելի Իրինա, նա հին է քեզնից, ինձնից ու քո հայրիկից ու դեռ պապիկից էլ ծեր է: Այս դռնից շատ տարիներ առաջ քո հայրիկը գնաց ու շատ տարիներ յետոյ քեզ հետ միասին վերադարձաւ: Դու նոր էիր ծնունդը ու գալիս էիր հեռավոր հիւսիսից: Այս դռների մէջ նստել է քո տատիկը եւ սպասել իր որդիներին վերադարձին: Այս դռների վրայ մեր հասակի գիծերն են եղել: Կանգնել ենք մենք, իսկ հայրիկը, այսինքն քո պապիկը, գծել է, թէ որքան ենք հասակ առել: Նա գծում էր ամէն տարի, մինչեւ մեծացանք ու չգծեց: Եկան ներկարարները, ներկեցին դռները, ու կորան հասակի գծերը: Այժմ մենք կռանում ենք, ծերանում եւ ոչ թէ հասակ առնում: Հիմա պապիկը համարեա հաւասար է քեզ: Իսկ դու գիտե՞ս, որ մի ժամանակ նա միջահասակ տղամարդ էր, ասենք, ես էլ չեմ չիշում, թէ երբ է նա միջահասակ եղել:

Ուրեմն այդպէս, այս դուռը շատ բան է տեսել, սիրելի Իրինա, եւ հիմա նրա վրայ ամէն մի Նոր Տարի թողնում ենք քո հասակի գիծը: Ամէն տարի դու հասակ ես առնում ու արդէն աւելի բարձր ես, քան դրան բռնակը: Արդէն ընկել են քո առջեւ կաթնատամները. տատիկը իր գոգնոցի գրպանում պահում է փոքրիկ-փոքրիկ ատամիկները, որ կոճի թելով նա հանել, այո, կոճի թելով: Ինչ բախտաւորութիւն, այն, ինչ խանգարում է քեզ, կոճի թելով անգամ կարելի է հեռացնել, իսկ մենք մեր հիւանդ ատամներից տանջալից ցաւով անգամ չենք կարողանում ազատուել ու ապրում նք հիւանդ ատամների, պարտութ-

իւնների, ամօթի զգացումներ հետ միասին, մեր ողջ կեանքում: Մենք էլ հասակ չենք առնում, ու ոչ ոք չի գծում մեր հասակի գիծը, եւ թերեւս լաւ է, որ չեն գծում.. Նոր տարի է, դու նորից կանգնել ես դրան շրջանակին յենուած, պատրաստուած ենք նշել հասակդ: Դու արդէն բարձր ես աւելի, քան բռնակը, գլուխդ յետ ես գցել ու մի փոքր էլ բարձրացել ոտքերիդ վրայ: Քո ոսկուն տուող մազերը ձմեռացին օրուայ լուսաւորութիւնից շողում են թեթեւակիօրէն: Գծում ենք Նոր Տարուայ հասակիդ գիծը, եւ պարզուած է, որ անցեալ տարուայ համեմատութեամբ երկու մատնաչափ բարձրացել ես: Ցնծում է տունը, ուրախանում ենք բոլորս, դու հպարտ-հպարտ հեռանում ես դռնից, այն դռնից, որի վրայ մի ժամանակ մեր հասակն ենք նշել, եւ ես ահամայ մտածում եմ, թէ ինչ լաւ է, որ աշխարհը խաղաղ է, ինչ լաւ է, որ քո հասակը ենք չափում: Թող ամէն մի Նոր Տարի դռների վրայ երեխաների հասակը չափեն եւ ոչ մեծերինը, որովհետեւ եթէ մերն են չափում, ուրեմն գինուորական հագուստներ պիտի հագնենք, ուրեմն էլ փոքրերը հասակ չեն առնի, եւ նոր տարիներն այսպէս խաղաղութեամբ չեն գայ:

Այսպէս էի մտածում, երբ դու մտեցար ինձ ու ասացիր. - Ես դեռ շատ-շատ պիտի հասակ առնեմ, այնքան շատ, որ դրան վրայ էլ գծելու տեղ չլինի, որ ամպի վրայ գծեն...

Թող այդպէս լինի, իմ ոսկեհեր, փոքրիկ Իրինա, թող ամէն մի Նոր Տարին խաղաղութեամբ գայ, եւ դու հասնես ամպերին, ու ձեր սերունդի հասակի գիծը թող երկնքի վրայ գծուի:

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՆՈՒԷՐ ՍԸ՝
ԿԱՐՕ ՀԱՅԹԱԵԱՆԻ
«ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ
ԽՕՍՔԵՐԸ» DVD-Ն

Աստուծոյ խօսքը, Սուրբ Գրային համարները, Աստուածաշունչ մատեանը ինքնին բոլորիս կը պատկանին: Մարդկութեան պատմութեան մէջ ամէնէն շատ կարդացուող, աշխարհի բոլոր լեզուներու թարգմանուած խօսքն է այդ, որ Կարօ Հայթայեան երկու տեսակաւուակներու (DVD) միջոցով կը ներկայացնէ բարեպաշտ ու հաւատացեալ Հայ հասարակութեան: Որպէս ընդհանուր խորագիր, ան կը կրէ «Աստուծոյ յաւիտեանական կենաց խօսքերը» (The everlasting word of God): Ե՞րբ, եթէ ոչ այսօր, մեքենայացած ու սրբութիւններ ոտնակոխ ընող այս դարուն, այս օրերուն, կարիքը ունինք վերանորոգուելու հոգիով ու մտքով, մաքրուելու նիւթապաշտական աւօրեայ հոգեբէն: Եւ ահա, Կարօ Հայթայեան, իր հնչեղ ձայնով, տիրական ներկայութեամբ ու համոզիչ կերպով, կու գայ առողջ կապ մը հանդիսանալու Աստուծոյ յաւիտեանական խօսքին եւ մեր միջեւ: Կը մօտեցնէ մեզ մեր քրիստոնէութեան, որ այժմ, մերն է, սակայն կամայ ակամայ երբեմն կը հեռանանք անկէ, կը մոռնանք կրօնք ու դաւանանք, սակայն երբ ցաւի մէջ ենք, երբ տկար ենք՝ կը փնտռենք: Այստեղ է նաեւ այս տեսակաւուակներուն դաստիարակիչ դերը, որ Հայթայեան սահուն կերպով կը փոխանցէ մեզի:

Իւրաքանչիւր DVD աւելի քան մէկ ժամ է տեւողութեամբ: Առաջինը կը բովանդակէ «Ով մարդ մի՛ հպարտանար, Տիրոջը յուսա՛»,

«Սաղմոս երգեցէք Տէրոջը», «Պօղոս Առաքեալի խօսքերը», «Մարգարէութեան խօսքերը» եւ «Կը վկայեմ ձեզի»: Իսկ երկրորդ DVD-ին մէջ հաղորդակից կը դառնանք՝ «Յիսուսի կենաց խօսքերուն», «Գիրք Առակաց»ին, «Յովհաննէս Առաքեալի վկայութեան», «Նոր կեանքի մէջ նոր ճամբորդութեան» եւ դարձեալ այլ վկայութեան մը Հայթայեանի կողմէ:

Իսկ ո՞վ է Կարօ Հայթայեան: Բնիկ Չորք-Մարգարացի (Տէօթեօլ), ծնած Ալեքսանտրէթ, ապրած, ընտանիք կազմած Լիբանան, եւ ապա քաղաքացիական պատերազմին սկիզբը հաստատուած Լոս Անճըլըս: Հայ Աւետարանական եւ ՀԲԸՄ-ի շրջանակներէ ներս եղած է գործօն տարր, որ իր ասպարէզին կողքին, միշտ ալ հոգեւոր սնունդի պահանջքով փարած կը մնայ Աստուծոյ խօսքին: Իսկ որպէս ճարտասան ու հմուտ կատարող, անցեալին, ան ձայներիցի վրայ կարգացած ու ասմունքած է Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեանը»՝ «Նարեկ»ը:

Տպաւորիչ գունաւոր կողքով այս ձայնագրութիւնը օգտակար եւ միշտ նոր նուէր մըն է Ամանորեայ եւ Սուրբ Ծննդեան տօներու նախօրէին:

Հետաքրքրուողները կրնան ուղղակի դիմել Կարօ Հայթայեանին, հեռաձայն՝ 818 242-1606, ինչպէս նաեւ հայ գրատուններու եւ հոգեւոր հաստատութիւններու: Հ.Ս.

ԽՕՍՔ ԱՍԱՆՈՐԻ ԱԼԲԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ

Բաժակս Առաջինը բոլոր նրանց Որոնք չկան մեզ հետ այսօր, Եւ երկրորդը վշտիդ անանց Ով մարդկային սիրտ վիրաւոր:	Իրար թիկնած թիւր երդիքներ Որ ձեր սրտում ունէք հօգի Սլացումներ երկինքն ի վեր:
Բաժակս Բոլոր նրանց՝ որոնց հոգին Եղաւ բացուած հացի սեղան Եւ ուշացած զինուորներին Ծխանի ծուխ, տուն հայրական:	Բաժակս Ահա եւ քեզ մայր ալեհեր Որ կրօնքիդ տակ գիշեր ու տիւ, Ձսպել ես միշտ ինչ կսկիծներ Եւ շանթերի տարափ անթիւ:
Բաժակս Եւ ձեզ համար իմ հեռաւոր	Բաժակս Եւ քեզ ով դու իմ սեր, Որ օրերին իմ դժուարին Վառցիդ ինձ յոյսի լոյսեր Եւ ցնծութեան այս Նոր Տարին

ՆՈՐ ՏԱՐԻ ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ


Նոր օր է գալիս, Նոր կեանք մեզ տալիս, Բերք, բարիք բերում, Առողջ կեանք բաշխում...	Ու պարարտ հողը Սեզ բերք մուկում...
Անուշ մանուկներ, Նա ձեզ է փնտռում, Սիրում է սրտանց Յոյսեր ներշնչում...	Ողջոյն, Նոր Տարի, Բեր մեր աշխարհին Ծով խաղաղութիւն, Սէր, եղբայրութիւն...
Չիւն, անձրեւ բերում, Կեանք տալիս հողին,	Մայր Հայաստանին Միշտ ամուր պահիր, Որ եռագոյնը Յաւերժ ծածանի...

ԱՍԱՆՈՐԵԱՆ ԽՈՐՀԵՐ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Արի, քեզ հետ բեր սէր ու հաշտութիւն, Ու հանգիստ քայլի խաղաղ աշխարհում, Տոպրակներով բեր խաղալիք ու սէր Ու ջերմ համբոյրներ որբերի համար...	Արի, քեզ հետ բեր խրատներ բարի, Լցրու նենգ ոգում չարագործների, Կրակ չը վառեն չորս կողմն աշխարհի, Արի, այս դաժան կրակը մարի...
Արի, միշտ արի, դու անգօրի հայր՝ Ու անգին մայրը ամբողջ աշխարհի, Եւ նրանց սիրով խնդրի Աստծուն Գութ ղնի սրտին, կրակ վառողի...	Արի, դու արի, խաղաղ Նոր Տարի, Յէզ բանաստեղծիս իղծը կատարի, Կրկին քեզ հետ բեր խաղալիք ու սէր, Ամբողջ աշխարհի սրտերը վառիր...

ԻՂՉԵՐ ԱՍԱՆՈՐԻ ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Թող նոր կեանքի հետ մարդն ապրի անահ, Թող լեզուի վրայ չուներայ փականք Թող պարանոցին չը կրի շղթայ Թող ապրեն ազատ ազգերը գերուած Թող լինի գարուն	Թող կեանքը լինի առանց սարսափի Թող բոլորն ապրեն ժպտուն ու անլաց Թող որ նոր տարին լինի բարեբեր Մարդն ամենագոր Գոչի բարձրաձայն, - Ողջոյն ամանոր...
--	---



ԱՄՍԻՍ - 2012

ՔԵԱԼԼԱՅ ՆԻԿՈՂՈՍԸ ԵՒ ՄԵՐ ԱՄԱՆՈՐԸ

Մարտնակուած էջ 16-էն

փողոցում կամ այլուր, մի երեւոյթ, որ սկսել էր կասկածելի դառնալ հարեւանների շրջանում:

Մէկ էլ լուր տարածուեց, թէ մեր տնից երեք տուն դէպի հիւսիս բնակուող ուսանող Գեղամը յաճախ է «թակում» Նիկոյի տան դուռը, որն անմիջապէս փողոցին էր նայում:

Արդէն յատակ էր, որ Գեղամը չնայած իր երիտասարդ տարիքին, կապուել էր իրենից բաւական մեծ տարիքի գերմանացի կնոջ հետ: Եւ, հաւանաբար այնքան զօրեղ էր այդ կապը, որ նաջ այլեւս գողուհի չէր մտնում Սարայի բնակարանը, շատ անգամ էլ ցուցադրաբար էր դա անում՝ գրգռելու համար թաղի երիտասարդների հետաքրքրութիւնը:

Մի օր, երեկոյեան, բաւական ուշ ժամին մեր տան դուռն է թակում մեր հերոս Նիկոն:

- Հենրիկ, եղբայրս, օգնէ, խրատ մը տուր, ի՞նչ ընեմ, - արցունքախառն հայեացքով ինձ է դիմում Նիկոն:

- Ի՞նչ կայ Նիկո, ի՞նչ է եղել, - թէեւ կուսում էի թէ ինչի մասին է լինելու խօսքը:

- Բռնեցի՛... հա՛, բռնեցի: Այսօր վարպետիս խնդրեցի, որ ինձի կէսօրէն վերջ ձգէ, որ տուն գամ: Դուրս կամացուկ բացի եւ... եւ՝ ի՞նչ տեսնամ... ես՝ տղամարդ ըլլալով՝ կամչնամ ըսել թէ ինչ պատկերի առջեւ կեցայ: Ես գիտէի, ականջիս հասած էր լուրը: Այսօր արդէն կրնամ ըսել, որ դիտաւորեալ մշտապէս միմախ եկած եմ ձեր տունը, որովհետեւ առաջին օրուրնէ սկսեալ մշտապէս քեզմով կը հետաքրքրուի կիսկա...:

- Ես կը սպասէի այս օրուան: Ճարին պիտի նայես բարեկամս, բաժնուէ Նիկո...:

- Ո՛չ, չեմ կրնար, բախտս, ճակատագիրս անոր ձեռքն է:

- Ի՞նչ ըսել է բախտ, ճակատագիր, ամօթ է Նիկո, տղամարդ եղիր: Դուրս ըրէ, թող երթայ:

- Չեմ կրնար Հենրիկ: Անոր վրայ է յոյսս: Ես, շիտակը ըսեմ, կ'ուզեմ այս երկրէն ելլալ: Սարան Գերմանիոյ հպատակ է եւ դիմում ըրած է, որ Գերմանիա տեղափոխուիմք: Միայն իրեն հետ կրնամ ելլել Հայաստանէն, անկէ վերջ կրնամ յաջողցնել Ամերիկա երթալ:

- Հասկցայ... ասին մէջն ես բարեկամս:

- Ան ալ ինչպէս... այդ երիտասարդը դեռ չոն է, կրնա՞ս երեւակայել: Տղան ամօթէն դուրս կ'ուզէր ելլալ՝ կիրս չձգեց, աւելին. Ան հոս պիտի մնայ, դուն կրնաս դուրս ելլել, եւ այսուհետեւ ան երբ ուզէ՝ կրնայ գալ, հասկցա՞ր պարոն, պոռաւով նետես երեսիս:

- Դժուար պարագայ է Նիկո, ոեւէ խորհուրդ չեմ կրնար տալ: Դիմացիր, տոկայ մինչեւ Հայաստանէն ելլալը: Հիմա մէկ խորհուրդ կրնամ տալ, փոխէ բնակարանդ, որ քեփեզէ չըլլաս: Ամբողջ փողոցը գիտէ այդ տղուն եւ Սարային կապի մասին:

- ... 1982 թուական, Լոս Անձելըս, Հոլիվուտ, հայկական Rons հանրախանութ: Մի քանի Յարութիւնը ինձ է սպասարկում: Յանկարծ ինչ որ մէկը մէջքիս կողմից երկու ուսերս պինդ սեղմած, չի թողնում շրջուել:

- Ո՞վ եմ Հենրիկ, ո՞վ...
- Ախր, թոյլ տուր որ շրջուեմ...

- Չէ, դառնալ չկայ... ձայնէս ճանչցիր, ձայնէս, չէ՞ որ դուն երաժիշտ ես:

- Նիկո՛, Նիկո՛, դո՞ւ ես...

- Այո՛, այո՛ Հենրիկ, Նիկոն եմ...

- Ե՞րբ, ինչպէ՞ս, ո՞նց, ո՞ւր կէ...

Յետագայ գրոցից պարզուեց, որ Նիկոն Գերմանիայում ամուսնալուծուել է իր անբարոյական կնոջից եւ ժամանակի ընթացքում կարողացել գաղթականի կարգավիճակով հաստատուել Միացեալ Նահանգներում:

- Ես գրեթէ տասը տարի է, որ հոս կ'ապրիմ: Լոս Անձելըս հաստատուելէդ ի վեր հետեւած եմ գործունէութեամբ, սակայն, խոստովանիմ, չեմ համարձակած հանդիպիլ քեզի...:

- Ինչո՞ւ Նիկո, ինչո՞ւ չես հանդիպած մեզի:

- Ի՞նչ ըսեմ Հենրիկ, անցեալի սխալներու պատճառով ամչցած եմ հանդիպիլ քեզի, նոյնիսկ երգիպարի խումբիդ համերգին ալ ներկայ եղած եմ: Եւ, քանի որ հիմա հանդիպեցանք, կը խոստանամ յետ այսու հանդիպիլ:

Եւ, իսկապէս էլ Նիկոն մի քանի օր յետոյ երեւաց մեր տան շեմին: Ինչպէս երբեք, այս անգամ մի շքեղ ծաղկեփունջ կար ձեռքին:

- Աս ինչ լա՛ւ, հանգստաւէտ տուն է, մեղք որ Հոլիվուտ մէջ է, չէ՞ք մտածեր տեղափոխուիլ աւելի ապահով շրջան մը, շատ մտերիմ մարդու հոգածութեամբ ասաց նա:

- Ո՛չ Նիկո, մենք շատ կը սիրենք մեր թաղը, դուն ան ըսէ, շուտով կաղանդ է, չե՞ս փափաքիր արդեօք քան տարուան խոստանդ կատարել գէթ կաղանդը չեկած... կատակով ասացի ես:

- Ի՞նչ խոստում, իրենք չհասկանալու տալով պատասխանեց Նիկոն:

- Չե՞ս յիշեր... քեայլան, գովածդ ոչխարի գլուխը... որ կաղանդէն մէկ շաբաթ առաջ պիտի վայելէինք քան տարի առաջ մեր տանը մէջ:

- Հա՛... այո, յիշեցի, բայց հո՛ս, Ամերիկայի մէջ... վայրենի տեղ կը դնեն մեզի: Հոս լաւ, մասնաբուր փաշայ կը ծախեն: Թոյլ տուէք, որ խոստումս կատարեմ փաշայով, պաշմանով՝ այս հիանալի տունին մէջ: Ես հոս մինակ կ'ապրիմ: Նոր կնիկ մը առի հոս, մէկ տարին չլրացած փախալ: Նախկինը, գիտես Հենրիկ, բ...ին մէկն էր:

- Կատակ ըրի Նիկո, հոգ մի ըներ, մենք իսպառ կը դնենք եւ դուն մեր հիւրը կ'ըլլաս, լա՞ւ...

Գրեթէ մէկ տարի Նիկոն եկաւ գնաց մեր տուն, ինչպէս միշտ՝ ընթրիքի ժամերին եւ ամէն անգամ, հրաժեշտ տալիս մի ուտելիք, մի խմիչք անպայման կը վերցնէր իր հետ: Պատահեց նոյնիսկ, որ մէկ գլուխ սոխ, կամ երկու կարտոֆիլ վերցնի իր հետ՝ «կը ներէք, պէտք ունիմ» ասելով:

Մէկ, մէկուկէս տարի յետոյ Նիկոն չբացաւ: Ոչ տունը գիտէինք եւ ոչ էլ աշխատանքի վայրը: Վերջապէս սրանից նրանից իմացանք, որ Նիկոն գնացել է Մոսկուա՝ ինչ որ ուուս կնոջ հետ ամուսնանալու, եւ հաւանաբար այնտեղ էլ մնացել է:

Նիկոն մեր յիշողութեան մէջ մնաց՝ իր «հանճարեղ» ՔԵԱԼԼԱՅՈՒԹՅՈՒՆ, որի ոչ տեսքը տեսանք, ոչ էլ համը վայելեցինք:

ԽԵ, ԾԱ, ԿԵՆ... ՅԵՏՈ՞Յ ԻՆՉ ԿՈՒ ԳԱՐ

Մարտնակուած էջ 25-էն

մագիծով սա մարդը, որ ինք իրեն կը մըթմըթայ. աչքերուն հայեացքը անձանօթ կէտի մը սեւեռած: Քայլ մը ետ երթալով՝ դրան վրայ անունը կը կարդամ:

No 85 - Peniamin Noorigian:

- Տես, քեզի ով բերի, կը ճչայ տիկինը:

Ու դառնալով ինձի՛

- Բարձր խօսէ, բարձր, լաւ չի լսեր: Խօսէ իշտէ:

Տիկինս եւ ես արձանացած ենք եւ կարծէք կը կարկամինք պարզուող տիւուր պատկերին առջեւ. «Այգեկութք» մը տուած սա գրողը, «Մաշած աւել»-ով կամ «Մեռելները կը յաղթեն»-ով մեր ճանչցած Նուրիկեանն է սա ողջ մեռելը, որ անտարբեր՝ բացուած դուռին եւ օտար ներկայութեան՝ ինք իր հետ կը խօսի վերացած:

Քովէս գիս կը մխտէ տիկին Հովիփմէն.

- Բան մը հարցուր:

- Ինչպէ՞ս էր ընկեր Անդրէասեանին այցելութիւնը, պարոն Նուրիկեան, բան մը հարցնելու համար կը նետեմ նախադասութիւն մը.

- Հը՞

- Անդրանիկը եւ Ալեքը քո՞վդ եկեր են քանի մը օր առաջ... յիշեցի՞ր գիրենք: Յիշեցի՞ր «Նոր Գիր»-ին քսան տարիները...

Կարեւոր բանի մը անդրադարձած ըլլալու երեւոյթը առած, դէմքը ինձի ուղղելով,

- Անդրանիկը, հա՛... կը յիշեմ, Անդրանիկը. շատ լաւ մարդ էր. լաւ բարեկամս էր:

- Գլըճեանն ալ՝ Ալեքը, քեզ տեսնելու եկեր է...

Կը գգամ որ դադրեր էր արդէն գիս մտիկ ընելէ: Խարխալած յիշողութիւնը հին կտոր մը յայտնաբերած էր կ'երեւի ու կը փորձէր իր խօսելիքը պատրաստել.

- Լսէ՛, լսէ՛, ես լա՛ւ գիտէի ասիկա, բայց միշտ բան մը կայ որ կը մոռնամ, դանդաղ կը յիշուի կը բացատրէ ըսելիքը.

- Այք, Բեն, Գիմ, Դա, Ենչ, Զա, Է, Ըթ, Թօ, Ժէ, Ինի, Լիւն, Խէ, Ծա, Կեն... Խեղդուող լուրթիւն մը: Ապարդիւն փնտրուող մը:

- Խէ, Ծա, Կեն... յետո՛յ, յետո՞ց ինչ կու գար...

Աչքերը՝ միշտ անձանօթ կէտի մը յարած է...

Երկուքս՝ շշմած, գինք կը դիտենք: Կը վախնամ միջամտելէ: Նուրիկեանի՞ն յիշեցնեմ թէ ի՞նչ կու գար... Խէ, Ծա, Կենէն ետք...: Այս պահուս իր գերագոյն տազնապն ու մտահոգութիւնն էր գիտնալ թէ ինչ կու գար... Կենէն ետք:

ԿԱՂԱՆԴ ՊԱՊԸ ԻՆՉ Ե ԲԵՐԵԼ ՄԵՉ ՅԱՍԱՐ

Մարտնակուած էջ 6-էն

քոյ, իշխանութիւնները լարուածութիւնը թուրացնելու համար սկսեցին որոշ չափով լսել հիւժուած եւ զայրացած մարդկանց բողոքը: Այսպիսով փորձ եղաւ որոշ բարեփոխումների իրականացմանը: Չնայած այն բանին որ ժամանակը ցոյց տուեց որ այս ամէնը նախընտրական շրջանի իմիտացիոն բնույթ է կրում եւ կոչուած են Ռեժիմի վերարտադրութեանը: Խօսքի ու խղճի ազատութիւնը

Իսկ... կողքիս՝ Արարատ Տուներն տիկինը, արդեօք քանի՞ անգամ ակնառես եղած էր այս ողբերգութեան, եւ որ իմաստէ պարպուած աչքերով ու ականջով կը դիտէր ու կը լսէր յիշողութեան էն պարպուած գրողին պայքարը՝ ինք իր հետ:

- Ես գիտէի՛, ասիկա, հաւատացէ՛ք գիտէի: Օրիորդ Վարդուհին ինձի տասը խաչ կու տար այբբենագիմիս համար, անորոշին նայող աչքերը մեզի դարձնելով:

- Այք, Բեն, Գիմ...
... ..

Խէ, Ծա, Կեն... յետո՞ց:

Օրիորդ Վարդուհին, ապահովաբար, իննսուն տարի առաջուայ ծննդալալը Հիւսէյնիկի մանկապարտէզին սիրուն օրիորդն էր, որ ուշիմ Բենիկին տասը խաչ տալով կ'առաջնորդէր գինք որ լեզուն սիրէ, անով մեծնայ, անով հարուստ վաստակ մը մեզի աւանդէ: Ինչ գիտնար օրիորդ Վարդուհին, ինչ գիտնար խեղճացած Նուրիկեանը՝ ամերիկահայ գրականութեան այս համեստ հսկան, որ ալգայմը կամ տիմենշիա հիւանդութիւնները՝ աններող, անգիշող են. ոչ կը խնայեն վաւերական գրողին, ոչ ալ՝ համեստ ընթերցողին: Անոնք կ'աւելն կը տանին յիշողութիւնը մարդու ուղեղէն՝ ցաւցնող պարապութիւն մը ձգելով ետին:

- Խէ, Ծա, Կեն... ինչ կու գար յետոյ...

Ամիս մը ետք դարձեալ Արարատ Տուն կ'այցելեմ: Գրասենեակին տիկինը «Նիւ Եորք Թայմզ»-ի Փետրուար 19, 1988ի համարին մահագրութեան բաժինէն փրցուած կտորի մը պատճենահանուած էջը կ'երկարէ.

Peniamin Noorigian, Translator, 93 Peniamin Noorigian, an Armenian translator and writer, died Feb. 6, 1988 after a long illness in Hollywood. He was 93 years old.

Mr. Noorigian who was born in Armenia, came to the United States in 1913. He translated Mark Twain's tale 'The Prince and the Pauper' into Armenian and, for 18 years, edited an Armenian literary journal in the New York area... In addition to his translations, he wrote short stories based on Armenian village life that were published in several anthologies.

Բնագրաբար կը հեռաձայնեմ Ուոթըրթաուն՝ բարեկամի մը:

- Այո՛, լսեցինք որ մահացեր է Փետրուարին սկիզբը. բայց թէ ո՛ւր թաղեր են եւ ո՛ր եկեղեցիէն՝ չենք գիտեր: Մա՛րդ չլսեց...:

Ծանօթ. Շուտով հրատարակելի «Յիշատակելի Դիմատուներ» գիրքին մէջ պիտի երեւի այս գրութիւնը:

հանգրուանում է մի նոր փուլում, տարածաշրջանային քաղաքական համատեքստում, Թուրքիայի եւ ատրպէյճանի կարծր եւ ռազմատենչ դուսելորումների պատճառով, Հայաստանի ստրատեգիական նշանակութիւնը բարձրացաւ:

Թող մեր լաւատեսական սպասելիքերը այս տարի արդարանան, եւ բարի կամեցող ԿԱՂԱՆԴ ՊԱՊԸ այս տարի մի լաւ նուէր բերի Հայ ժողովուրդին, օրինակ մի Մարդավարի Ընտրութիւն կայացնելու հնարաւորութիւն:

ՄԱՍԻՍ - 2012

ՄԱՅԱԶԴ

ՊԱՐԳԵՒ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Ծնեալ՝ Մայիս 23, 1916ին, Այնթապ, Թուրքիա)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ՊԱՐԳԵՒ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Դեկտեմբեր 30, 2011ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունուար 7, 2012, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Old North Church մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Զաւակները՝ Անի եւ Խաչիկ Նահապետեան
Յարութ եւ Սեդա Մարգարեան
Աւօ եւ Արմիկ Մարգարեան

Թոռները՝

Նայիրի Նահապետեան
Նարեկ եւ Մարօ Նահապետեան եւ զաւակունք (Լիբանան)
Նաթել եւ Ճոնի Գայմագամեան եւ զաւակունք (Լիբանան)
Նանտր Մարգարեան
Լարա Մարգարեան
Մարգ Մարգարեան

եւ համայն Մարգարեան, Նահապետեան, Գոճապապեան, Գարայեան, Գապագեան, Աբգարեան, Պարսումեան, Կարապետեան, Պարտաքճեան, Թրինքեան, Պոմայադր, Վալէճեան, Ղարիպեան, Վարժապետեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Ararat Home of Los Angeles-ի կամ Այնթապի Հայրենակցական Միութեան:

ՑԱԿԱՑԱԿԱՆ

ՊԱՐԳԵՒ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ մահուն տխուր առիթով «Մասիս»-ի համագործակցութեամբ եւ անձնակազմը խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկ. Աւօ եւ Արմիկ Մարգարեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՄԻ ԱԶԳԻ ՈՂԶ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 33-էն

գոհեր, դուք ննջեցէք խաղաղութեամբ, գալու է այդ օրը...

10 օրուայ մեր ճանապարհորդութեան ընթացքում, բազում հետաքրքիր գրոյցներ եւ դէպքեր են պատահել: Բայց ամէնուրեք, որտեղ որ իմանում էին մեր հայ լինելու մասին, անմիջապէս վրայ էին բերում «ինչ եղել, եղել է, հիմա մենք եղբայրներ ենք»: Արդեօք դա մեղքերի ուշացած գղջո՞ւմ է, թէ՞ կեղծ սիրալիութեան մի ձեւ:

Վանա լճի չնաշխարհիկ տեսարանով հիանալուց յետոյ ես հասկացայ, թէ ինչո՞ւ մեր պապերն «էրգիր» բառը շուրթերին հեռացան այս աշխարհից, թէ ինչու կորստեան ցաւն ու մորմոքը նաեւ այսօր պատել է մեզ:

Ախթամար կղզում թուրք ոստիկանը թոյլ չէր տալիս ներ մտնել եկեղեցի, պատճառաբանելով որ վանի երկրաշարժի հետեւանքով քանդուած տեղեր կան ներսում եւ վտանգաւոր է: Բայց մենք համոզեցինք նրան եւ ներս մտնելով իրենց աչքի առջեւ մեր աղօթքն արեցինք եւ յուզուած աչքերով թողեցինք Ախթամարը:

Որքան հեռանում էին, այն հետզհետէ փոքրանում էր, մենակութեան, լքուածութեան մորմոքը սքողել չէր կարողանում: Կարծես Գիթորին թողել էինք բեզազ Արտեմի մօտ, նայում էինք, նայում ու...

Ամէնից հասգողուն Անիի աւերակներն էին, մի ողջ պատմութիւն էր յառնել աչքիս առջեւ: Մի ամբողջ քաղաք անմարդաբնակ, կիսաքանդուած, ամայի եւ ես բացականչում էի, Դէ եկ վարդապետ, մի խելագարուի: Իսկ երբ մայր

եկեղեցուց դիտեցի Ախուրեան գետը, սարսուռն ու վախն էր պատել ինձ... Ախր ընդամէնը մի փոքր տարածութիւն այն կողմ, հայ բանուորն էր աշխատում...

Ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում տեսնում էի հիւսաքանչ բնապատկերներ եւ ասում. Ախ, հայ նկարիչը լինէր ու այս տեսարանը անմահացնէր, հայ ճարտարապետների շինելու եւ վերանորոգելու ընդունակ հայ բազուկները կառուցէին ճարտարապետական կոթողներ: Քարին շունչ ու ոգի տուող հայ վարպետների ձեռքում քարը դառնար խաչքար, խոյակ, ողկոյզ, հասկ ու ծաղիկ:

Վերջին մոմս վառեցի Ախալքալաքի եկեղեցում եւ վերադարձանք Երեւան, որտեղից ընդամէնը 3 ժամ յետոյ եղբայրներս իրենց ընտանիքներով եւ մայրս ինձ ուղեկցեցին օդանավակայան վերադառնալու համար Լոս Անձելէս:

Ամբողջ ճանապարհին չուզուած էի, բայց նաեւ խորհում էի, որ պաշարի միակ ձեւը ապրելն ու արարելն է, շարունակել օտար արեւմուտի մեծացող հայ երեխաներին, պատանիներին, աղջիկներին հայերէն սովորեցնել:

Այո՛ դարեր շարունակ մեզնից խլել են մեր ազատութիւնը, մեր հոգու գանձերը, մեր մտքի թռիչքը, սակայն չեն կարողացել խլել մեր անկողոպտելի գանձերը՝ մեր ոսկեղնիկ լեզուն ու հաւատքը, մեր ըմբոստ ոգին, խաղաղ ու ստեղծագործ կեանքով ապրելու մեր ձգտումն ու երազանքը:

Դեկտեմբերի 9ին Լարք-ում կազմակերպուած էր համերգ «Հայերէն են Գալու դարեր» խորագրով, որին ի հպարտութիւն բոլոր

Շարունակուած էջ 2-էն

թեղով առաջնորդեց եւ ուղեցոյց եղաւ Կիլիկիայի գինուորներին սերմանեց նրանց մէջ Քրիստոսի սէրն ու հայրենասիրութիւնը, նա կեանքը նուիրեց մատաղ քանի քանի սերունդներին, չունեցաւ զաւակներ, բայց ունեցաւ սաներ, ինչպէս Կիլիկիայի սէգ սարերն են: Նա բոլոր հետ եղաւ մտերիմ ու սրտաբաց ու բոլորին սիրելի, ուսուցիչն է ամէնքի մէջ թողնում անուն ու յիշուած անվերջ նրա ճրագը հանգաւ եւ անմար կրակ թողեց բոլորի սրտերում: Յարգելի սաներ իմ խօսքերը շուրջաւ չեմ լինի եթէ ասեմ, որ Գէորգ Աթոքեանը Կիլիկիան ճեմարանի լեզենդը դարձաւ: Նրա կեանքի պատմութիւնը նման էր Խանըմ Մայրիկին, որն իր հայրիկի մօրաքոյրն էր եղել է խիզախ ազատամարտիկ օր. Խանըմը ընդամէնը 18 տարեկան էր, երբ բարձրանում էր կախաղան, այդ պահին ներում չնորհուեց, այնուհետեւ բանտարկուեց եւ Խանըմը բանտում խեղդեց թուրք պահակին եւ փախաւ նորից միացաւ ֆետայիներին յետագայում որբերին հաւաքեց իր շուրջը, այդ իսկ պատճառով եղեսիացիները իրեն ճանաչում էին Խանըմ մայրիկ կոչումով:

Հարկ եմ համարում Գէորգ Աթոքեանի կենսագրութիւնից տեղեկացնել իր պատանեկան տարիներից: Նրա նախնիները ապրել են պատմական Հայաստանում, Կիլիկիայի Եղեսիա քաղաքում, հայրը Յովհաննէս Աթոքեանը իր ընտանիքով եկել էին Հալէպ, իսկ մայրը դարձեալ Եղեսիայից է եկել 7 տարեկան հասակում որբացած իր ընտանիքից միակն էր մնացել եւ մեծացել մօրեղբօր ինամքի ներքոյ: Գէորգը երբ պատանի էր իր դպրոցի պարտականութիւնները կատարելուց յետոյ պատուհանի մօտ նստած երգում էր հայրենասիրական երգերը մեծերն ասում էին «Գէորգը Հնչակեան երգերի տոպրակը պարպեց» նախնական կրթութիւնը ստացաւ Նոր Գիւղի Կիլիկիան վարժարանում, այնուհետեւ Ամերիկեան Գոլէճը աւարտեց ոսկէ մետալով եւ 15 օրուայ ընթացքում արաբերէն լեզուով պաթալորիայի քննութիւնը յանձնեց եւ յաջողուեց

րիս ներկայ էր Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանը, ներկայ էին նաեւ այլ մեծագոյ իւրեր, որոնց թւում նաեւ «Մասիս» թերթի գլխավոր խմբագիր Տօքթ. Ա. Գազանճեանը եւ «Նոր Մերունդ»-ի ղեկավար անդամներէից Պրն. Գաբրիէլ Մոլոյեանը:

Ուսանողները թուով 16 հոգի իրենց իսկ շուրթերով հաստատեցին, որ հայոց լեզուն առաւել կանչն է եղել դիւցազնական մեր Հայկ նախահօր այն մանկան առաջին թոթովանքն է եղել եւ օրօրոցի երգը, դրա համար էլ մեր լեզուն ճկուն է ու առնական, պայծառ, որպէս մշտաբոլոր փարոս, ինչպէս ասել է Նիլիէ Զարենցը:

Համերգից յետոյ ես ունեցայ հոգեկան վայելք եւ անդորրութիւն, որ կարողացել եմ գոնէ այդ 16 ուսանողի մէջ արթնացնել իրենց ինքնութիւնը, սիրելի դարձնել լեզուն եւ նոյնիսկ զգալ նրանց անհամբերութիւնը մինչեւ յաջորդելոյթը նոր թեմայով, որ պիտի կայանայ առաջնորդարանում

եւ մեկնեց Լոնտոն անգլերէն լեզուի եւ գրականութեան մասնագիտութիւն ստանալու նպատակով (յիշում եմ ես էլ էի գնացել իրեն ճամբու դնելու երբ օդանաւը արդէն թռնում էր ես դեռ ներքեւից ձեռքովս յաջողութիւն էի ասում) վերադարձաւ փայլուն յաջողութիւններով եւ 35 տարիներ դասաւանդեց Կիլիկիան ճեմարանում եւ դրա հետ միասին ազգային եւ հասարակական գործունէութիւն է ունեցել անշահախնդիր ծառայութեամբ նուիրուել է երեք միութիւններին Ն.Ս. Միութիւն, Ուրֆայի Վերածնունդ Միութիւն եւ Ազգային Մշակութային Միութիւն: Նա ներել ու սիրել գիտէր, իրար հակասող կուսակցութիւնների միջեւ միաբանութեան աշխատանք էր տանում:

Այս տողերը նուիրում եմ քեռիիս յիշատակին:

Գեորգ անունդ սուրբ է, եկեղեցիները մեր վկայ են Վառ ծիածանն էիր հայոց ազգի Որ կերտեցիր խաղաղութիւնը համայնքի Ռոպէները մեր բոլորի կարօտած երգն ենք երգում

Գիշեր ու գօր մորմոքում:

Աստոյ նուիրեալ պարգէ էիր Թող Քո շիրիմին արեւի շողը լինի անպակաս Որբացան սաներդ մոլորուած, Քրիստոսի ճանապարհով Արանց առաջնորդեցիր Եօթերորդ երկնքում պիտի փառաւորուիս, Անունդ ոսկէ տառերով պիտի գրուի Նոր սերունդը քեզ միշտ պիտի յիշի:

Յաւերժ փառք մեր ուսուցիչներին, ովքեր չկան նրանք մեր սրտերում են, ինչքան մենք կը յիշենք նրանց եւ նրանք այդքան կ'ապրեն մեր մէջ, խունկ ու ծաղիկ նրանց շիրիմներին: Նրանց թողած պատգամը մենք պարտաւոր ենք փոխանցել մեր յաջորդ սերունդներին, քանզի մեր երազանքն է Կիլիկեան ճեմարանի 100-ամեակը սօսել նոր ճեմարան հիմնելով մեր պատմական Կիլիկիայում եւ դա կը լինի մեր նահատակների հոգու տենչը...

Սրբազան հօր մտայնացմամբ:

Եւ այսօր 2012 թ. չեմին պատգամում եմ բոլոր լարքականներին, հայ մանուկն երին, պատանիներին ու երիտասարդներին, որպէսզի պարեն հայերէն, շնչեն հայերէն, մտածեն հայերէն:

Սիրելիներս, քանի դեռ հայ լեզուն կայ, հայը կ'ապրի: Կ'ապրի եւ կ'ապացուցի, որ ոչ մի Բելի, Մարայ Մելիքի, Երիտթուրքի չի յաջողուի մեզ կործանել, քանզի մենք գիտենք սրի դէմ գրով պայքարել, դժուարութիւնների դէմ յամառութեամբ:

Իմ հայրենիք, իմ ազգ Գալիքին ընդառաջ գնանք, գնանք աննկուն կամքով, հարուստ գիտելիքներով, բայց ճակատով, յոյսերս միայն մեր վրայ դնելով, որովհետեւ մենք ուժեղ ենք, երբ միասին ենք:


Եւ ինչպէս Խաչատուր Աբովեանն է ասում. «Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնեմ, ձեր արեւին ղուրբան: Տարբ լեզու սովորեցէ՛ք, ձեր լեզուն, ձեր հաւատը զայլմը բռնեցէ՛ք»:

VISIT US ONLINE AT MISSIONWINEANDSPIRITS.COM

MISSION WINE & SPIRITS

Happy Holidays! Please Drink Responsibly!

Հնրհապոր Լոր Տարի եւ Սուրբ Ծնունդ
Հայկական եւ Եվրոպական Խմիչքներ



facebook.com/missionliquor

twitter.com/missionliquor

<p>10⁹⁹ PATRON SILVER TEQUILA 375 ML LIMIT SIX (6)</p>	<p>15⁹⁹ ARARAT ANI 6 YR BRANDY 750 ML LIMIT SIX (6)</p>	<p>19⁹⁹ CHOPIN VODKA 750 ML LIMIT SIX (6)</p>	<p>19⁹⁹ BELUGA VODKA 750 ML LIMIT SIX (6)</p>
--	---	---	---

<p>24⁹⁹ VARDAN MAMIKONYAN 8 YR BRANDY 750 ML</p>	<p>17⁹⁹ IMPERIAL COLLECTION VODKA 750 ML</p>	<p>6⁹⁹ MOSCOW MOON NIGHTS VODKA 750 ML</p>	<p>14⁹⁹ OPERA XO BRANDY 750 ML</p>	<p>30⁹⁹ ARMENAC 18 YR BRANDY 750 ML</p>
<p>79⁹⁹ ARARAT NAIRI 20 YR BRANDY 750 ML</p>	<p>5⁴⁹ KOTAYK LAGER 11 OZ 6 PK</p>	<p>19⁹⁹ NOY 7 YR BRANDY 750 ML</p>	<p>18⁹⁹ TSAR ALEXANDER I VSOP COGNAC 750 ML</p>	<p>75⁹⁹ A.E. DOR XO COGNAC 750 ML</p>
<p>27⁹⁹ NOY 10 YR BRANDY 750 ML</p>	<p>15⁹⁹ IJEVAN MULBERRY BRANDY 750 ML</p>	<p>12⁹⁹ ARARAT 3 YR BRANDY 750 ML</p>	<p>4⁷⁹ VEDI VERNASHEN SEMI-SWEET WINE 750 ML</p>	<p>7⁹⁹ ARMENIA DRY OR SEMI-SWEET WINE 750 ML</p>
<p>29⁹⁹ MESROB MASHTOTS 25 YR BRANDY 750 ML GIFT SET</p>	<p>17⁹⁹ SAYAT NOVA 20 YR BRANDY 750 ML GIFT SET</p>	<p>19⁹⁹ TSAR ALEXANDER I VODKA 750 ML GIFT SET</p>	<p>24⁹⁹ ARMENIA 25 YR BRANDY 750 ML GIFT SET</p>	<p>8⁹⁹ VIVAT ARMENIA 2PK RED WINE SET 750 ML</p>

<p>Washington Blvd. 210 FWY</p>	<p>Glennsaks Blvd. 134 FWY</p>	<p>Burbank Blvd. 101 FWY</p>	<p>PASADENA GLENDALE SHERMAN OAKS</p>	<p>1785 E. WASHINGTON BLVD. 825 W. GLENOAKS BLVD. 13654 BURBANK BLVD.</p>	<p>626-794-7026 818-242-0683 818-785-6529</p>
-------------------------------------	------------------------------------	----------------------------------	--	---	---

STORE HOURS: MON - SAT, 9AM-8PM. (GLENDALE STORE OPEN SUNDAY 10AM-4PM)

SOUTHERN CALIFORNIA'S PREMIER WINE & SPIRITS SUPERSTORE!
AD PRICES MAY REMAIN IN EFFECT LONGER THAN THE TIME PERIOD INDICATED. WE RESERVE THE RIGHT TO LIMIT QUANTITIES. SALES TAX EXCLUDED. PRICES SUBJECT TO CHANGE WITHOUT NOTICE. AD PRICES GOOD FROM JANUARY 4th - JANUARY 15th, 2012.